Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՍԻՐՈՅ ՋԱՐԱԿՔ

ՏԻՐԱՆ ԵՒ ԱՐՓԵՆԻԿ

Կաղզուանի անցեալից առնուած մի
իրական պատկեր.

„Ախ, գոռք չար մարդիկ, ինչո՞ւ անում էք
„Անզգայ սրտով, չարանենգ լեզուով. . .
„Քանի՞սներ զոհեցիք, դեռ քանի՞ զոհեք. . .
„Դէթ մի վայրկեան խորհե՛ք. . . մարդկային
խղճով։

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ։
1891

ՍԵՐԵՖ
803

01 JAN 2009
ՍԵՐԵՐ
803
2011

ԱՐԾԱՐՈՒՆԻ

ՍԻՐՈՅ ԶԱՐԱԿՔ

ՏԻՐԱՆ ԵՒ ԱՐՓԵՆԻԿ

Կաղզուանի անցեալից առնուած մի իրական պատկեր.

«Ախ, դուք չար մարդիկ, ինչե՞ր անում էք
Անզգայ սրտով, չարանենգ լեզուով...
«Քանիսներ զոհեցիք, դեռ քանի՞ զոհէք...
«Գէթ մի վայրկեան խորհէք... մարդկային
խղճով:

Պոլսոյ Հայոց Ազգային Գրադարան
ՍԵՐԵՐԱԿԵԱՆ
Ա. ... Թ. ...

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ.
1891

01 JAN 2005

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Сентября 1891 г.

803-2011
h.f 797
(4434/41)

Типографія К. С. Саноянца, Александрополь,
Бебутовская ул., соб. д.

ԸՂՁԵԼԻ ՍԻՐՈՎ

ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ

Իմ այս աշխատասիրութեանս առաջին պտուղը

ՎԱՂԱԹԱՌԱՄ ՆԱԶԱՐԷԹ ԵՂԲՕՐՍ

ԲԱՂՅՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

որպէս անխորտակելի

ԱՐՁԱՆ.

Բնաբան

1881 թուի, մեծ դասին, մի երեկոյ կանչուած էի մեր դրացի Մ. . . . ենց «օդէն» «Այսմաւորք» կարդալու։ Երբ մի ղբւխ կարդացի, ընդհատեց պետը (օդաբաշին), որն 90—100 տարեկան մի բանիմաստ ծերունի էր, և ասաց ինձ.—

Բաւականէ զաւակս, Աստուած էլ աւելի շնորհք տայ։

Յետոյ դառնալով ներկայ գտնուող բազմութեանը՝ աւելացրեց։—

Այժմ լսէք, ես ձեզի մի լաւ, բայց տխրալի «հեքեաթ» ասեմ, որ լսել եմ իմ ողորմած հոգի պապից։ Պապը ասում էր. «Ես այս պատմութիւնը լսել եմ Խ. քահանայից, նա կարդում էր մի ձեռագիր տետրակի մէջ»։ Բացի այդ, ձեզ ապացոյց կոտրած—կարմունջի (այգիների թաղերից մէկի անունն է) այգիներից դուրս գալով կոփածոյ գերեզմանաքարերը, որտեղից իմ պատմութիւնը կախում ունի սկզբից մինչև վերջը։—

Բոլոր ներկայ եղողներս ուշերս լարեցինք և անհամբեր սպասում էինք հանձարաւոր ծերունու սկսելուն։ Ծերունին մեծ եռանդով և անսայթաք պատմեց «Տիրանի ու Արփենիկի» պատմութիւնը մի քանի սաճկաբարբառ երգերով։ Նորա պատմութիւնը ինձ կատարեալ ապշեց, և այն օրից

տպագրուաւ սրտիս խորքումը։ Ես շատ ջանացի ծերունու յիշած տետրակը ձեռք բերելու համար. . . վերջապէս տեղեկացայ՝ որ Մկրտիչ Բոնդոյեանը Խ. քահանայի տոհմերից է, դիմեցի նորան և խնդրեցի, որ թոյլ տայ իրանց գրարկղը սնտղեմ։ Մինչդեռ սրտատրոփ փնտռտում էի գրքերի մէջ իմ ցանկացածը, Մկրտիչն ասաց.

—Մենք շատ գրքեր ունէինք, մի մասը էս ու էն տարան կարդալու, էլ յետ չ՚բերին, մի մասն էլ ես անցեալ տարի թաղեցի այդու մէջ, որովհետև կաղմահան էին եղել և թէ ձեռացագիր էին՝ ոչ ոք չէր կարողանում կարդալ։

Մկրտիչի հետ գնացինք այգին. նա փորեց որթի տակը և հանեց բաղմաթիւ մագաղաթի թերթեր, որոնց մէջ ես գտայ մի քանի կիսաեղծ թերթեր, և որոնցից մի քանի բանով հաղիւ օգտուեցայ։

Մ. Ղ.

Ներածություն

Մեծայարգոյ ընթերցող, թէև ես մի անուս երիտասարդ եմ, սակայն այդ բանը խիստ ծանրացել էր սրտիս վերայ և մշտական տանջում էր ինձ։ Այդ մտատանջութիւնից ազատուելու համար մտադիր եղայ ըլյս հանելու, մինչ դեռ իմ գլխի բանը չէր։ Մի օր նստած Երասխի բարձրավանդակի եզերքին, դիտում էի նորա խաղաղահոս ալիքներին, որ անընդհատ ողբում էր իր հին հին ցաւերը, որից ես եղերացած՝ սկսեցի ձայնակցել նորան։ Իմ ձայնս խառնուելով նորա յաւերժական երգի և հողմերի հոսանքի հետ քշվում էին հեռու։ Բաղփուն միտքս թողեց անհուն ծաւալը և անփոփուաւ իմ հանդէպ, Երասխի եզերքում փռուած արտի անցեալի վերայ։ Այն արտը յիշողութեանս մէջ վերածնեցուց մի ցաւալի պատմութիւն. . . Հէնց նոյն րոպէին, նոյն վառ ազդեցութեան տակ ձեռք առայ մատիտս և սկսեցի գրել «Տիրոնի և Արփէնիկի» պատմութիւնը 1888 թ. սեպտեմբեր ամսոյ 12-ին։ Եօթ տարուայ պատմութիւնը յիշողութեանս մէջ թարմանում էր և ընդարձակվում։ Առաւօտեան 8 ժամին սկսեցի, երեկոյեան $5^1/_2$-ին աւարտեցի նախակաղմութիւնը։ Օհ, սիրելի ընթերցող, որքան ինձ թեթև զգացի վերջացնելուց զկնի. . . ինչպէս մի քրտնալող մշակ, որ հանգիստ է առնում զով ստուերի տակ

իր պարտքը լեռվին կատարած։ Ցկար մտքիս անխոնջ ջանաց սաղմ պտուղը տալով ազգիս, միանգամայն ազատվում եմ ծանր բեռից, և ընդհանուր ընթերցողաց դէմ խոնարհելով՝ ներողութիւն եմ խնդրում անթիւ թերութեանցը և անճաշակ շարադրութեանս համար։ Նատ մի՝ զարմանար, յարգելի ընթերցող, որ զանազան թերութիւններովս խիզախել եմ գրականութեան վսեմ ասպարիզին մերձենալ. . . Դա էլ մի բնական ձգտում է, որն երբէք չէ սանձվում ճնշելով։

Մեսրովբ Ղազարեանց։

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ.

Ա.

Մի օր սիրոյ հողմերից կոծուած մի երգիչ (աշուգ) անցնում էր Ճանապարհի եղերքին, տեսաւ երկու արտասուող ուռիներ (սալուիաղաճի) և մի խնձորենի, որոնք սիգաշունչ հողմերից օրօրուելով՝ հովանաւորում էին մի շքեղ գերեզման։ Օրը խիստ շոգ էր։ Նա մօտեցաւ գերեզմանին, նստաւ կանաչազարդ գետնի վերայ, սաղարթախիտ ստուերի տակ՝ իր քրտնած և տառապեալ անձին հանգիստ տալու։ Նա ինքն էլ սիրուց բեկուած՝ թափառում էր երկրէ երկիր առանց հանգիստ առնելու մի տեղ։ Նայեց շերիմի փառատեսութեան, նայեց ծառերի տխուր շարժումին, լեցուաւ եղերանքով, և իսկոյն գուշակեց, որ այն գերեզմանաց մէջ սիրոյ զոհաց ոսկրներ են հանգստում. . . Խորին հառաչմամբ պատեանից (դլէֆ) հանեց քնարը (սազ) լարեց և սկսեց լալագին ձայնով երգել հետևեալ երգը.

«Անգութ բաղդս դառաւ ինձի ախոյեան՝
Գցեց սիրոյ վառուած հնոցի մէջը.
Արդ՝ զատուած սիրուհէս՝ պնտռումեմ նրան՝

Ընկած թափառական աշխարհիս մէջը,
Գիտեմ, ինձ պէս սիրահարի ոսկերք կան
Հանգիստ առած, շերիմ, քո ծոցիդ մէջը։

Սէրը սուր չէ, ջուր չէ՝ և ոչ էլ գնդակ,
Իսկոյն մահացնէ ինչպէս սուր սրաք.
Անշեջելի հուր է վառում շարունակ,
Այրում է, խանձում է, շինում է ճարակ.
Այդ սիրոյ կրակից այրուած զոյգ դիակ,
Գիտեմ հանգստում են, շերիմ, քո մէջը։

Ո՛չ ծնողաց զատում, ոչ եղբայրական,
Եւ ոչ բարեկամաց, ոչ ընկերական
Զը կարացին թափել կաթ արտասուական.
Ոակայն սէրը թողեց հեղեղի նման. . .
Գիտեմ, շերիմ, նոյնպէս փակուած աչեր կան,
Սիրոյ հեղեղներից խոնջած քո մէջը։

Հաղար երանի քեզ, անհատ հանդուցեալ,
Որ սիրոյ ճանկերից դու շուտ ազատուար.
Նա քեզ համար. . . դուն էլ նրան զոհուեցար. . .
Հանգիստ ոսկորներիդ, կ՝ երգեմ անդադար.
Ես տակաւին յոյս չեմ կորել խսպառ,
Գնում եմ պտրելու աշխարհիս մէջը։

Երգիչը լռեց։ Քնարը պատեանի մէջ դրեց և տխուր ու տրտում ճանապարհ ընկաւ ու գնաց. . .

ՍԻՐՈՅ ՆԱԽԿԻՆ ԶԳԱՅՄՈՒՆԸԸ.

Ա.

Գարուն էր. մայիսեան գեղեցիկ օրերից։ Նոր-նոր արեգակը իր զուարճալի ճառագայթները տարածել էր Արշալուսնեաց գաւառի Կ. գիւղի պարտիզաց վեթխարի ծառոց գագաթներին միայն։ Երասխի բաձրավանդակ եզերքի վերայ մի շարք պարտիզաց կարգում աչք էր գրաւում իր շքեղ տեսքով Շահէնենց Գրիգորի պարտէզը։ Արեգակը դեռ չէր ժամանել այնտեղ, և ուր սոխակաց երգոց դայլայլիկներից թընդում էին շրջակայ վայրերը և մարդկանց քնաթաթաղ սրտերը լցնում էին ոմանց բերկրանքով, ոմանց թախիծով։ Այն սիրալի թռչունները վարդենեաց շուրջը պարփակած՝ սպասում էին փթթեալ կոկոնների բացուելուն։ Վարդենիները գովելի ճաշակով շարուած էին աւազանի *) շուրջը։ Պարտէզի պտղատու ծառերը մանր աղխներով (ցոկոլակ) շուրջուած՝ խոնարհել էին ցած և ամեն անցորդի երեսին ցանում էին վաղորդեան ցօղը տերևախիտ սաղարթներով։ Իսկ յորդացեալ մայր Երասխը՝ ծփան ալիքներով ձայնակցում էր համայն խօսնակաց նուագումներին, և այն ձայները միախառնուելով՝ թափանցնում էին անզգայ սրտերն անգամ, բորբոքեցնելով նրանց մէջ վառ սէր. . . Մի խօսքով Շահէնենց պարտէզը իւր նուազ շնչումով անգամ թարմացնում էր ներկայ եղողի զառամեալ կեանքը։ Սակայն ոմ կայ պար-

*) Հաւուզ—որը մի փոքրուածք է, չորս կողմը պատած և վերան ծածկուած. իսկ մի կողմից թողած է մի դռնակ, որ-տեղից ստանում են սառ ջուր ամրան շոգերին անգամ։ Մինչև օրս էլ Կաղզուանում ամեն այգու մէջ կայ մի մի այդպէս աւազան։

տիզում բիւրաւոր զուարճալիքները վայելող. . . միայն Շահէնենց Գրիգորի 12 տարեկան Արփենիկ անունով աղջիկը, որը տակաւին քնած էր հնձանի վերնայարկում (օրթմայ) իրենց դրացի Ոսկինենց Սահակի 15 տարեկան Տիրան անունով տղի հետ: Նոքա ցերեկը պահպանում էին պարտէզները, իսկ գիշերները միասին քնում էին յիշեալ վերնայարկում: Ցաւերժափայլ արեգակը հորիզոնից դուրս գալով՝ ճառագայթները ծառերի միջից կաթեցուց վարդենիների ժամահաս կոկոնների վերայ, որոնք իսկոյն բաց արին իրանց բաղմավառ թերթերը: Օ՜հ, այն պահուն ևս առաւել սոխակները ելևէջներով զարդարեցին իրանց երգերը, որովհետև սիրուհի վարդենին իր սիրահար սոխակին ընդունեց սաղարթների վերայ. . .: Սոխակաց աղմկալի հանդէսից զարթնեց Տիրանը, նկատեց որ սովորականից յետացել է, բարկացած իր անզգուշութեան համար, առանց հագնուելու սանդուխից իջաւ պարտէզ, նայեց երկու պարտէզին էլ, և տեսաւ ոչ ոք վնասող չ՝ կայ, շտապով մի քանի ցօղալի վարդեր քաղեց ու վերադարձաւ միամիտ հագնուելու: Իսկ գեղեցիկ Արփենիկը դեռ քնած էր. սակայն նրա քնքոյշ դէմքը խարին մրափի մէջ ստէպ-ստէպ այլայլվում էր, երբեմն էլ իսպառ մարելով դէմքի մեղմ ժպիտը, խաղում էին տխրութեան ստուերներ: Տիրանը երկար, անթարթ աչքերով նայում էր Արփենիկին և անհուն սիրով լեցուած՝ զմայլում էր նրա դէմքի փոփոխումից. . . իւր անբաժան ընկերը այն ժամին դիւթական պատկեր էր դառել ու հրապուրում էր իր սիրան ու հոգին: Ցնծում, տրոփում էր սիրոյ առաջին քաղցր նախերգանքից նորա սիրտը վայրկեան առ վայրկեան. . .: Տիրանը չ՝ հասկացաւ իսկապէս, որ տարիներից 'ի վերայ սիրոյ սաղմը նոյն բոպէին ծնաւ, կենդանացաւ և

իրեն կաշկանդեց դրաւիչ ձեւով, անվերջ տանջանքների հանգոյցներով: Նա մի քայլ առաջ գնաց և էլի յետ կանգնեց—«Թող քնի, որքան ուզում է, ես կ՝գնամ երկու պարտէզներն էլ կ՝պահպանեմ».—ասաց և կամաց—կամաց մօտեցաւ Արփենիկին և իսկական սիրոյ առաջին համբոյրը խլեց դողդոջուն շրթունքներով նորա վարդագոյն այտերից: Այն պահուն նկատեց նա, որ արեգակի խիստ ճառագայթներից տաքացել էին նորա այտերը և քրտանց շիթերը ծը-ծումբ-ծծումբ դուրս էին հոսել. . . որքան ցաւեց նա. . . Իսկոյն իր վերմակը հովանոց շինեց այնպէս հմտութեամբ, որ փոքրիկ ստուերը ընկաւ ուղղղ Արփենիկի տուժեալ երեսին: Այդպէս իր պարտքը կատարած և իւր խելօք գործողութիւնից հպարտացած՝ առանց ձեռների օգնութեան ցած իջաւ սանդուղից պարտեզ: Տիրանը երկար խաղալուց յետոյ, նստաւ աւազանի մօտ և անհամբեր սպասում էր Արփենիկի զարթելուն, որ իր գեղեցկահիւս ծաղկեայ փունջը նուիրէր նորան:— «Որքան խոր քնի մէջ է, որ սոխակաց այս աղմկալի ձայները չեն խանգարում քունը».—խօսեց Տիրանը ինքն իրան և ընկաւ մտածութեան մէջ: Նորա աչատ միտքը՝ սէրը կենդրոնացել էր միայն մի կէտում և պինդ կաշկանդել էր: Այդ կէտն էր Արփենիկը, ու բնաւ չէր զատվում մտքից. . . Վերջապէս համբերութիւնից դուրս գալով, կրկին բարձրացաւ Արփենիկի մօտ ու ձեռի ցօղոտ փունջը շաղ տուեց նրա երեսին, որից իսկոյն սթափուեց Արփենիկը և ասաց.

—«Երևի դու վաղ ես զարթնել Տիրան ջան, ի՞նչու ինձ էլ չ՝ձայնեցիր:»

—Այո՛, Արփենիկ ջան, ես վաղ եմ զարթնել բայց տեսայ որ խոր քէֆի մէջ ես, չուզեցի անուշ քունդ խանգարել:

—Անո՛ւշ, ի՞նչ անուշ, Տիրան ջան, սարսափելի երազների մէջ տանջու�էի. . . :

—Ի՞նչ երազների մէջ էիր, ապա պատմիր, Արփէն ջան, ընդհատեց Տիրանը:

—Երկուսով մանէինք գալիս Երասխի ծաղկազարդ ափերում, սկսեց Արփենիկը, և ծաղիկներից փունջեր էինք կապում, որ միմիանց նուիրէինք. բայց դեռ իրար չ՝յանձնած, յանկարծ յորդացաւ Երասխը, պղտորուեց, հեղեղ դառաւ և իր մահասպառ ալիքներով կամենում էր մեզ յափշտակել իր յատակ. իսկ մենք սարսափած փախչում էինք. նա ծանր հառաչեց ու էլի շարունակեց. ախ, Տիրան ջան, բարձրացաւ մինչև մեր պարտէզը և իմ ծաղկոցը բոլորովին տղմով լցրեց:

Իրա՛ւ, դու դողում ես, Արփէն ջան, մի՛ վախենալ, հոգեակս, վեր կաց գնանք պարտէզ, տես այնտեղի ուրախական տեսարանները և մոռացիր այդ ունայն ցնորքները:

Այսպէս խրախուսեց Տիրանը և միասին իջան պարտէզ. . . մոռացան ամեն բան և սկսեցին լի սիրով խաղալ, հրճուել ու միմիանց փայփայել: Երկա՜ր, շա՜տ երկար երկու սիրոյ ընկերները զուարճանում էին: Արփենիկը սովորականի պէս բոլորովին անմեղաբար էր վարվում Տիրանի հետ, վասն զի նա դեռ սիրոյ խանդ չէր զգացել, իսկ Տիրանի մէջ նոր-նոր բողբոջել էր սիրոյ առաջին դիւրալի ցողունը, ուստի իմաստաբար էր Արփենիկին գգվում, փայփայում, և կարծես հասկանում էր, որ շուտով կանցնին այն քաղցր ժամերը և կ՝մերձենան սիրոյ յատուկ փոթորկալի ժամերը:

—Այսօր շատ խաղացինք, Տիրան ջան. խօսեց Արփենիկը. ես դադրայ, մի քիչ հանգստանանք, մանաւանդ, դու

այսօր շատ ես սեղմում, չարչարում ինձ, մէջքս ցաւաց:

—Օ՜հ, Արփէն ջան, այսօր դուն էլ փոխուել ես.— պատասխանեց նա. ես քեզի շատ եմ սիրում, իսկ դու նեղանում ես. . .

—Չէ՜, Տիրան ջան, ես չեմ նեղանում, ընդհատեց Արփենիկը—էՀ՞ որ այսօր շատ խաղացինք, չարչարուանք:

Արփենիկը բոլորովին չ՝հասկացաւ Տիրանի «սիրում եմ» բառի միտքը. որովհետև այդ բառը շատ անգամ էր լսել միայն սէր զգացող սիրտը կարող էր որոշել այս անգամի հնչիւնը միւսներից: Արփենիկը երկար միջոց զմայլած՝ նայում էր երգող թռչնոց, երբ մի ծանր հառաչանք թռաւ նորա սրտի խորքից դէպի բաղդի պայծառ հորիզոնը, որտեղից խափուսիկ բաղդը ծիծաղ դիմաք նայում էր և կախարդում:

—Հապա, Տիրան, տես ի՞նչ եռանդով սոխակները երգում են, առաւօտից մինչև հիմայ չեն հեռանում վարդերից. արդեօք ինո՞ւ, հարցրեց Արփենիկը:

—Որովհետև նրանք վարդին սիրում են, Արփեն ջան. պատասխանեց Տիրանը—նրանք, որ անդադար երգում են, իրանց սէրըն են յայտնում վարդին. . .

—Ուրեմն հեռանանք այստեղից, Տիրան, գուցէ արդեալ ենք լինում նրանց սիրուն և եթէ դու այդ գիտէիր, ինչո՞ւ քաղեցիր այս վարդերը: Նա ցոյց տուեց իր ձեռի վարդեայ փունջը, որը Տիրանն էր ընծայել:

—Այդ ոչինչ, Արփէն ջան, նրանք մի վարդից էլ կարեն իրենց փափաքն առնել. . .

—Չէ՜, չէ՜ Տիրան, հեռանանք այստեղից:

Տիրանը զիջանելով Արփենիկի խնդրին, միասին հեռացան այդու խորքը և նստան սովորական տեղը—բազմա-

սաղարթ խնձորենու տակ, որտեղից պարզօրէն Երասխը երևում էր իր եզերքի սիգաձեմ ուռիներով, որոնք նոյն պահուն խոնարհած դժնդակ ալեաց առաջ՝ ողբում էին իւրեանց մօտակայ կորուստը: Իսկ միւս եզերքում փռուած էր ընդարձակ դաշտը հանդերձ մշակներով ու հօտերով: Հանդէպ տեսարանները Արփենիկի յիշողութիւնը զարթեցուցին և նա յիշեց իր կեանքի անցեալից մի անցք և հառաչելով ասաց.

—Յիշում ես, Տիրան ջան, այն օրը, երբ ես ու դու տաւար էինք արածացնում «պստի-թառի» վերայ, յանկարծ երկինքը ամպեց ու սկսեց կարկտախառն անձրև թափել: Դու քո չուխէն հանեցիր, վրաներս առանք, կգկթանք միմեանց գրկի: Այնպէս երկար միջոց մնալով՝ քնել էինք, մէկել զարթեցանք, տեսանք՝ որ տաւարը լցուել էր խեչիկ ամիենց ցորենի կանաչ արտը. . . ախ, Տիրան ջան, հետևեալ Խրը Հայրդ ոչքան ծեծեց քեզ. ես երբէ՛ք չեմ մոռանում այն օրը. . .

—Յիշում եմ, յիշում, Արփեն ջան, ասաց Տիրանը լի տրտմութեամբ—մի՞թէ մոռացուելու օրեր են, որ մոռանանք. ողջ օրերով ուրախ անհոգ խաղում թաւալում էինք կանաչների վերայ. խնկածաղիկներից*) ծաղկադունդ էինք շինում, և երբ ծնած կովերը բառաչելով ճանապարհ էին ընկնում, հասկանում էինք, որ ժամանակ է տուն վերադառնալու, ընկնում էինք ճանապարհ երգելով:

Երգ ասիր միտքս ընկաւ, Տիրան, մոռացել եմ քո սովորեցրած «խնկի ծառի նման ես» երգը, որն աւելի շատ էինք երգում. . . —

*) Անթառամ ծաղիկ է

Մինչ դեռ երկու սրտակիցների մտաց մէջ հնչում, անցնում էին հին յիշատակները, գիւղի եկեղեցու զանգակի ղողանջիւնը տարածուաւ շրջակայ վայրերը և սթափեց նրանց:

—Վա՛յ, Տիրան, ի՞նչ շուտ անցաւ օրը, ես պետք է քաղհան անեի ծաղկոցս, ուրեմն քանի վաղ է՝ սկսեմ, իսկ դու, Տիրան ջան, մաքրէ ծաղկոցի առուակը, որ ջրենք, վաղը կիւրակի է, կարելի է հայրս ու մայրս գան, ծաղիկները թոռոմած չտեսնեն:

Մի առժամանակից յետոյ, երկու անբաժան անձինք իրենց անհրաժեշտ պարտքերը կատարած, սովորականի պէս անուշ քնով հանգստանում էին միմեանց գրկում ծանօթ վերնայարկում: Սլսլում էր սիգաշունչ զեփիւռը նրանց երեսների վերայից և աւելի քաղցր քուն էր թափում նոցա անմեղ մարմիններին: Խաւարը արդէն տիրել էր Արշարունեաց խոր-խոր վայրերուն: Ամեն բան լուռ էր. Երասխի անընդհատ ձայնի հետ երբեմն երբեմն լսվում էր հեռուից բուերի «պու—պուն»:

ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ԵՐԶԱՆԻԿ ԺԱՄԵՐԸ, ԳԱԼԻՍ ԵՆ ԽԻՍՏ ՏԽՈՒՐ ԺԱՄԵՐ:

Բ.

Աշուն էր. այն օրից անցել էր երեք տարի. . . Շահէ-նենց պարտէզը մի այլ պատկեր էր ներկայացնում: Հասուն պտուղներով բեռնաւորուած ծառերը նաղելով օրօրվում էին նուազ-նուազ հողմերից: Վարդի թուփերը ժամահասել և կաթկաթում էին իրանց դեղնած տերևները: Իսկ սոխակները վաղուց լռել էին՝ գրկուելով սիրուհի վարդից:

96 803-2011
44334/41

Արփենիկի ծաղկոցում բոլոր ծաղիկները թառամել, կըղ-
կտել և սերմեր էին կապել։ Տիրանը առաջուայ պէս այլ չէր
երևում այնտեղ Արփենիկի հետ. . . Նա էլ ակամայից զըկուել
էր իւր սիրասուն Արփենիկից։ Պարտիզում երևումէր միայն
Արփենիկը, որ նստած ինձորենու տակ, մաղերը հիւսումէր՝
Նա առաջուայ փոքրիկ Արփենիկը չէր. մեծացել, մայի-
սեան կեանքի մէջ էր մտել։ Մեծութեան հետ նաև գեղեց-
կացել էր. սակայն բռնութեան հոգսերի ճնշումը թանձր
քողով ծածկել էր նրա դեմքը, վասն զի նորա խաղաղ որ-
դին ևս բոյն էր դրել վրդովիչ սերը և անողոքութեամբ *)
գիշեր ցերեկ խորտակումէր սրտի խորքը։ Արփենիկի սիրելի
խնձորենին կարմիր պտուղներով զարդարուած՝ գետին էր
կորացել և մի սեթևեթ վրան էր կազմել, ուր նա առանձ-
նանալով՝ անցնումէր իր տխուր և ուրախ ժամերը։ Նա կըր-
կին այնտեղ էր, տխուր նստած՝ մաղերը հիւսումէր՝ երբեմն
երբեմն թողնում էր գործը, երկար նայում էր դէպի հան-
դէպ դաշտը և ապա նորից դժգոհացած՝ շարունակում էր
նախկին գործը, մինչև որ բոլորովին աւարտեց ու ընկաւ
խորը մտածութեան մէջ։ Այն բոպէին գուցէ նա յիշեց ան-
ցեալ քաղցր ժամերից, որ անցուցել էր Տիրանի հետ ուրախ
սրտով, նոյն խնձորենու տակ։ Նա շատ երկար կը մնար նոյն
տատանման մէջ, եթէ որ ծառից ընկնող խնձորը չ՚փշրեր
արմատից կախած փոքրիկ հայելին, որից նա սթափուեց
և ձեռի թաշկինակով սրբեց արտասուալի աչքերը. . . Այն-
տեղից պարզ երևում էր այն դաշտը, ուրտեղ Արփենիկի
սրտի կէսը—Տիրանը, արիւն քրտինք էր թափում. նա մի,

*) Սէրը խստապէս անողոք չէ, ընդհակառակը աւելի եր-
ջանկացնող է, սակայն բաբբարոսութիւնը սէրը սուր է
դարձնում։

զոյգ եղներով վարում էր իրանց միակ «ծոփառ» արտը։
Զը նայելով որ Տիրանի սէրը դէպի Արփենիկը օրէցօր ա-
ճել, անշիջելի հրդեհ էր դառել, որին չէր կարող մարել
առանց միանալու, բայց կենցաղավարութեան հոգսերով
կաշկանդուած՝ (նորա հայրը մեռնելով՝ ամբողջ ընտանիքը
թողել էր դառն աղքատութեան մէջ, Տիրանի հսկողու-
թեան ներքոյ) դոգցես մոռացել էր իր Արփենիկին, գէթ
մի անգամ չէր նայում Շահէնենց պարտիզին, որ տեսնէր
նորան։ Ահա թէ՝ ինչու Արփենիկը դժգոհացած՝ թողեց
խնձորենին և գնաց նստաւ ժայռի վերայ, Տիրանի հան-
դէպ. . . Բայց Տիրանը զլխակոր շարունակում էր մաճկա-
լութիւնը և բարակ ձայնով ձայնակցում էր դաշտային
հողմերուն հետևեալ երգով։

Անցան գնացին երջանիկ ժամեր,
Որպէս թէ մրափ, երազի նման. . .
Երբ քո կենսատու գգուանքըն ու սէր
Լեցնում էր սիրով հոգիս զերթ գարնան։

Ա՛խ, երանելի ու անհոգ օրեր,
Էր՞ վաղ լռեցին լարեր քնարիդ.
Այլ ինձ չեն քաղցր քո այժմեան երգեր. . .
Տխուր է հարում բաղդը խափուսիկ։

Հնչէ՛ք, հովասուն դաշտային հովեր,
Որ ուժ ստանան վարեն իմ եղներ.
Շարժուի՛ր, իմ արօր, շարէ՛ ակոսներ,
Փչէ՛ք, պաղ հովեր, վարէ՛ք, իմ եղներ։

Վաղը, միւս օրը տաճիկ ոստիկան,
Կը պահանջէ նա հարկը անքանակ. . .

Աչխատինք, թափենք քրտինք դառնութեան.
Զկցէ՞ ձեզ տանի հարկի փոխանակ։

. . . . . .

Տիրանը երբ այս երգը աւարտեց, արտասուալի աչքերը դառուց դէպի Շահէնենց պարտէզը, տեսաւ Արփենիկին, ամեն բան մոռացաւ. արօրը թողեց դաշտումը և ինքը վազեց դէպի նորան. . . . Մի քանի րոպէից յետ՝ նա արդէն Արփենիկի մօտն էր։ Նրանք լի սիրով խօսակցում, զրուցում, փայփայումէին, երբեմն էլ միմեանց սէր էին բաշխում կարօտեալ սիրով։ — Երբէք չես մոռանում, Արփենիկ ջան, անցեալ տխուր և ուրախ անցքերը—խօսեց Տիրանը հառաչելով, երկար հրճուելուց յետոյ։

—Ուրեմն կը յիշես և այն օրը, որ հայրս քաղում էր ծովառ արտը, իսկ ես ու դու էլ տաւար էինք արածեցնում ու բարտի տակ նստած՝ աղանձու էինք ջոկում հասկերից, որ խորովէինք, յանկարծ վրայ թափան Լեզգիները, մեզ էլ՝ հայրիկիս էլ կապեցին ու տարան մեր տաւարը ողջ դիւղի նախրի հետ. . .

—Այո՛, Տիրան ջան, յիշում եմ, հատեց Արփենիկը շտապով։— Մինթէ մոռանալու օր է. այն չարագուշակ օրը չէ՞ր, որ նոյն գազանները անողթարար սպանեցին Անեցոնց Աշոտին և Իշխանենց Խորէնին, որոնք օգնութեան էին գնացել նախարարաններին։—

Մի քանի րոպէ երկուսն էլ լուռ մնացին և ապա խիստ յուզուած՝ կրկին խօսեց Արփենիկը—

—Ա՜խ, Տիրան ջան, երբ պիտի ազատուինք բարբարոս ազգերի հարստահարութիւններից. . . Արդեօք կը գայ մի օր, որ ազատուած լինինք թուրքերի, քրդերի և լեզգիների ձեռից, և մեր քրանաթաթախ կայք ու կարողութիւնը այլոց աւար չլինի. . .

—Արփենիկ ջան, անցեալ օրը տէրտէրս պատմեց Վարդանանց պատմութիւնը, նրանց վիճակը մեզանից վատ է եղել. բայց յետոյ ազատուել են վատ վիճակից։ Ես ափսոս չ՝ կարողացայ սովորել, մէկ լսէիր, Արփենիկ, թէ ինչեր են աւրել այն ժամանակուայ հայերը։ Տէրտէրս պատմում էր և արտասվում։

Կարճ լռութիւնից յետոյ՝ կրկին խօսեց Տիրանը.

—Ստուած ողորմած է, Արփենիկ ջան, մի օր էլ մեզ կազատէ. . . Ինչպէս ազատեց Իսրայէլացոց ազգին Փարաւոնի գերութիւնից, Մովսէս մարգարէի ձեռքով։ Արփենն ջան, դիտես, նրանց նեղութիւնները աւելի շատ են եղել։ Տէրտէրս ասում էր—Փարաւոնի թագաւորը երբ կամեցաւ իր պալատները փառաւորապէս շինել տալ, հողի և կրի մէջ մանր մեխեր լցնել տուեց ու հրամայեց Իսրայէլացոց ժողովրդին, որ կոխոտեն, որպէս զի մարդկային արեամբ շաղախուի ցեխը և աւելի ամրապինդ լինին պալատները։ Հէնց այն սարսափելի ժամին, հարս, աղջիկ, ծեր, երիտասարդ ցեխի մէջ կոխոտում են եղել տանջուելով։ Մի յոլի հարս ցաւին չէր կարողանում համբերել, արտասուալի աչքերը երկինք էր ձգում և այսպէս աղերսում։—«Ո՛վ երկնքի երկրի Տէր ստեղծող, նայիր դէպի քո ստեղծած աշխարհի վերայ, տես ի՞նչ անզթութիւններ է կատարվում այստեղ. զթա՛, փրկէ՛ ամենին և ապա ինձ թշուառիս, չեմ կարողանում տանել»։ Նա այդպէս սրտագին աղերսում, աչքերի

առատ արտասունքը սրբում և ակամայից շարունակում էր զազրալի գործը։ Նոյն իսկ հարսի աղերսանքը լսեց Աստուած և Իսրայէլացոց ազգը ազատեց գերութիւնից. մի օր էլ մեզ կազատէ այն Աստուածը։ Ուրեմն տեսնում ես, Արփենիկ ջան, մեզանից շատ առաջ մարդիկ աւելի բարբարոս են եղել, մինչև անգամ թագաւորաց պալատները մարդկային արիւնով են շինում եղել, որ ոչ մի գլխաւոր բաւականութիւն էր լինում, այլ միայն զուարճանում էին թշուառների լացով ու հառաչանքներով։ Այդ բոլորը տերտէրս է ասում, որ կարդացել է գրքերի մէջ։ Համեմատելով առաջուայ ժամանակներին, հիմայ մենք երջանիկ ենք և աւելի երջանիկ կ'լինին մարդիկ ապագայում, մանաւանդ հէնց հիմայ մենք քրիստոնեայ տերութեան հպատակ լինէինք, կատարեալ երջանիկ կ'լինէինք, որովհետև Քրիստոս Տէրը իր հետևողներուն, այսինքն քրիստոնեաներուն, առաքինութիւն և խոնարհութիւն խրատեց, այժմ էլ նրա Աւետարանն է մեզ նոյնը քարոզում։ Իսկ մահմետականներին խրատողը՝ միայն բարբարոսութիւններ խրատեց, և նրանց «ղուրանը» արդէն լոկ բարբարոսութիւններ է քարոզում։ Ուրեմն՝ Արփենիկ ջան, սպասենք, տեսնենք մութ ապագան ինչ տեսարանով է լոյս ընկնում։

—Ա՛խ, Տիրան ջան, թէև մենք լաւ ապագայի ենք սպասում, բայց գնալով՝ վատանում է մեր վիճակը։ Տարուն մի քանի երիտասարդներ իզուր տեղը զոհվում են բարբարոսաց սրով, մանաւանդ Աշոտն ու Խորէնը. օ՜ֆ. օ՜ֆ...

Արփենիկը այլ չ'կարողացաւ շարունակել։

—Ո՜հ, Արփեն ջան. . ի՜նչ չարագուշակ օր էր. այն օրը երկու ընտիր երիտասարդներ սպանուան, որ գիւղի թև ու թիկունքն էին։ Բոլոր գիւղացիք զրկուան իրանց տաւարներից և ընկան դառն աղքատութեան մէջ, ինչպէս և իմ հայրը. թշուառը գուցէ դարդից մեռաւ, ինձ թողնելով անելանելի դարանի մէջ, որտեղից չեմ կարողանում դուրս գալ մինչև օրս՝ դիշեր ցերեկ ջանալով։ Բայց որքան տխուր օրեր ենք անցուցել, այժմ մեզ ցանկալի պատկերով են ներկայանում։ անցածը միշտ քաղցր է. էլի կասեմ, որ անցան մեր երջանիկ օրերը, կորան յաւիտեան։ Ի՜նչ երանելի օրեր ենք անցուցել հանդէպի դաշտում։ . .

—Ինչո՞ւ ես հեռանում դաշտերը, Տիրան ջան, ընդհատեց Արփենիկը շտապով—ահա՛ մեր անցեալ քաղցր յիշատակների վկան (ցոյց տալով պարտէզը). քանի՜, քանի՜ ուրախ օրեր ենք անցուցել միասին այնտեղ, քանի՜ դիշեր անհոգ, միմեանց սիրով գրկած՝ քնել ենք վերնայարկում։ . .

—Ա՛խ, Արփեն ջան, մի՛ յիշել և մի՛ յիշեցնել անցեալը. որքան մտաբերում ենք, այնքան ցաւեր ենք բարդում մեր սրտի վերայ. . . Դեռ աչք չ'բացած աղատութեան դէմ, անդութ բաղդը ձդեց անտանելի հոգսերի մէջ։

—Ի՜հ, բաւականէ, Տիրան ջան, վեր կաց, գնանք խնձորենու ստուերի տակ հանգստիր. շտապիր, քանի պարտիզում ոչ ոք չէ երևում։ . .— Ի՜նչ շատ ես աշխատում, Տիրան ջան, կրկին խօսեց Արփենիկը, երբ գնացին նստան խնձորենու պաշտպան ճիւղերի տակ— ես երկար քարի վերայ նստած՝ քեզ էի նայում, բայց դու իսկի գլուխդ չէիր բարձրացնում։ Ի՜նչ, չ'լինի թէ ինձ մոռացել էիր և. . .

Նա լռեց ու ամօթխածութեամբ գլուխը թեքեց դէպի Տիրանին. . . Կրկին մի քանի երջանիկ րոպէները մոռացնել տուին նրանց բոլոր ցաւերը։ . . . Տիրանը Արփենիկի ձեռները իր ափերից չ'թողած՝ խօսեց լի սիրով.

—Ո՜հ, Արփեն ջան, ինչեր ես ասում այդ, մի րոպէ անգամ

չեմ մոռանում քեզ։ Երբ ես գլխակոր աշխատում էի, միտքս թաղուել էր մտածութեան մէջ, իսկ այն մտածմունքներս դարձեալ մեր միութեան համար էր։ Ո՛րքան մտածեցի, մի ելք չ'կարողացայ գտնել իմ վիճակս բարւոքելու, որից միայն կախուած է մեր միութեան կապը. ես միայն օտարութեան մէջն եմ տեսնում մեր միութեան հնարը։

—Ո՜հ, Տիրան, այդ ինչ՞ը ես խօսում, դու օտարութեան մէ՞ջ, ինձանից հեռո՞ւ. . . Ա՛խը խ . . . Թող, 'ի սէր Աստուծոյ, Թող—կարճ լռութիւնից յետ կրկին խօսեց Արփենիկը լալագին ձայնով—ի՞նչ հարկաւոր է մեզ հարստութիւն, դու ինձ համար անսպառելի գանձ ես. . . կրկին մօտեցաւ նա Տիրանին. . .

—Այո՛, Արփեն ջան, այժմ կը թողնեմ, սակայն վերջը գուցէ դու ինքդ ստիպուած՝ առաջարկես, որովհետև հայրը մեր գիւղում համարեա ամենահարուստ և մեծանուն մարդն է, ուրեմն ես ի՞նչպէս յուսամ, որ նա ինձ, աղքատիս, աղջիկ կ'տայ, և ի՞նչպէս համարձակուիմ խնդրելու իմ սիրած քո ձեռը—իմ երջանկութիւնը, երբ դեռ չեմ վճարել նորան իմ հօրս պարտքը, որ վեր էր առել այժմեան եղները գնելիս։ Հայրդ կ'ծաղրէ իմ վերայ և ունի իրաւունք ծաղրելու. . . ես ով, Շահէնենց Գրիգորը ով. ..

Արփենիկը գլուխը բարձրացնելով Տիրանի կրծքից՝ խօսեց.—Ուրեմն աղքատութիւնն է մեզ բաժանում, Տիրան ջան։

—Այո՛, Արփեն ջան, աղքատութիւնն է, բայց աղքատացնողը բարբարոս մարդիկ են, ուրեմն՝ ոչ թէ աղքատութիւնն է, այլ բարբարոսութիւնն է մեզ բաժանում. . .

Տիրանը խօսակցութիւնը չ'աւարտած՝ Արփենիկը թուլացած ընկաւ լանջովը. . . Այն պահուն կիսող արեգակը

կարծես հասկացաւ, որ երկու սիրակէզ անձանց սիրավառ սրտերուն զովութիւն է հարկաւոր, թաղ կացաւ սև ամպերի տակ։ Փչեց մեղմ զովը և անուշ քուն երգեց նրանց վշտալի հոգիներուն։

ԶՐԿԱՆՔՆԵՐ

Գ.

Անցել էր ողջ երկու ամիս։ Աշունը բոլորովին ձանձրացած իր զառամեալ կեանքից, վերջին շնչով կամենում էր ողջոյն տալ ու հեռանալ դաժան ձմեռից։ Փչում էր քամին հպարտաբար և խշխաշցնում էր ծառերի վերայ մնացած չոր տերևները, պարզօրէն դուշակելով մօտակայ ձմռան սաստկութիւնը։ Արեգակը նոր իր անզօր շառաւիղները ձիւնապատ լերանց տակից հանած, վախվխոտ նայում էր եղեմապատ դաշտերուն։ Այն միջոցին Ոսկիենենց դրանը կանգնացնում էին մի քանի թուրք ոստիկաններ, որոնք սպառնագին Տիրանից պահանջում էին հարկը և հանդուցեալ հօր բաժինը*)։ Տիրանը վիզը ծռած, աղերսելով՝ խնդրում էր տանուտէրից (օնբաշի)՝ որ մի քանի օր դոնէ ժամանակ տայ։ Երբ աղերսելով չեղաւ, խոնարհում, ոտքերն էր համբուրում նորա կարեկցութիւնը շարժելու համար, բայց 'ի զուր. . . Կամակոր դաղանը առաւել կատաղում էր և ոտքերը գետնին խփելով՝ գոռում էր—«ՕՂՄԱՂ, ԲՈՒ ԱՍՀԱԹ» (չի լինի, այս բոպէիս)։ Տիրանը նկատեց՝ որ իր աղաչանք-

*) Ղասամ—Երբ մեռնում է ընտանեքի տէրը, տեղական կառավարութիւնը, որբերին մնացած կայք ու կարասիքները գրի էր առնում, իսկ այն դրութեան համար՝ առատ վարձ էր պահանջում։

ներն 'ի զուր է, և որովհետև ուրիշ ճար չ'կար, ծախեց իր երկու եզները և վճարեց նրանց պահանջը։ Բայց դրբանով չ'աղատուաւ նա, այլ ստիպուած էր հաւի և գառի մսից լաւ խորտիկներ պատրաստել նոցա համար. նրանց պահանջմունքը այդ էր. . . Վերջապէս այն հրոսակ խումբը մի ամիս կամովին հիւր էին գիւղին և օրը մէկին արիւն-քամ էր անում։ Անցան մի քանի օր ևս, վերահասաւ ձմեռը և իսպառ փակեց ամենի յոյսը։ Տիրանը ողջ ձմեռը մտածելով՝ հալ ու մաշ եղաւ։ Անթիւ դժբաղդութեանց դառնութիւնները կրելով՝ անհամբեր սպասում էր գարնան գալուն, որ իսկոյն դիմէր օտար երկիր բաղդ որոնելու։

ՏԻՐԱՆԸ ՊԱՆԴԽՏՈՒՄ Է

Դ.

Անցել էր ձմեռը. գարնան սկիզբն էր։ Ձիւնը յաղթուած արևի ճնշող ճառագայթներից, վերացել էր դաշտերից, իսկ սարերում դեռ նոր էր հալվում և հաղարաւոր վտակներ դարձած՝ գոչգոչալով վազում էին դաշտերի, հովիտների ձորակներից, և հետզհետէ միանալով՝ մեծանում խրոխտաբար հոսում էին դէպի մայր գետերը։ Բնութիւնը արդէն արթնացել էր ձմռան խորին մրափից և իւր թարմ ու բերկրալի կեանքը տարածել էր ամեն ուրեք։ Կ. գիւղը հանդերձ սահմանով՝ թաղուել էր ծաղկախառն կանաչների մէջ։ Ոսկինենց դռանը հաւաքուել էին մի քանի երիտասարդներ Տիրանին դէպի օտար երկիր ճանապարհ ձգելու։ Տիրանը այնտեղ չէր. նա իրանց այդուն հանդիպելու պատրուակով գնացել էր Արփենիկին «մնաս բարով» ասելու։

Ինչպէս նախկին օրը միմեանց յայտնել էին՝ բաժանման տեսակցութիւնը լինելու էր Արփենիկենց պարտիզում։ Արփենիկը գիշերը անքուն անցնելով՝ լուսաբացին գնացել էր պարտէզ և անհամբեր սպասում էր Տիրանին։ Տիրանը երբ մտաւ Շահէնենց պարտէզը, տեսաւ որ աղատուած ձմռան ճնշումներից՝ պարտէզը բողբոջել, ծաղկել և կատարեալ բուրաստան էր դառել, ու գարնան աւետաբեր սարեակները և այլ թռչնոց ճռողունները լարեցին նորա զգացմունքները և նա յիշեց բաղցր անցեալը. . . Երկար նա կանգնած պարտիզի մուտքի ներսը, ապուշ դառած, դիտում էր բնութեան տեսարաններին և զմայլվում։ Կարճ միջոցում նորա մտքից հաղարաւոր խորհուրդներ անցան ուրոյն ուրոյն վերքերի հետք թողնելով սրտի վերայ։

— Ինչպէս բաժանվիմ այս ցանկալի վայրից, ուր երբեմն— երբեմն արժանանում եմ Արփենիկիս փայփայանքներուն։ Բայց ա՜խ, ինչպէս չ'բաժանուիմ, երբ սորա (պարտիզի) երդող թռչնոց ձայների արձագանքից յաւիտենական բաժանման լուրեր եմ զգում։ Ահա՛ սիրահար սոխակը վարդենու վերայ թառած՝ երգում, կողկողում է, և ո՛րքան տանջվում է՝ մինչև որ գալիս է մայիս ամիսը՝ բերելով իւր հետ նորա վառ սիրոյ սիրատու վարդը։ Ա՜խ, Աստուած, արդեօք իմ կեանքումն էլ մայիս կա՞ յ, որ մի օր էլ ինձ արժանացընէ սիրոյ փափագին. . . բայց պէտք է օրինակ առնել սոխակից. նա զատվում գնում է օտար աշխարհ, ուր երկար չարչարվում է, անհամբեր սպասում է ժամին։ . . Վերջապէս անցնում են 11 ամիսները և գալիս է ցանկալի մայիսը. . . Այո՛, ես էլ կ'գնամ օտար երկիր, երկար կ'չարչարուիմ. . . և մի օր նպատակիս հասած՝ կ'վերադառնամ հայրենիք և իմ խնջեալ մարմինս, վշտացած հոգիս ու

վերաւոր սիրտս կ'զովացնեմ նորա հովասուն սառերով, բաքախող կրծքով և կենսաբոյր հոգով։ Ո՜հ, ի՜նչ երանելի օր, ի՜նչ ցանկալի ժամ։ . . Աստուած իմ, արդեո՞ք պէտք է արժանացնես։

Ա՜խ լռեց. արտասուքը հոսում էր աչքերից. . . Սէրը մարդկանց բարոյականութիւնն է. եթէ անձն բարոյականութեան բարձր կէտումն է, անշուշտ նա զերծ չէ սէրից։ Սէրը մարդկանց ձգում է դէպի գիտութիւնը—բանասիրութիւնը։ Սէրն է դիւտեր անում. . . Սէրը սահման է, երբ չէ բռնուել որևէ առարկայով, և եթէ գրաւեց՝ կը կենդրոնանայ նոյն առարկայի վերայ բոլորովին սահմանափակ՝ և անդադար կ'զբաղի նրանով, մինչև որ գտնի նոր զօրութիւնը; եթէ չէ յաջողվում, շատ անգամ մաշվում, հիւծում և վերջապէս զոհվում է նորա սիրուն։ Ուր մարդուս սէրն է՝ այն տեղ է նորա միտքը, ուժը, հոգին և բոլոր զօրութիւնը։ Սակայն սէրը առանձին նշանակութիւն ունի անուսների համար, որոնք իրանց սէրը միայն ձգում են շնչաւոր առարկաների վերայ, որոնց նոցա դաղափարները աւելի մատչելի են։ Նրանք փակ մոքերով դեգերվում են սիրոյ անսահմանութեան մէջ, և նորա զօրեղ ազդեցութեանը չդիմանալով՝ զոհվում են շատ անգամ, երբ նրանց բաժանում է բարբարոսութիւնը։ Իսկ սիրոյ բարոյական նշանակութիւնը միևնոյն է՝ թէ ուսեալների և թէ անուսների համար, զանազանութիւնն է միայն այն, որ ուսեալք իշխելով ու գիտակցութեամբ են վարվում. . . իսկ անուսները առանց զգալու իրանց բարոյական վսեմութիւնը։ Տիրանն ու Սոֆինները վերջին կարգից էին, նրանք ծնունդեան օրից սիրոյ և բարոյականութեան մէջ պարուրուած, մի առ ժամանակ վայելում էին սիրոյ քաղցր զուարճութիւնները. . . Տիրանը մինչ դեռ նոյն տեղը կանգնած, մոայուզութեան մէջ դիտում էր սիրտ պատառող տեսարաններին, սոխակը նստաւ այն ծառի վերայ, որի տակ կանգնած էր ինքը՝ և սկսեց սրտաթունդ երգել։ Տիրանի ցաւերը առաւել շատացան։ Մի ծանր ախ քաշեց, ծուխը քթածակերից դուրս վիժեց և հապա սկսեց բարձր ձայնով երգել.—

Բա՛ է երգես, սոխակ, հոգիս լի հուր է,
Ես էլ եմ բաժանվում, սիրտս տխուր է,
Թռչի՛ր դէպի հիւսիս, մի՛ երգիլ այսօր. . .
Հոգիս վշտացած է, սիրտս տխուր է։

Սլացի՛ր դէպ ուրոյն, սառն երկիրներ,
Ուր չկան պարտէզներ, չեն ծաղկում վարդեր,
Եւ փնտռտէ վարդդ և երգէ քո սէր.
Տես, թէ բաժանումը որքան դժուար է։

Գնա՛ դէպի հիւսիս, մի առ ժամանակ,
Այնտեղ դու կ'զգաս իմ դառն վիճակ,
Ջես գտնիլ վարդ, զո՞ւր է աղերս, աղաղակ,
Բա՛ է երգես, սոխակ, սիրտս տխուր է։

Տիրանը լռեց, բայց սոխակը կրկին լարեց իր քաղցր դայլայլիկները, որից աւելի վշտացած՝ Տիրանը շարունակեց երգել.—

Ա՜խ, սոխակ, իմ սոխակ, անուշիկ քնար,
Դեռ քանի՞ նուագես տխրագին ձայնով,
Մի՛ ինձ յիշեցնել, ցաւերս անհամար,
Քո երերական տաղերի միջով. . .

Քեզ կասեմ, երջանիկ, բաղդով սիրահար։

Եւ ինչո՞ւ դու այդպէս ընդ միշտ թախծալի
Երգեր ես յօրինում, խիստ դժգոհ բաղդէդ.
Զէ՞ որ շուտով կ'գայ մայիս ցանկալի,
Կը բացուի նաղելի, սիրատու վարդդ.
Միթէ ես չը գիտեմ, այն է փափագդ։

Թողլ, սոխակ, միայն ես երգեմ ու ողբամ,
Զի չունիմ այլ կեանքիս բերկրալի մայիս.
Անագորոյն բաղդս ջանիւք մի անգամ
Բաժնեց ինձանից իսպառ, ա՜խ, իմ սիրուհիս,
Հեռու և բաժանուած թողեց յարաժամ։

Գիտեմ, չեմ դիմանալ այս անբոյժ ցաւին,
Արդէն մահս մերձաւ ինձի բնաւին,
Կանցնի և այս տարին, միւս մայիսին,
Արի՛, նստիր, խնդրեմ, շերիմիս քարին,
Հանգիստ ոսկորներիս—երգէ՛ լալագին։

Դադարեց նա երգելուց և սկսեց սրտառուչ աղօթել Աստծուն։

—Ո՛վ երկնքի երկրի Տէր, որովհետև ստիպուած եմ օտար երկիր դիմելու և բաժանվում եմ այն սուրբ սէրից, որը ինքդ ես տուել մարդկային սեռին. ես մի թոյլ արարած եմ, չեմ կարող հակառակ վարուել սիրոյ դէմ, ուրեմն հաճէ, Տէր իմ, որ վայելենք. . .

Երկար ժամանակ նոյն տեղը կանգնած մրմնջում էր. նրա ոտքերը դողդողում էին առաջ գնալու համար, որովհետև մօտակայ բաժանումը պիտի յայտներ Արփենիկին։ Արփենիկը նստած նորածիլ կանաչների վերայ, խնձորենու ըստ-

ուերի տակ դլխակոր և մտայոյզ կարում էր սիրոյ գրաւական մի նաշխուն քսակ, որ տար Տիրանին յիշատակ անմոռացութեան։ Տիրանը երբ ճանապարհորդական ցուպը ձեռին ներկայացաւ Արփենիկին, անխօս փարեցան միմեանց վզով. . . սոսկալի տեսարան. . . հանճարի գրիչ եթէ լինէր, կարող էր իրականապէս նկարագրել. .

—Ա՛խ, Տիրան ջան, առաջին անգամ խօսեց Արփենիկը լալագին ձայնով, այժմ իրագործվում են իմ մանկական չարագուշակ երազները, յիշո՞ւմ ես. . . յիշէ՛ և այն քաղցր ժամերը, երբ անհոգ, անարգելք ողջ օրերով խաղում, փայփայում էինք միմեանց, մինչև անգամ չէինք բաժանվում իրարուց գիշերները, այլ միմեանց գրկած, հանգիստ էինք առնում անուշ քնով, ցերեկուան խաղերից. . . իսկ այժմ. . . Ա՛խ. . . անցան, Տիրան ջան, անցան մեր երջանիկ օրերը, ես այլ ևս յոյս չունիմ նոյն բաղդին արժանանալու. . . Այժմ կամենում ես վերջին անգամ այնպէս մի հարուած տալ, որ ինձ յաւիտենականութեան գրկումն եմ տեսնում կանգ առած։

Նա այլ ևս չ'կարողացաւ շարունակել և հեկեկալով ընկաւ կրկին Տիրանի լանջովը։

—Ո՛հ, Արփենիկ, ես կամով չեմ բաժանվում քեզանից, խօսեց Տիրանը—չար մարդիկ են ինձ օտարութեան ձեռքը մատնում, ճակատագիրն է ինձ բաժանում։

Նա ծանր կերպով հառաչեց, բոպէական լռութիւնից յետոյ կրկին խօսեց.

—Ես կ'գնամ օտար երկիր, այնտեղ անգադար ջանալով նպատակիս հասցնող դումարը ձեռք կ'բերեմ, և ապա կը վերադառնամ դէպի քեզ աւելի սիրով, աւելի երջանիկ. մի-

այն՝ եթէ չ՝մոռանաս ինձ. իսկ ես անունդ տալով՝ կ՝մխի-թարուիմ: Մի՛ արտասուիլ հոգի՛ ջան, մի՛ արտասուիլ որ իմ գործերս յաջողուին օտար երկրում. ա՛ռ այս մատանիս, սիրոյ յիշատակ և միշտ յիշէ՛ ինձ, սպասելով ողջ երկու տարի, որից յետոյ կաշխատեմ անշուշտ այստեղ լինել: Եթէ երկու տարին անցաւ, չեկայ՝ իմացիր որ ինձ մի անբաղդութիւն է պատահել:

Տիրանը չ՝կարողացաւ շարունակել յուզմունքը խեղդեց նորան. . . կրկին սիրային մի քանի բոպէներ՝ դառն և քաղցը՝ միմեանց խառնուած մունջ մունջ. . . Վերջապէս Տիրանը Արփենիկի ձեռից բռնեց, երկու տարուայ ուխտը հաստատեց, երկինքը վկայ բռնեց, որ մինչև գերեզման մտնելները հաւատարիմ մնան միմեանց: Արփենիկը ոչինչ չէր կարողանում խօսել, միայն գլխի շարժումով, ակամայից համաձայնութիւն էր յայտնում: Վերջին անգամ մի քաղցր հայեացք ձգեցին միմեանց այն հայեացքի մէջ հաղարաւոր մտքեր կային թաղնուած և անվերջ դառն բոպէները ծանրացան յաւէտ նրանց սրտերի վերայ. . . Տիրանը արտասուելով—«մնաք բարեաւ» խօսեց մօրը, ընկերներին և տխուր տրտում ճանապարհ ընկաւ. . . Նա ծնած օրից ճանապարհ չէր գնացել ուստի շուտով դադրեցաւ և յուսակտուր նստաւ մի քարի վերայ, մի ծանր հոգոց հանեց սրտից, երեսը դառուց դէպի իրանց գիւղի կողմը. . . արտասուքը կաթիլ-կաթիլ վազեցին նորա աչերից լուռ մունջ: Նա պատրաստ էր նոյն բոպէին յետ դառնալու, եթէ որ ամօթ բառը չ՝լինէր արգելք: Շատ էր զղջացել բայց անցել էր ժամանակը. . . Ծանր հառաչելով՝ տեղից վեր եաւ և կրկին շարունակեց ճանապարհը: Երբ ճանապարհորդութեան նա ընտելացաւ, այլ ոչ մի տեղ հանգիստ չէր

առնում: Խափուսիկ յոյսերը առաջ էին մղում նրան: Սարեր անցնելով, գետեր ճղելով, դաշտեր չափելով՝ վերջապէս օրուայ մէկին հասաւ Վրաստանի նշանաւոր քաղաքներից մէկը, կանգ առաւ լայն փողոցի անկիւնի մէկում, ձեռի հաստ փայտը նեցուկ տուեց խոնջեալ մարմնին, կոշտացած ձեռով սրփեց ճակատի քրտինքը և մի դառն հառաչանքով պարզեց շքեղ քաղաքին իր թշուառութիւնը. . Երկա՜ր, շա՜տ երկար նայում էր զմայլած՝ փառաւոր քաղաքին, օրիորդաց ու տիկնաց պճրանքներին և պարոնաց փարթամութեանը: Նա իզուր ակնարկում էր բազմութեան մէջ մի ծանօթ մարդ տեսնելու, և կամ այն երջանիկ մարդկանցից հետաքրքիր լինողների իր տարաբաղդ վիճակի մասին: Նկատեց որ իւր վերայ ոչ ոք ուշ դարձնող չ՝կայ, խիստ յուզուած նստաւ անկիւնում: Նա տատանվում էր անհամար մտածմունքների մէջ, երբ մի խումբ մշեցի բանուորներ շրջապատեցին նրան և սկսեցին հարց ու փորձ անել, և երբ տեղեկացան, որ իրանց «վաթանի» (հայրենիք) կողմերից է, տարան իրանց իջևանը, տեղ տուին բնակուելու իրանց հետ: Տիրանի ուրախութեանը չափ չ՝կար. ոչքան գոհ եաւ իր բաղդակիցներից. . . Առաջիկայ օրը շատ վաղ քընից զարթնեց, սառը ջրով լուացուեց, սովորական աղօթքը կատարեց և ընկերների հետ գնաց աշխատելու—նպատակին հասցնող դումարի հիմքը դնելու:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

ՆՈՐ—ՏԱՐԻ

ՏԻՐԱՆԻ ԵՒ ԱՐՓԵՆԻԿԻ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՆՑՔԵՐԸ։

Ա.

Ես եօթ տարի յետ կ'դառնամ և յարդելի ընթերցողաց կ'պատմեմ Տիրանի ու Արփենիկի մանկական կեանքի անցքերը։

Նոր տարու նախընթաց երեկոյեան Կ. գիւղում ամեն մի տուն պատրաստութիւն էր տեսնում նոր տարուն շքեղապէս ընդունելու։ Տիրանը սրտաբեկ վազեց Շահէնենց տունը, Արփենիկի մօտ և ասաց։

—Արփենիկ, մայրս «տարու հաց ու քէսա» թխելիս՝ իմ քէսէն թոնիրը թափաւ. ամենից լաւ ուռչաւ հօրս քիսէն։ Մայրս ասում է.—«Տիրան՝ դու շատ աղքատ կ'լինես տպագրում, իսկ հայրդ շատ կ'հարստանայ, որովհետև նորա քէսէն լաւ ուռչաւ»։ Մայրս ինձ համար շատ տխրեց. . .

—Ի՜հ, Տիրան, սիրտ տուեց Արփենիկը—խօսքը տարու հացինենէ, կարելի է փողը քեզ է բաժին ընկնում, չէ՞ որ փողը ում բաժին եղաւ, նա հարուստ և երջանիկ մարդ կ'լինի. . .

—Ես ուշացայ, Արփեն ջան, գիտես, ես եկայ ձեզանից մի քիչ ոսպ ուզելու, որ «տօլմին» ակ անենք։

—Հա, Տիրան ջան, մայրս ձեր բաժինը վերցրել է, սպասէ, գնամ բերեմ. բայց քո ոտքերդ կ'մրսին. գնա՝ մեր օդէն, ես այնտեղ կ'բերեմ. . .

—Չէ՛, Արփեն, ես յետացայ, մայրս կ'բարկանայ։

Արփենիկը իր կարեկցութեանը բաւականութիւն չ'ստացած՝ հեռացաւ. իսկ Տիրանը բոբիկ ոտքերը ձնի վերայ վեր ու վար անելով մնաց դռանը։ Արփենիկը երբ ոսպը ձեռին դառաւ Տիրանի մօտ, հարցրեց.

—Տիրան, գուլպայ ճարեցի՞ ես «կախանի համար։

—Ես էլ այդ պիտի ասէի, Արփեն, բայց գուլպայ դու պէտք է ճարես, մենք չունինք։

—Լա՛ւ լա՛ւ, ես կ'ճարեմ, Տիրան, մենք շատ ունինք, գո՛ զնա, ոտքերդ մրսան։

Արեգակը մայր մտնելուն պէս, Տիրանը գնաց Արփենիկի մօտ. . .

—Սպասէ, Տիրան, գնամ հօրս ոտնամանները բերեմ հագի, որ ոտքերդ չ'մրսին—ասաց Արփենիկը։

Տիրանը դեռ չ'խօսած, կատարո՛ց նա իր խօսքը։ Տիրանը ոտնամանները հագաւ և երկուսով բարձրացան կատարները։

—Տիրան, առաջ գնանք Հեքիմենց էրթկին կտի՛նք. էջ, ասաց Արփենիկը։

—Ի՞նչու Արփեն, Իշխանենց տի՛նինը աւելի շատ կտայ։

—Լա՛ւ, առաջ գնանք այնտեղ։

Նրանք դիմեցին վերջինին, գուլպան երթկից ներս կալեցին ասելով.

—Շնորհաւոր նոր տարի։

Ո՜րքան ուրախացան, երբ գուլպին բերնէբերան լեցը տեսան համեղ մրգերով։ Նրանք երկար ժաւանակ շարունակում էին, երբ Արփենիկը հարցրեց։

—Ինչու՞, Տիրան, երիտասարդները կոշերով են (գոգդայ) կախան ման գալիս։

—Նրանք էլ գինի են հաւաքում, որ վաղը ուրախութիւն

անեն, որպէս զի ողջ տարին ուրախ անցնի։

Մութը գետինը ընկաւ, նրանք էլ գործերը աւարտած վերադարձան տուն։ Տիրանը երկու բաժին արաւ միրգը, բայց Արփենիկը բաժին չառաւ։

—Մայրս կ'բարկանայ, Տիրան,—ասաց նա—եթէ լսէ որ ես կախման եմ մեր եկել։ Ես հօ մրգի համար մեր չեկայ, շատ եմ սիրում կախման մեր գալ, եթէ ոչ, մենք տասը արկղ միրգ ունինք, ուտող չ'կայ. . .

Տիրանը նոյն երեկոյեան տեսնելով՝ որ հայրը սովորականին հակառակ փայտը երեկոյեան է ջարդում, հարցրեց։

—Մայրիկ, ինչո՞ւ հայրս մթանս է փայտ ջարդում։

—Որդիս, նոր տարուան օրը փայտ չեն ջարդիլ, կուտ կամ ընկուզ չեն կոտրիլ, տաւարի ոտ կ'կոտրուի։

Տիրանը մօր համոզական խօսքերը լսելուն պէս, սկսեց իր ընկուզները կոտրել և միւս աւուր համար պատրաստել։ Կէս գիշերը նոր էր անցել, մայրը զարթնեցուց Տիրանին։

—Վեր կաց, որդիս, եթէ այս գիշեր շատ քնիս, ողջ տարին քնի թմրութիւն կ'թափուի քո վերայ, շատ քնոտ կ'լինիս, նորա համար ամեն տարի էս օրը գիշերով են զանգերը հարում, որ գիւղացիք վաղ զարթնեն միշտ և գործի լինեն։ Ժամերգութիւնը վերջացաւ։ Տիրանը հօր հետ վերադարձաւ տուն և մօր ձեռը համբուրելով՝ ասաց. «Շնորհաւոր նոր-տարի». մայրն էլ երեսները ջերմ սիրով համբուրեց, աւուր պատշաճի օրհնութիւններ թափելով. . . Ապա հօր հետ գնացին Շահենենց տունը տարի շնորհաւորելու։ Այնտեղ էր նաև Խ. քահանան, ուստի Տիրանը չը համարձակուեց իր նոր վարժապետի մօտ խօսել Արփենիկի հետ։ Նա մօտեցաւ նախ վարժապետին՝ և ապա միւսների

ձեռները խոնարհութեամբ համբուրեց և ձեռները կրծքին դրած՝ կանգնեց անկիւնում, մինչև որ վարժապետը թոյլ տուեց դուրս գնալու։ Նա Շահենենց տնից դուրս գնալուն պէս, ուղիղ գնաց իրանց տունը։ Մայրը նրան տնպահ կարգեց, իսկ ինքը գնաց փոխադարձ տարի շնորհաւորելու դրացոց ու բոլոր բարեկամաց։ Տիրանը իր եղբայրների հետ նստաւ սեղանի շուրջը, որը պատրաստել էր մայրը զանազան պասուց կերակուրներով, գնացող գալողների համար*)։ Արեգակը հորիզոնից նոր էր դուրս եկել, Արփենիկը գնաց Տիրանի մօտ փոխադարձ տարի շնորհաւորելու։ Նա երբ շնորհաւորեց Տիրանի տարին՝ մի նաշխուն խնձոր տուեց նրան։

—Այդ խնձորը ես վարդավառի օրն եմ նաշխել համեմի տերևներով, ասաց նա—ես այդ խնձորը ո՛չ մէկին լայեղ չ'տեսայ, վերջը քեզ վիճակուաւ, Տիրան։

Տիրանը դժգոհ էր, որ ինքը նաշխուն խնձոր չունէր Արփենիկին նուէրելու համար. . .

—Տիրան ջան, ես գնամ, մայրս պիտի փոխադարձ տարի շնորհաւորելու գնայ, տանը ոչ ոք չի մնայ, մնաս բարով. . .

Ծ Ն Ո Ի Ն Դ.

Բ.

Կէս օրը անցաւ թէ չէ, ծննդեան ճրագալոյծ երեկոյեան զանգերը հարեցին։ Տիրանը խսկոյն դուրս թռաւ տունից եկեղեցի գնալու։

*) Սրբազան պարտականութիւն էր նոր-տարուն միմեանց տուն այցելելը, տարի շնորհաւորելու համար։ Այդ սովորութիւնը դեռ խստութեամբ կատարվում է Կաղզվանում։

—Արփենը, դուն էլ եկեղեցի՞ ալեռի՞ դաս։ Հարցրեց Տիրանը ճանապարհին նրան հանդիպելիս։

—Պիտի գամ, Տիրան, հայրս գնաց լինձ համար նոր ոտնամաններ գնելու, բերէ հագնիմ, որ գամ։

Տիրանը նկատեց, որ Արփենիկը յետանալու է, թողեց և գնաց։ Հարս, աղջիկ, ծեր և երիտասարդ հասկանալով օրուան վսեմութիւնը, ուրախ և ջերմեռանդ սրտով դիմում էին եկեղեցի։ Ժամերգութիւնը վերջացաւ։ Տիրանը տուն վերադարձաւ։ Նրանց սեղանը ճոխ չէր. երասխի ձկից խորոված, բղլուրէ փլաֆը և հերիսէն սեղանի լրացուցիչ կերակուրներն էին։ Տիրանը սեղանի մօտ նստելուն պէս, ձեռը մեկնեց շտապով հերիսին։

—Սպասէ՛ Տիրան, առաջ պէտքէ ձկնով բանաս պասդ— պատուիրեց մայրը—«Շնորհաւոր ծնունդ» ասա ու կեր։

Տիրանի հայրը, որ արդէն պասը ձկով լուծել էր, վեր առաւ գինով լի գաւը, կկլացնելով լցրեց փոքրիկ կաւէ սնակը(մուշուրպայ)և սկսեց խօսել այս պատշաճաւոր խօսքերը։

—Շնորհաւոր ծնունդ, մեզ և ձեզ մեծ աւետիս։ Տէր Յիսուսը իւր ծննդեան շնորհիւ ամենայն հաւատացեալ քրիստոնեաներին ազատէ անօրէնների գերութիւնից և ապա մեր Հայոց ազգին ազատէ բարբարոս քրտի, Թուրքի ձեռքէն, որ մենք էլ կարողանանք քրիստոնէական օրէնքները համարձակ պաշտել։ Վաղուան օրը Ս. Էջմիածնում և այլ քաղաքներում խորհրդի համաձայն խաչով, խաչվառներով և ծնծաղներով փառաւորապէս խաչը ջուրը կ'ձգեն գետի կամ առուի մէջ, իսկ մենք չենք կարողանում, Թուրքերը արգելում են, ասում են մի՛ աղտոտիլ ջրերը։ Մեղայ Աստուծոյ։ Նա սրբեց արտասուալի աչքերը և էլի շարունակեց.

—Աստուած էլէ մեզ մոռացել, աղօթենք նորան, որ գոնէ

գթայ իր Ս. Խաչին և փրկի անօրինաց անարգանքներից։

—Հայրիկ, ինչո՞ւ Թուրքերը մեզ ծեծելիս, մենք էլ նրանց չենք ծեծում, մէջ ընկաւ Տիրանը, յիշելով իր ծեծուիլը Թուրքի լակոտներից։

—Ա՛խ, Տիրան ջան, դու դեռ փոքր ես, երբ մեծանաս, դու կ'հասկանաս. . . ուրախ օրերն էլ մենք տխուր ենք անցնում, Աստուած կանչենք, որ գոնէ այսպիսի հրաշալի օրերին ցամաքեցնէ արտասուքը մեր աչքերից։

Նա աչքերից հոսող կայլակները սրբեց և խոր հառաչելով ձեռք մեկնեց սեղանին։ Հետևեալ օրը, ժամասացութիւնից վերջը խաչը ջուրը ձգեցին եկեղեցու մէջ, անշուք կերպով, և ժողովուրդը ցրուաւ։ Նոյն օրը գիւղը արտաքին տեսքով խաղաղ էր ինչպէս մի հասարակ օր, իսկ ներքին կողմից ուրախութեան մէջ վիսում էր։ Արշաւունեաց առատ գինին գիւղացոց մոռացութեան էր տուել անթիւ ցաւերը, ամեն տեղ պարերգութիւններ էր. . .

Տիրանը իւր օրերը անցնում էր դլխաւորապէս Շահենենց օդում, որովհետև նրա վարժապետը շարունակ այնտեղ էր լինում։ Քիչ էր պատահում, որ Տիրանը ազատուած վարժապետի ճնշողութիւնից, միանում էր իր անբաժան ընկերի (Արփենիկի) հետ և վայելում էին ուրախ ու երջանիկ ժամերը։ Այդ լինում էր այն ժամանակ, երբ վարժապետը գիւղից բացակայ էր, կամ տկարանում էր և կամ քնում էր։

Ս. ՍԱՐԳԻՍ ՊԱՍԸ.

Գ.

Վաղը Սուրբ Սարգսի պասն է, Արփենիկ, ասաց Տիրանը,

երբ իր վարժապետը օդի տաքութիւնից վերջապէս գլուխը դրեց խոտալի մնարի վերայ ու ննջեց։

—Տէրտէրս ասում է, որ հինգ օրն էլ ծոմ պահեմ, Ս. Սարգիսը ինձ շնորհք տայ. լաւ կարդամ։

—Հապա ինչո՞ւ, Տիրան, միջնաթաղցոնց Արսէնը ամէն տարի հինգ օրն էլ ծոմ է պահում, չէ՞ որ նա չէ կարդում։ Գիտես, Արփենն ջան, ազապ տղերքից շատերը պահում են, ուրբաթ երեկոյեան աղի բուլուճ են ուտում և առանց ջուր խմելու քնում, որպէս զի աղջիկները գիշերը ջուր տան, և ում աղջիկը ում ջուր տայ, նա կ՚լինի նրա նշանածը անշուշտ, մայրս այդպէս է ասում։

—Բա քեզ ո՞վ պէտք է ջուր տայ, ես տամ։

Արփենիկը վերջին հարցը այնպէս արաւ, որ կարծես գաւաթով ջուրը ձեռին էր, որի համար Տիրանը շփոթուեց, չ՚գիտէր ինչ պատասխանէր։ Մինչդեռ Տիրանը յարմար պատասխան էր մտածում, վարժապետը զարթնեց և նրանց խօսակցութիւնը թերի թողեց։

Տիրանը իրաւունք չունէր ծոմ չ՚պահելու, քանի որ վարժապետն էր պատուիրել. կամայ ակամայ հինգ օր էլ պահեց, թուլացաւ սաժասպառ եղաւ խեղճը։ Ուրբաթ երեկոյեան մայրը նրան աղի բուլուջ տուեց որ ուտէ, կարծելով թէ՝ ծոմ պահելու իսկական նպատակն այն է։ Առաւօտեան զարթնելուն պէս մայրը հարցրեց.

—Քեզ ո՞ւմ աղջիկը ջուր տուեց, Տիրան ջան։

—Ոչ ոքի։

Նա խափեց մօրը, չ՚պատմեց գիշերուայ տեսած երազը։ Մայրը շատ տխրեց, որ իր որդուն ջուր տուող չէ եղել, ուստի յուզուած՝ մի պատառ հացի մէջ փոխնդէ խաշել դրեց և տուեց Տիրանին, ասելով.—

—Բարձրացիր կտուրը, դիր մէկ բարձր տեղ, իսկ գու թաղնուիր և ծածուկ նայէ, տես պատառդ ո՞ր է տանում ագռաւը։

Տիրանը այդ բանը հասկանում էր մօր չափ, ուստի առանց խօսելու դուրս գնաց կատարելու մօր պատուէրը։ Սակայն ագռաւի զուշակութիւնը դեռ մօրը չ՚յայտնած, գնաց Արփենիկի մօտ գիշերուայ տեսած երազը նրան պատմելու։

—Տիրան, ո՞ւմ կտուրի վերայ ագռաւը կերաւ պատառդ, հարցրեց Արփենիկը երբ Տիրանին տեսաւ։

—Արփենն ջան, իսկի չ՚տեսայ, անպիտան ագռաւը տարաւ հեռու։

Արփենիկը տխրեց, որ իրանց կտուրի՞ վերայ չէ կերել. . .

—Բա չես ասում Արփենիկ, ինչ զարմանալի երազ եմ տեսել այս գիշեր. . .

—Ի՞նչ երազ, Տիրան։

—Մայրս երեկոյեան աղի բուլուջ տուեց կերայ ու քնայ-սկսեց նա։ Կէս գիշեր չէր եղել, ծարաւեցայ։ Տեսնում եմ կանաչազարդ պարտէզներ, ուրտեղանք ծառերը պտուղներով բեռնաւորուած՝ կռացել էին գետին, և որոնց միջից բղխում էին պարզ աղբիւրներ, թռչունները ծառից ծառ թռչելով ՝ լվում էին, բայց դրանցից ոչ մէկը ինձ չէր դըրաւում։ միայն աղբիւրների քչքչունից սիրտս թռվռում էր։ Ես փափադով մօտեցայ աղբիւրին, որ ծարաւս կոտրեմ, բայց իսկոյն չորացաւ, խրամ դառաւ. . . որին մօտեցայ, ցամաքեց. . . վերջապէս վազեցի Երասխը, որ գոնէ նրանից ջուր խմեմ, ո՜հ, այնտեղ էլ մի կաթիլ ջուր չ՚կար։ Ես տխուր սրտով կրկին վերադարձայ և ի՞նչ եմ տեսնում, պարտէզները կորցրել էին իրանց գեղեցկութիւն-

ները, աղբիւրները չկային. իսկ դու, Արփեն Ջան, այն գառամեալ տեսարանների միջից ժպտալով՝ գալիս էիր դէպի ինձ մի գաւաթ ջուր ձեռիդ։ Ես ուրախութեամբ վազեցի դէպի քեզ, որ խլեմ ձեռիդ ջուրը և ծարաւս կոտրեմ. բայց աւա՜ղ, յանկարծ վերահասան մի քանի թուրք հրոսակներ, խփեցին քեզ, գետին գլորեցին ու անյայտացան։ Օ՜հ, Արփեն Ջան, երկար ճակատդ շոյում էի, իսկ դու չէիր սթափվում։ Գաւաթի մէջ մի կաթիլ ջուր չէր մնացել, որ սրտիդ լցնէի. ես հէնց նոյն րոպէին ճուացի «ջուր»։ Հայրս լսել էր ձայնս, զարթեցուց, ջուր տուեց խմեցի և այն սարսափելի երազէն ազատուայ.

—Տիրան Ջան, այդ ինչ վատ երազ է, ի՞նչ է նշանակում, որ ես չկարողացայ քեզ ջուր հասցնել։

Տիրանը չկարողանալով պատասխան գտնել խօսակցութիւնը փոխեց։

—Դու էն ասա, Սրփենիկ, քո մայրն էլ դռան յետևը աչուր ու միրգ դրի՞ էր գիշերս։

—Իմ մայրը դրել էր, Ս. Սարգիսը միրգը տարել էր, ձիու ոտքի տեղն էլ նշնել էր ալիւրի մէջ։

—Այո, Տիրան, իմ մայրն էլ էր դրել, բայց սև երես Աւօն գիշերը գողացել էր։

—Հոտաղը։

—Այո։

—Ի՞նչպէս։

—Միրգը դնելիս տեսել էր, երբ որ մենք տեղերս ենք մտել քնելու, կամաց դուռը բաց է անում, մայրս լսում է դռան ձայնը, հօրս խմաց է տալիս, կարծելով թէ՝ ներս մտնողը Ս. Սարգիսն է, նրանք ուրախացած վրայ են հասնում, որ հարբուրեն փեշերը։ Աւօն վախից ճչում է և իր

գողութիւնը պարզվում է։ Առաւօտեան հայրս խլոյն տնից դուրս վռնտեց նրան։

—Շատ լաւ է արել, այդ լկտին շատ սատանայ է, գետնի՞ Արփենիկ, ասում են-ողջ գիշերները չէ քնում, ո՛չ մարդկանցից է վախենում և ո՛չ խորտաղներից։*) Շարունակ մտն է գալիս Պետրոս-բերդցոց դռան երթկին՝ Աննային տեսնելու համար։ Մայրս ասում է—Աննային սիրում է այդ անճոռնին։

—Է՛հ, Տիրան, ո՞վ չէ սիրում Աննային, ես էլ եմ սիրում նրան, նա շատ լաւ աղջիկ է. պատասխանեց Արփենիկը, առանց Տիրանի միտքը հասկանալու։ Տիրանը ուզում էր պատասխանել Արփենիկին, բայց վարժապետը քնից զարթնեց, նորան դասի կանչեց և երկու սերտ ընկերներին կրկին զատեց միմեանցից։

ՏԵԱՌՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԸՆԹԱՑ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՄԱՅՐԸ ՏԻՐԱՆԻՆ ԱՍԱՑ.

Դ.

Տեառընդառաջի նախընթաց երեկոյեան մայրը Տիրանին ասաց.

---

*) Խորտաղ—նշանակում է մեռել—յարուց (մահմետականի)։ Բոլոր Կաղզուանցիք ընդունելով որպէս իրողութիւն՝ պատմում են իբր թէ՝ մի ժամանակ մահմետականների մեռելները կենդանանում են եղել ու զանազան կենդանիների կերպարանք ստանալով մենաւոր մարդկանց վախեցնում են եղել, սակայն այդ անախորժութիւնը վերջանում է, երբ նորանք Հայերից սովորում են մի քանի թաղման աղօթքներ։ Ես փոքր էի, մայրս միշտ մի-ևնոյն խորթալաղներով կը վախեցնէր չարութիւններս դադարելու համար, երբէք դեռ այն ժամանակ կար։

—Բարձրացիր կտուրը, Տիրան, երթիկ-կալերը ցած բեր, քանի տղերքը չեն գողացել լախտոռ կամ «տէրնդեզ» վառելու համար։

Տիրանը մօր պատուէրը կատարեց թէ չէ՝ զանգաղները հարեցին. իսկոյն գնաց եկեղեցի, որպէս զի ինքը փողերը (սաղմոս) տէր վարժապետի հրամանին համաձայն։ Երբ նախատօնակը սկսեցին կատարել, քահանան մամ բաժանեց կարգով կանգնած նորապսակ երիտասարդներին։ Ժամերգութիւնը վերջացաւ։ Տիրանը վարժապետի հետ դուրս եկաւ եկեղեցիէն։ Գիւղի մանուկները հաւաքուել էին եկեղեցու գաւիթը, մի բոցավառ խարոյկ էին վառել, և մի մի խոտէ լախտի (թուլա) ձեռքերում պատրաստի բռնած՝ խփում էին եկեղեցուց դուրս եկող նորապսակ երիտասարդներին։ Տիրանը զրկուած էր այն երջանիկ խմբից, երբ տեսաւ նրանց՝ նախանձուեց և հարցուց իր վարժապետին.

—Ինչո՞ւ, վարժապետ, երեխայքը միայն նորապսակներին են խփում։

—Որովհետև, Տիրան, ինչքան որ ցաւ, ցասում, պտղոց, արմատոց սակաւութիւն է լինում, դրանք են պատճառը— պատասխանեց վարժապետը։ Տիրանը ցանկանում էր հարցնել թէ՝ ինչո՞ւ. բայց չհամարձակուեց հարցը երկրորդել. իսկ վարժապետը կրկին խօսեց։

—Տիրան, տես, տղայոց խարոյկի ծուխը դէպի Զովհաթն է (Այգուոյ թաղի անուն) գնում, այդ նշանակում է՝ որ այս տարի այնտեղ պտուղը առատ կ'լինի։ Դրանք ամենն էլ առանձին առանձին գուշակութիւններ ունին. երբ դու մեծանաս, այդպիսի խորհրդաւոր դիտութիւններ շատ կ'լցնեմ քո գլուխը։

Տիրանը վարժապետի բացատրութիւններից հրապուրուած՝ չէր իմացել ձեռի մոմը մարելիս, ուստի երբ նկատեց, բաժանուաւ նրանից և գնաց դէպի իր հասակակիցները, որ խարոյկից մոմը վառէ։ Նա մի թերթ լախտի էլ ինքը կերաւ մանուկներից ու գնաց տուն։ Տիրանը տուն գնալիս մի պառաւ դուրս եկաւ նորա առաջ և ասաց.

—Որդիս, բեր մեր ճրագն էլ կպցնեմ եկեղեցու կրակից, մեզնից գալով չէղաւ եկեղեցի այսպիսի հրաշալի երեկոյին։

Պառաւը ճրագը կպցրեց և օձիքը բռնելով աւելացուց։

—Վառէ օձիքս, որդիս, այդ է օրուան շնորհը. օձն էլ չի կարող մօտենալ։

Տիրանը կրակը տուն տարաւ թէ չէ՝ դուրս թռաւ փողոց, երբ Արփենիկը իրանց ճրագը ձեռին գնում էր Տիրանենց տնից կպցնելու։

—Տիրան, տեսա՞ր, Իշխանենց հարսին դուրս էին հանել պատեցնում էին «տէրնդեզի» շուրջը. այնպէս զարդարել էին՝ որ ոսկու արծաթի մէջ ծածկուել էր. . .

—Էհ, Արփեն ջան, մեզ ինչ, դու շուտ գնա՝ ճրագը կրպցրու տար, որ գաս մենք էլ տէրնդեզ խաղանք. տեսնում ես, ամեն դռան էլ վառել են։

Նա հաւաքեց մի քիչ կրճոն, վառեց և սկսեց պտտուել թռչկոտել խարոյկի վերայից Արփենիկի հետ, որ արդէն վերադարձել էր։

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ.

Ե.

Հասան Բարեկենդանի օրերը և բառի բուն նշանակութեամբ կենդանութիւն տուին մարդկանց։ Տիրանի վարժապետը մեղմացուց իր խստութիւնները՝ ոչ թէ Տիրանին

հանգիստ տալու, այլ իր զուարճութիւնները չ'խանգարելու համար: Շահէնենց օդում ամեն օր, առաւօտից մինչև իրիկուն ուրախութիւնը վխտում էր: Հայաստանին արժանի պարզ ու կարմիր գինին ջրից առատ գործ էր դրվում: Ամեն մի տուն մի կարաս գինի ունէր դեռևում թաղած, բաց էին անում ծեփը և լիուլի բանեցնում բարեկենդանին: Տիրանի հայրը նոյնպէս բացել էր իրանց կարասի ծեփը և ամեն օր մէկ կոշ լցնում, տանում էր Շահէնենց օդէն ուրախութիւնը շարունակելու: Աշըղ Վարոսը առաւել կենդանութիւն էր տալիս գիւղում իր սիրահարական հեքեաթներով, երգերով և առածներով: Նա օրը մի օդայում հեքեաթ էր ասում, շատ ախորժակով լսում էին նորան գիւղացիք. միայն չէին լսում Տիրանն ու Արփենիկը, երբ հերթը գալիս է Շահէնենց օդէն երգելու, որովհետև նրանք չէին հասկանում աշըղի տաճկաբարբառ երգերի միտքը, ուստի առանձնանալով մի անկիւն՝ զանազան խաղերով էին զբաղվում: օրինակ—միջի մատ, խնամի, մի կրակ տուր—և այլն: Իսկ երբ որ աշըղ Վարոսը բացակայ էր լինում Շահէնենց օդից, Տիրանն էր զուարճացնում օդի մարդկանց իւր երգերով: Նորա հօր ուրախութեանը չափ չ'կար, երբ բոլորը գովասանքներ էին թափում իւր որդու գլխին, նա մանաւանդ, երբ Շահէնենց Գրիգորն էր գովում Տիրանին.

Բուն բարեկենդանին բուն կէտին հասցրին ուրախութիւնը: Իսկ պասի երկուշաբթի օրը աւելի ու աւելի: Առաւօտեան ժամերգութիւնը վերջացաւ թէ չէ՝ շտապով գնացին միմեանց պաս շնորհաւորելու, և ապա կրկին ուրախութիւնն սկսեցին: Բայց այս անգամ փողով (զուռնայ) ու թմբուկով նշանած աղջկներու մօտ տնպար կազմեցին:

Տիրանն ու Արփենիկը այդպիսի ուրախութիւններ շատ էին սիրում, ուստի գնացին Միջնաթաղցոնց տունը, ուր պարերգութիւնը եռում էր: Արփենիկը խառնուել էր իր հասակակիցների հետ և պար էր խաղում: Ուրախութիւնը կատարեալ եռում էր, երբ երկու թուրք ոստիկաններ (զաբթիա) գնուած՝ ներս ընկան և իսկոյն դաշոյնով (խանջալ) ճղեցին թմբուկը գոռալով.

—Անհաւատներ, չէք լսել, որ մօտ օրերս մեռաւ Հասան Աղի որդին-Իւսուֆ բէկը. փոխանակ սուգ կապելու, փողով թմբուկով քէֆ էք անում, հա՞, անհաւատ շներ:

Բոլոր ներկայ եղողները սարսափի մէջ ընկան, ջուր կտրան: Հարս ու աղջիկ անկիւններում կկզթել մի բուռ էին եղել: Արփենիկը շփոթուելուց՝ չէր կարողացել ծնողաց մօտ հասնել, կպել էր Տիրանից ու դողալով խնդրում էր.

—Տիրան ջան, ինձի տար հայրիկիս մօտը, ես վախենում եմ:

Իսկ Տիրանը նրան սիրտ էր տալիս, թէև ինքն էլ էր երկիւղից սառել, վասն զի բանից անգամ տեսել էր իր խեղճ հօրը ծեծելիս նոյն բարբարոսները: Սակայն որքան վախենում էր, այնքան նորա մէջ զարթնում էր կարեկցութեան խանդը: Եթէ Արփենիկի հայրը երկար չ'աղաչէր, չ'ինդրուէր ոստիկաններին, իսկոյն պէտք էր տան տիրոջը քաշ տային բանտը: Նա իր ազգու համոզմունքներով զեջուց նրանց բարկութիւնը, բերանները քաղցրացուց ու հեռացրեց, միայն իրաւունք առնելով՝ որ դռնէ երգելով պարը շարունակեն: Այդպիսի անցքեր սովորական լինելով՝ հասարակութիւնը շատ չ'վրդովուեց, շուտով մոռացան և շարունակեցին նորից ուրախութիւնը:*) Անցաւ այն օրն էլ

*) Վա՛յ, թէ մի տաճկի պակէր, թէկուզ նա լիներ մի հո-

եկան մեծ պասի տխուր և երկար օրերը։ Դադարեցին ուրախութեան ձայները, գործը սկսուեց ամեն ուրեք։

ԿՈՏՐԱԾ-ԿԱՄՈՒՐՋԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ։

2.

Կամաց կամաց դաշտերը բացուեցան ձնից, ծլան, ծաղկան և գործը եռաց ամեն տեղ։ Տիրանի հայրը ամեն օր գնում էր աշխատելու, իսկ ինքը իրանց տաւարն էր տանում արածացնելու։ Նա ուրախ էր, որովհետև ազատուած վարժապետի թունդ ապտակներից՝ վայելում էր բնութեան զուարճալիքները, ողջ օրերով ծաղկանց վերայ թաւալ—թաւալ էր գալիս։ Միայն Արփենիկի բաժանումն էր նրան վշտացնում, և եթէ դաշտում մի գործ էր կատարում, Արփենիկի սիրուն էր նուիրում, որով գործը աւելի հեշտ և եռանդուն էր կատարում։ Երբեմն էլ իրանց տաւարը խառնում էր Արփենիկենց հոտարին, իսկ ինքը հօր հետ գնում էր այգի և մինչև իրիկուն անբաժան խաղում էր Արփենիկի հետ։

Մեծ-պասի վերջին օրերումն էր։ Տիրանի հայրը Շահէնենց բանւոր էր, որ բաց էին անում խաղողի ծածկած որթերը։ Տիրանն ու Արփենիկը նոյնպէս այնտեղ էին և ջուր էին տանում, կամ այլ պահանջմունքներ էին կատարում բանողներին։ Այն ժամանակ գարունը զանազան ծաղիկներով վերմակ էր փռել այգուց մակերևոյթը, ուր նրանք անհոգ զուարճանում էին մի զոյգ աղաւնու պէս։

վեւ, գոնէ մի շաբաթ թմբուկի ձայն պիտի չլսուէր Հայերի մէջ. իսկ եթէ մեռնողը մի նշանաւոր անձն էր, պրծան Հայերը. ամիսներով լռում էին քնարներն ու թմբուկները.

Երբ որ ճաշի ժամանակ բանւորները հացի նստան, Արփենիկի հայրը կանչեց նրանց (Տիրանին ու Արփենիկին) իր մօտ խաղողնոցի շրջանը և ասաց Տիրանին, որ փորէ գետինը, իւր ցոյց տուած տեղը։ Նա չորս մատնաչափ փորեց թէ չէ՝ գինու կարասի խուփը երևաց. խուփը վեր առաւ, գինին ոսկու պէս փայլում էր կարասի մէջ։ Արփենիկի հայրը սափորը թաղեց գինու մէջ. լեբը լցրեց պտղախառն գինով և մի մի ճութ խաղող էլ Տիրանին ու Արփենիկին տուեց, իսկ սափորով գինին տարաւ բանւորներին, կրկին կարասի բերանը փակելով։ Բանւորները կերան, խըմեցին ու կրկին սկսեցին եռանդով աշխատել։ Արեգակը երբ իջաւ «Աչադաղ» սարի գագաթը (Բարդող լերանց վերջերից է), Արփենիկի հայրը թող տուեց բանւորներին ասելով.

—Բաւականէ, զաւակներս, վաղը ծաղկաղարդ է, գնացէք պատրաստուեցէք եկեղեցի գնալու համար։

Տիրանը հօր հետ հեռացան դէպի իրանց այգին, որը գտնվում էր Երասխի ափին և Շահէնենց այգուն կից։

—Հայրիկ, ինչո՞ւ մենք գինու կարաս չունինք այգու մէջ թաղած. ասաց Տիրանը, երբ հասան հօր հետ իրանց այգին։

—Մենք էլ ունինք, որդիս, բայց մերը դատարկ է մեր գինին ծախեցինք, չմնաց՝ որ լցնէինք այգու կարասը. պատասխանեց հայրը վշտալի ձայնով։

—Հապա ինչո՞ւ Արփենիկենցը լեբն է, կրկին հարցրեց Տիրանը։

—Նրանք հարուստ են, զաւակս։

Նա լռեց. բայց իսկոյն տխրութեան կնճիռները ստուարացան նորա խոհուն դէմքի վերայ։ Տիրանը համարեա չը

հակացաւ հոր ասածը, ուստի այլ ևս ոչինչ չ'խօսեց։ Նը-
րանք լուռ և տխուր մտեցան Երասխի բարձրավանդակ
եղերքին և կանաչների վերայ նստան։ Հայրը ծխատուփը
հանեց և սկսեց ախորժակով ծխել, կամենալով իւր սրտի
դառնութիւնը, թախիծը թափել, վանել իրանից. նորա
դէմքը ընդունեց մտայոյզ կերպարանք։ Տիրանը երկիւղով
դիտում էր Երասխի կատաղած ալիքներին, երբ հայրը նը-
րան ասաց.

—Ա՜խ, Տիրան ջան, կար ժամանակ, որ մենք էլ երջա-
նիկ էինք, հարուստ էինք, այսպէս աղքատ ու թշուառ
չէինք. մեր անչափ հարստութիւնը եկան աւարեցին (թա-
լան) տարան. հարիւրաւոր քրդեր, թուրքեր հարստացան
մեր ունեցածներով, այժմ մենք աղքատ ենք մնացել. . .

Նա խորունկ հառաչեց և կարճ լռելուց յետոյ, կրկին
շարունակեց։

—Եղել է ժամանակ, որ մենք էլ տէր ենք ունեցել մեր
վաստակած քրտնց արդիւնքները այժմեան պէս չեն կա-
ղոլանում եղել յափշտակել. . . Հա՛, Տիրան ջան, ես ուզում
էի այն քանդուած կամուրջի պատմութիւնը քեզ անել,
(ցոյց տալով Երասխի վերայի աւեր կամուրջը)։ Հին ժամա-
նակին երբ մենք թագաւոր ենք ունեցել, մեր թագաւոր-
ներից մէկին Պարսից շահը խաբեբայութեամբ բանտ է դը-
նում և բաղում զօրք է ուղարկում Հայոց երկիրը աւերե-
լու ու հայ ց թագուհուն բռնելու, որն շատերի հետ պատ-
րաստուած է լինում «Խանդուդա-բերդում» (կապոյտ-Ար-
տագերս)։ Պարսից զօրքը մի դաւաճան հայի առաջնորդու-
թեամբ երկիրը աւերակ դարձնելով՝ գալիս է դէպի այս
կողմերը։ Մեր գիւղացիք լսում են նոցա գալը, սաստիկ
երկիւղի մէջ են ընկնում. բայց այն միջոցին մի պառաւ

կնոջ մինուճար տղին եօթ տարուայ բարկ քացախ է լցնում
կամուրջի վերայ, որից իսկոյն կամուրջը մէջ տեղից կտրը-
վում է։ Ա՜հա, որդիս, նրա բեկորները, որոնք ինձ յիշեցնել
տուին այս պատմութիւնը, և հէնց դրա անունով էլ մեր
այդուց թաղը «Կատրաճ-կարմունջ է» ասվում։

Նա երեսը շուռ տուեց դէպի հաստաբուն ծառը, սրբ-
ուեց արտասուալի աչերը, Տիրանից դաղտնի, և ընկղմուա-
ւ խորին մտածութեան մէջ։

—Հայրիկ, մութն է, զանգերը հարեցին, դու կարելի է
չ'իմացար, վո՛ր կաց գնանք եկեղեցի. ընդհատեց լռութիւնը
Տիրանը։ Նրանք տխուր տրտում դիմեցին դէպի գիւղը։

—Տիրանը առաւօտեան նոյնպէս շատ վաղ գնաց եկեղեցի,
որ «ճաճանակ» ստանար։ Ժամերգութիւնը վերջացաւ թէ
չէ՝ քահանան մի պրակ փթթած ուռենու ճիւղեր օրհնեց
ու բաժանեց մանուկներին։ Նա ճաճանակը ստացաւ և
վազեց ճաճանակ ման գալու։ Առաջ գնաց Արփենիկենց
տունը։ Արփենիկի մայրը նրա դրպանները լիք լցրեց կար-
միր ձուերով. իսկ հայրը մի լաւ գլխարկ տուեց (ֆէս), որ
մի օր խոստացել էր Տիրանին, նորա լաւ երգեցողութեան
համար։ Ո՞ւրքան ուրախացաւ Տիրանը, նամանաւանդ՝ որ
Արփենիկը միշտ ասում էր նրան.

—Դէ՛ն դցիր այդ հին, անպիտան գլխարկդ, սիրուն խո-
պոպիկներդ (քեանքիւլ) գեղեցկութիւնդ էլ է տանում։

Զ Ա Տ Ի Կ

Բ.

Տիրանը յիրաւի տիրացու կոչուելու արժանի էր։ Նա

արդէն ջրի պէս քշվում էր փոխերը (սաղմոս) եկեղեցում ասելիս. բացի այդ և մի քանի հոգևոր երգեր էլ էր սովորել երգել: Նամանաւանդ վարժապետը նկատելով նրա աչքաբացութիւնը, տուեց նորան մի պոչաւոր կաղամբար թանաքաման (դիւիթ), որը դոտին խրած էր մանգալիս միշտ, որով առաւել արժանաւոր էր դառնում տիրացու տիտղոսին գիւղացոց աչքում, Զատիկը մօտ էր: Տիրանը իր կարծիքով առաջիկայ տօնին պատշաճ հագնուած էր, որովհետև այն ժամանակ բոլիկ չէր սովորականի պէս և թէ գլխին ուներ նոր գլխարկ. . . վերջապէս—զատիկը վերան ծրդել էր: Աւագ հինգշաբթի օրը մի քանի շաբաթներով հաւաքած մածունները ու հմերը՝ սկսել էին հարել իւղ պատրաստել: Այն օրը որքան շատ իւղ ստանան, այնքան առատ կ'լինին կաթնասունները նոյն տարում: Ծերունի ժամկոչը տնէ տուն շրջելով՝ թարմ կարագ էր ժողովում «Ոանաղուայի» համար: Ամեն տանտիկին ցանկանում էր իւղից բաժին տալ սուրբ խորհրդին մասնակից լինելու համար:

Տիրանը երբ իւղը (օրհնած) ձեռին եկեղեցիէն տուն էր վերադառնում, Արփենիկը ուրախ-ուրախ դիմաւորեց նորան օրհնած իւղ ստանալու:

—Ո՞ւրտեղ էիր, այսօր բոլորովին չ'երևացիր, Արփեն, հարցրեց Տիրանը իւղը տաղուց զկնի:

—Մայրս խնոցի էր հարում, ես էլ օգնում էի նորան, պատասխանեց Արփենիկը: Քո ոտներդ էլ լուացի տերտերը, Տիրան, հայրիկիս ոտները լուացել էր:

—Ո՛չ, Արփեն, ես դեռ փոքր եմ. . .

Տիրանը իր խօսքը դեռ չէր վերջացրել Արփենիկը մնաս բարով ասաց՝ ու հեռացաւ:

—Այսօր դեռ շատ բան ունինք անելու, գնամ վերջացրենք, վաղը մայրս բանի ձեռք չի տալ, սուգ կ'պահէ «յուդի ուրբաթնէ»:

Հետևեալ օրը Քրիստոսի չարչարանաց օրն էր, ուստի հասարակութիւնը շատ տխուր էր—սուգ էր պահում սովորականի պէս:

—Այսօր սգի օրէ, Տիրան,—պատուիրեց նորան վարժապետը, ողջ օրը պէտք է սուգ պահենք, չ'ծիծաղենք:

Նա մանրամասնաբար պատմեց Տիրանին, թէ՝ ինչ անզգթութեամբ Քրիստոսին չարչարեցին Հրէաները իր Յուդա աշակերտի մատնութեամբ: Տիրանի զգայուն սրտին խիստ ազդեց վարժապետի պատմութիւնը, ուստի շատ տխուր անցուց նոյն օրը Արփենիկի հետ:

—Վաղը Քրիստոս յարութիւն կ'առնի, մենք էլ կ'ուրախանանք, Արփեն ջան. . . Բայց դու էն ասա, վաղը «երկէն ծոմը» պիտի բռնես:

—Ինչպէս չէ, Տիրան, չէ՞ որ պէտք է ճաշակուիմ: իսկ մայրս ասում է առանց ծոմ պահելու ճաշակուիլը մեղք է 7 տարեկանից վեր մարդուն:

—Ուրեմն վաղը երեկոյեան եկեղեցի կ'գաս թէ չէ՞:

—Այո՛, կ'գամ Տիրան, դուն էլ երգեցողութիւն պիտի անես: Օ՛հ, Տիրան ջան, քո ձայնդ շատ քաղցր է թուում ինձ:

—Բացի երգելուց դիրք էլ պիտի կարդամ, ժամամուտ էլ ես պիտի բարձր ձայնով ասեմ: բայց ափսոս, որ «Գանելին» ձեռքէս առան. . .

—Ինչու, Տիրան, ով առաւ:

—Իշխանենց Մինասը պէտք է կարդայ: Հայրդ 15 ղուռուշ տուեց, որ ես կարդամ, բայց Իշխանենց Թորոսը 20 ղուռուշ արաւ իր տղէն Մինասը կարդալու համար. . .

Ըհ, գլողը տանի նրան, չէ՞ ամաչում, ահագին մարդ է դառել ասաց Արփենիկը...

Արեգակը տակաւին իւր ծիրանի շողերով ծիծաղում էր անամպ հորիզոնում, երբ Տիրանը վարժապետի հետ դուրս եկաւ եկեղեցիէն» Ճրագալոյց երեկոյեան և դիմեցին ուղղակի Շահէնենց տունը օրհնելու։

—Ողջոյն ձեզ, մեզ և ձեզ մե՛ծ աւետիս, Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց, ասաց քահանան, երբ տուն մտան. Տնօրհնութիւնից վերջը վարժապետը դառնալով Տիրանին՝ ասաց.

—Դուն էլ «Աւետիսն» ասա՛, Տիրան, որ հացի նստինք, բաւականէ, յիսուն օր համբերեցինք։

Տիրանը իսկոյն երգեց «Այսօր տօն է ծննդեան» երգը և «խորհուրդ մեծ» շարականը։ Նա երգելիս աչքերը ձգում էր Արփենիկի երեսին, որն ձեռքերը կրծքին դրած՝ անխօս կանգնել էր անկիւնում և իր ժպտալի աչքերը մերթ ընդ մերթ ձգում էր Տիրանի երեսին, յայտնելով իր սրտի զգացմունքները թէ Տիրանի քաղցր երգելու համար և թէ Իշխանենց Մինասի խայտառակ լինելու համար, որն Դանելին բերանացի (անգիր) կարդալիս մի քանի անգամ կմկմացել ու սխալուել էր։

—Տէր հայր, ասաց Արփենիկի հայրը, երբ բոլորուան համադամ կերակուրներով ճոխացած սեղանի շուրջը—Տիրանը շնորհալի տղայ է երևում, աշխատէ գիրը լաւ սովորեցնես, որ իմ գործերս նա կատարէ, գրէ, ճղէ, քեզ նեղութիւն չ'լինի այսուհետև։

—Ի՞նչես ասում, Գրիգոր, կատարեալ գիր է գրում Տիրանը, նա այնպէս տղայ չէ, որ մի բան սկսելիս չ'սովորի, ես էլ այնպէս սովորեցնող չեմ, որ սկսածս գործը շուտով դը-

լուխ չ'բերեմ։

—Փառաւոր մնաս, տէր հայր, ողջ գիւղն է վկայում քո գիտութեան համար։

Այսպէս աւելի սիրտ տուեց Արփենիկի հայրը քահանային պարծենալու։ Կերակուրների շատութիւնից Տիրանը մոլորուել էր, չ'գիտէր ո՞րից ուտէ, թէև նախ հաւկիթով պասը բացեց, որ շաղախուած է կանաչ սոխով, թարխունով և այլ անուշաբոյր համեմներով։ Արփենիկի հայրը ոեղանի մի զարդն էլ աւելացուց, գինով լի դաւը դնելով սեղանի վերայ։

—Օհրնուիս Գրիգոր, մի՞թէ դեռ գինի ունիս—ասաց քահանան և շտապով լցրեց կարմիր գինին կաւէ պնակը։

—Այո՛, տէր հայր, պատասխանեց նա, քեզ համար բաժկրցու եմ վերցրել, եթէ մեղք է բանացնելը, քաւէ այդ մեղքը։ Բայց այս էլ իմացիր՝ որ մնացողը բաւականէ բաժկրցուի համար մինչև նորը։

—Էլ ինչ կայ, որդի, Քրիստոս իր սուրբ յարութեան շնորհիւ առաւել աւելացնէ տանդ բարիքները. հարստութիւնդ երկար տևէ, որպէս զի սովորականի պէս շատ աղքատներ ու կարօտեալներ լինան քո օհրնուած սեղանից, և ինչ գիտութեամբ և թէ անգիտութեամբ մեղքեր ունիս կատարած՝ Աստուած թողութիւն շնորհէ։

Այսպէս անթիւ օրհնութիւններից վերջը, ախորժակով կոնծեց գինին քահանան։ Երբ Տիրանը իր վարժապետի հետ հեռանում էին Շահէնենց տնից, Արփենիկը մօտեցաւ նորան ու մի նաշխուն ձու տուեց, վառվռուն աչքերը ձգելով երեսին, որով կամենում էր յայտնել որ շատ բաներ ունի հարցնելու Տիրանից։ Երկուսն էլ կարօտով մնացին այն հրաշալի երեկոյին միմեանց հետ խօսակցելուց։

Անցան և զատկի զուարճալի օրերը: Մանր տղայքը զբկուան ձու խաղալուց: Այնուհետև հայրը սկսեց այգին օտել, իսկ Տիրանը ճաշ էր տանում նրան և Արփենիկի հետ երկար ժամանակով խաղում, զուարճանում էր:

ԽԱՂՈՂԻ ԶՈՂԻ-ԲԱՅՂՈՒՇԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՅՈՆՑ ԱՆՆԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Ը.

Մի զուարճալի օր էր: Տիրանը և Արփենիկը կանաչ զարդ այգու մէջ անհոգ վայելում էին բնութեան զուարճալիքները:

—Տիրան, հա՛, մոռացայ ասել, որ վաղը մենք պէտք է գնանք «Ս. Թորոս» ուխտ: Վաթոյենք, Զորեցոնք և Հեբիդնանք «Ս. Թորոս» ուխտ: Մենք իրանց հարսներուն պիտի բերեն զբօսանք (սէյրան), մենք իրանց հարսներուն պիտի բերեն զբօսանք (սէյրան), սև յարկի տակ մնալով. խօսեց վրա-վրայ Արփենիկը:

—Իրաւ, Արփենն ջան, նշանած աղջիկներու բանը շատ դժուար է, աշնանէն մինչև «Կանաչ-կարմիր» կիրակէն տը-ներում փակուած մնում էին:

—Բայց գիւղացիք պիտի Ս. Թորոս գան, կրկին խօսեց Արփենիկը, ուրեմն դու էլ կ'գաք, չէ՞:

—Այո՛, Արփենն, մայրս մի տարի մի աբաղաղ է մատաղ ասել, գաթան ու բաղաձներն էլ այսօր թխում է: Արշաւիրի աչքերն որ ցաւում են, Ս. Թորոսիցն է, գիտես Արփենիկ, ասաց Տիրանը համոզական կերպով—մայրս նետ է բանալ տուել, ասել են.—Ս. Թորոսին մատաղ ես ասել, ինչու՞ չես տանում:

Արփենիկը աւելի ուրախացաւ, որ Տիրանը պիտի ընկերակցէր իրեն ուխտադնացութեան:

—Արփենիկ, գնանք մեր «գինու ձողն» (որթերի կարգ) շրջանը, այնտեղ մանուշակներ շատ կան, քաղենք—ասաց Տիրանը:

—Ինչու՞ գինու ձող ենք ասում, Տիրան, հարցրեց Արփենիկը:

—Ասեմ թէ ինչու, Արփենիկ: Հայրս ասում է, որ իր պապերը հնձանում խաղողները ճմռելիս, բանողները քնել, մնացել են. այն ժամանակ գինին քամվում լցվում է գուբը և այնտեղից դուրս է թափվում ու գնում ձողից եօթ մարդեր ջրում է, դրա համար էլ անունը դրել են «գինու ձող»:

—Շատ զարմանալի բան չէ, Տիրան, անցեալ տարի հայրս խաղողները ճմռելիս, որ գինի շուտ շուտ չ'քաշէր կարասները չ'լցնէր, գուցէ մերն էլ գուբը լցուէր ու դուս գար հնձանից. . . Տիրան, ինչու՞ մանուշակի վիզը միշտ ծռուած է լինում, խօսակցութիւնը փոխեց Արփենիկը. ես շատ եմ սիրում մանուշակ, մանաւանդ երբ տեսնում եմ վիզը ծռուած, կամենում եմ համբուրել, սրտիս մէջը դնել. . .

—Մանիշակը վարդի հետ քոյր ու եղբայր են, պատասխանեց Տիրանը—շատ են սիրում իրար, կարօտը քաշելով, վիզը ծռած՝ սպասում է մանուշակը, որ վարդը բացուի, տեսնէն միմեանց, բայց անգութ արևը, քարասիրտ մարդկանց պէս թափում է իւր խստութիւնները և թառամեցնում է նորա նաղելի կեանքը:

—Դու շատ բաներ գիտես, Տիրան, ուրեմն ես էլ վիզս ծռեմ, չէ՞ որ ես քեզ մայրիկէս ու հայրիկէս շատ եմ սիրում, ասաց Արփենիկը մանկական անմեղութեամբ:

—Դու ինչու՞ ծռես, չէ՞ որ դու ամեն օր մեզ տեսնում ես,

կարօտդ առնում ես, երբ որ ես քեզանից հեռացայ, դու այն ժամանակ վիզդ կ'ծռես, Արփեն ջան։

Արփենիկը խոր հառաչեց. դուցէ այն հառաչանքը մառախլապատ ապագայի գուշակումն էր, և նա ասաց տխուր ձայնով։

—Բա ինչո՞ւ, Տիրան ջան, Պետրոս-Բերդցոնց Աննան միշտ վիզը ծռում է։

—Օ՜հ, Արփենիկ ջան, նորա ցաւերը շատ են. մայրս ասում է՝ որ նա սիրում էր Թորոսենց Մանուկին, Մանուկն էլ նորան։ Միթէ չէ՞, Արփենիկ, որ անօրէն Թուրքերը Մանուկին տարան Կարս կախեցին. . .

—Զէ՜, Տիրան, ինչո՞ւ, սարսափած հարցրեց Արփենիկը։

—Ուրեմն չէ՞ս յիշում։

—Ո՛չ։

—Ինչպէս դու տեսնում ես, Արփենիկ, սկսեց նա, Աննան շատ սիրուն աղջիկ է։ Մի Թուրք սիրահարվում է նորա վերայ և գիշեր ցերեկ աշխատում է մի կերպով փախցնել նորան բռնութեամբ։ Բայց Մանուկը դաշոյնը դուռին, հրացանը կողքին, անքուն հսկում է եղել իր Աննային։ Օ՜հ, նա այնպէս երիտասարդ էր, որ Թուրքի ձեռը Հայի աղջիկ դցէ՛ր. . . Վերջապէս մի գիշեր Թուրքը մի քանի հրոսակներով պաշարում է Պետրոս-Բերդցոնց տունը, բոլորովին արհամարելով Մանուկին։ Մէկ էլ «Թարխ» հրացանը բանում է Մանուկը իր թշնամու կրծքին։ Միւս ընկերները տեսնելով իրանց առաջնորդի սպանուիլը խիզոն փախչում են. . .

—Տիրան ջան, Թուրքերը Հայի աղջկան ինչո՞ւ են փախցնում, հարցրեց Արփենիկը, ընդմիջելով պատմութիւնը և

միևնոյն ժամանակը մոտեցաւ Տիրանին վախեցած։

—Է՜հ, դու մի՛ վախենա, Արփեն ջան, քանի ես քո մոտն եմ, ո՛չ ոք չի կարող քո գառին դիպչելը սիրտ տուեց Տիրանը։ Այժմ լսիր, դեռ շատ կայ պատմելու։—Երբ լուսը բացուաւ, սև եղաւ այն օրը Հայերի համար։ Մանուկին ծնողները պահել էին, իսկ Թուրք ոստիկանները սրերը մերկացրած և անարգել մտնում էին ամէն Հայի տուն ու արկղներն անդամ խուզարկում։ Փողոցներումն էլ մունետիկը (Թալալչի)։ բարձր ձայնով բղաւում էր՝ «Ո՛վ Հայեր, Թորոսենց Մանուկին աշխատէք գտնել, եթէ ոչ՝ բոլորիդ սրից կանցնենք. . . քաղաքի պէս»։ Ես մոռացայ քաղաքի անունը, Արփենիկ, չգիտեմ ո՞ր քաղաքում։ Հայրս ասում է-այդպէս մի անգի համար բոլոր քրիստոնեաներին կտրատել են կաթնակերից մինչև ծերը, իսկ կանանց ծծերն են կտրատել. .

—Ա՜խ, Տիրան ջան, ընդհատեց Արփենիկը—որքան անդութ են Թուրքերը, նրանք խիղճ չունի՞ն, Աստուած չունի՞ն, ինչո՞ւ չէ պատժում դրանց Աստուած։

—Նրանք էլ Աստծուն ճանաչում են, բայց խիղճ չունեն նրանք. բայց տերտէրս ասում է՝ որ դրանց գրքերը անզգութիւն ու անխղճութիւններ են քարոզում, ուստի նրանց սրտերում խիղճ չէ մնացել։ Թողնենք այդ, Արփենիկ ջան, պատմութիւնս կիսատ մնայ։ Ես որ մունետիկի ձայնը լսեցի, սարսափելով մոայ քուրսու տակը, շունչս կտրեցի, կուչ եկայ, մի բուռ դառայ։ Մի քիչ յետոյ մեր տուն մտան Թուրքերը, տունը խուզարկեցին և յետոյ քուրսին վերուցին, ես նրանց դարշելի երեսը տեսնելուն պէս՝ մարեցայ, էլ չեմ իմացել ինչ է եղել այնուհետև։ Միւս օրը սթափուեցի, բայց ես այն չէի, ինչ որ էի առաջ։ Մայրս ասում էր, «տղէն խելագարուել է։»

—Հա՜, Տիրան, յիշում եմ, որ դու մի քանի օր հիւանդացար, երբեմն էլ տկլոր դուրս էիր փախչում տնից, չէ՞։

—Այո՛ Արփենիկ, լաւ ես յիշում։ Մի քանի օրից յետոյ հայրս ու մայրս խոտէ կեմ գցեցին վիզս, տարան «խոնարհ կըտուր» ուխտ, որն խելագարներուն բժշկում է։ Կեմը վզիս՝ մայրս լալով, ողբալով և հողերը համբուրելով, մի քանի անգամ ինձ պտտցրեց գերեզմանի շուրջը։ Մեռնեմ նորա սուրբ զօրութեանը, մի քանի օրից վերջը, ես էլի եղայ առաջուայ Տիրանը։ Ա՛խ, Արփենիկ ջան, քանի՞ քանի՞ երեխաներ ինձ պէս խելագարուեցան, հիւանդացան, մեռան. քանի՞ հարսներ կորուածք (վիժել) արին։ Իսկ Ասոյենց Մարիամը իսկոյն մեռել էր, երբ գինուած ոստիկաններին տեսել էր. ասում էին-վախից սիրտը պատռել էր։ Իսկ Գիհենց Գուլօն քուրսու տակից թոնիր էր ընկել ու ոտքը այրուել էր. խեղճ աղջիկը մինչև օրս կաղում է։

—Դու էն ասա՛, Տիրան, վերջը գտան Մանուկին, հարցրեց Արփենիկը։

—Այո՛, Արփենիկ, գտան և իսկոյն տարան Կարս քաղաքում կախեցին. եթէ որ չ'գտնէին՝ անպատճառ պիտի սրից քաշէին Հայերին։ Ա՛խ, Արփենիկ, դու տեսնէիր թէ՝ ինչպէս մայրը մազերը փետելով ողբում էր. սարերը դողում էին նրա աղերսանքից։ Բոլոր գիւղացիք ջուր կտրան լալով, վայ տալով։ Այն օրից վախը սրտէս չէ դուրս գալիս, երբ միտս է գալիս, սարսափում եմ։ Հէնց դրա համար էլ՝ Արփենջան, ես ինձանից փոքր թուրքերից անգամ վախենում եմ, մանաւանդ հայրս միշտ ասում է-«Թուրքը որ կայ՝ փուշ է, մենք չենք կարող փշի գլխին խփել, պէտք է նրանցից վախենանք, նրանք տէր ունին. . .»

—Իմ հայրն էլ է այդպէս ասում, Տիրան, ընդհատեց Արփենիկը։

Բոլոր գիւղացիք այնպէս են, նրա համար էլ թուրքերի 5 տարեկան տղերքը միշտ մեզ պէտներին ծեծում, հալածում են։

Տիրանը նկատեց՝ որ իր խօսակցութիւնները տխուր աղդեցութիւն թողին Արփենիկի վերայ, ուստի փախցրեց նրա ձեռի փունջը, որպէս զի փոխուի խօսակցութիւնը։ Նրանք մռանալով ամեն բան, կրկին ուրախ ուրախ սկսեցին խաղալ ոստոստալ կանաչների մէջ, մինչև որ Արփենիկը լսեց «քօռ բուի» ձայնը և ասաց.

—Է՛հ, Տիրան, էլի եկել է սև երես քոռ բուն, ես վախենում եմ նրա ձայնից։ Մայրս ասում է թէ՝ մի ժամանակ քօռ բուն մի աղջիկ է եղել և մի եղբայր է ունեցել, երկուսն էլ որբ են եղել և շարունակ թափառում են եղել գիւղից գիւղ, քաղաքից քաղաք։ Մի օր էլ մութը ընկնում է դաշտի մէջ, կորցնում են ճանապարհը, բոլորովին հեռանում են բնակարանից։ Այնպէս մոլոր առաջ գնալով՝ ընկնում են անտառի մէջ, աւազակների ձեռքը. աւազակները անդթաբար մորթում են եղբօրը և նրանց ունեցածները տանում։ Թշուառ քոյրը անմխիթար ողբում է, և երբ արշալոյսը բացվում է, ծունկ է չոքում ու ջերմեռանդ աղօթում է Աստծուն, որ կամ եղբօրը կենդանացնէ, կամ իրեն թռչուն դարձնէ, որպէս զի չարագործ մարդկանց անէծքներ երդէ անդադար։ Աստուած լսում է նրա աղաչանքը և քոյր ու եղբայր դառնում են մի մի թռչուն ու ծափ տալով թռչում են դատ դատ։ Քոյրը դառնում է քօռ բու և միշտ ողբալով երդում է եղբօր կարօտուն։ Բայց մայրս ասում է՝ նա կոյր չէ, այլ ցերեկները վախենալով չարանենդ մարդկանցից, թաքնվում է խոռոչներում ու գիշերները կրկին երգում ու երգում։ Իսկ եղբայրը դառնում

է «բայղուշ», որը ղորովին մարդկանցից զզուած՝ քաշվում է աւերակները և անհանգիստ, «վայ վայ»ով անիծում է մարդկանց։ Մայրս ասում է, նորա միտքը այս խօսքերն են. «Զար մարդկանց բնակարանները այսպէս աւերակ տեսնեմ» Դրա համար էլ, Տիրան Ջան, ես վախենում եմ նրա ձայնից։

—Ուղղղ, Արփենիկ, որքան նրանք վշտացած են մարդկանցից, որ բնաւ չեն մօտենում շէներին, եթէ մօտենում ու երգում են, անպատճառ մի վնաս է դալիս այնտեղի մարդոց։ Ողորմած հոգի մամս ասում էր՝ «մի տարի բայղուշը իջաւ իշխանենց այգում, երգեց, տարին չ'լրացած՝ իշխանը մեռաւ, որ թագաւորներու հետ էր նստում կայնում, խորհուրդ անում։

Տիրանն ու Արփենիկը երկար բուերի մասին առասպելներ էին պատմում, մինչև որ Արփենիկը ասաց։

—Բաւական է, Տիրան Ջան, այդ մասին էլ չ'խօսինք, ես վախենում եմ. գնանք տուն, չէ՞ որ քոռ բուն մթնելուս է երգում, իսկ մութը ընկնելուն պէս մայրս ասում է՝ որ մարդակերները *) մեզ են գալիս։ Նրանք տխուր տրամադրութեան տակ վերադարձան գիւղը։

*) Բորենի—Տեղացիներից շատերը հաւատալով այս առասպելական աւանդութեանը՝ պատմում են, երբ թէ՝ երբ որ մարդ մերկ դուրս է գալիս առաւաւատ երկնքի տակ, նրա վերայ մորթի է իջնում, և նա դառնում է մարդակերը կենդանին, որը ցերեկը նոյն իսկ մարդն է, իսկ գիշերները կերպարանափոխութեամբ գերեզմաններն բաց է անում, երեխաները է փախցնում, լափում։ Տեղացիներից շատերը տակաւին երկրաւ են համարում այդ բանը, ուստի երեխաների լացը կամ չարութիւնները զսպելու համար՝ ասում են. «Զէնդ կարի, խելօք կեցիր, մարդակերը կ'եմանայ» և այլն։ Երեխա-

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ս. ԹՈՐՈՍ.

Թ.

Հինց առաջիկայ օրը շատ պայծառ առաւօտ էր բացուել։ Կանաչ-կամիր կիւրակին ճշտութեամբ կատարել էր իւր պարտականութիւնը—այգուց ու պարտիզաց մակերևոյթը գեղազարդել էր ծաղկահիւս վերմակով։ Խօսուն թռչունները ծառէ ի ծառ ճախրելով՝ շրջակայ վայրերը թռնդացնում էին իրանց դայլայլիկներով։ Նոյն միջոցին բնութեան համակ խօսնակաց ձայներին ձայնակցում էր Ս. Պատարագի զանգերի զողանջը։ Գիւղում ամենն էլ պատրաստվում էին դիմելու դէպի ուրախութեան կրկէսը—Ս. Թորոս ուխտատեղին։ Տիրանենց դռանը երկու էշեր ծանր բեռնաւորուած՝ սպասում էին հրամանի. մինը կրում էր Տիրանի փոքր եղբայրներին, միւսը կարևոր պաշարեղէններն ու իրերը։

—Տիրան, գնա, տես Շահէնենք պատրաստ են. հրամայեց մայրը։

Տիրանը իսկոյն վազեց դէպի Շահէնենց տունը, տեսաւ Արփենիկին գեղեցիկ շորերով պճնուած՝ կանգնել էր դռան առաջ։ Արփենիկը նրան տեսնելուն պէս՝ բարկացած կերպով ասաց։

նները, որ քանիցս անգամ լսել են այդ սոսկալի բառը, խօսքն սարսափելով լռում են։ Որքան ցանկալի է, որ վերջանար այդ անմիտ և խիստ վնասակար սովորութիւնները մեր միջից։

—Ինչո՞ւ այսքան ուշացաք, Տիրան, գնա՛, շուտով ձեր էշերը բեր, որ մեր երի հետ հոտաղը առաջ տանի, դուք էլ արիք, որ միասին գնանք Իշխանենց խմբին խառնուինք, գնանք: Ա՛խ, Տիրան, մոռացայ, սպասէ, քեզ բաժին գաթայ եմ պահել բերեմ:

Նա մի ակնթարթում, առանց Տիրանի պատասխանին սպասելու, վազեց տնից բերեց մի փոքրիկ գաթայ և տուեց նորան: Տիրանը ստացաւ սիրոյ ընծան և գնաց Արփենիկի պատուէրը կատարելու: Կարճ միջոցից յետոյ միացած խումբը ուրախ առաջ էր գնում «Կալոցի-տափ» դաշտի կանաչածիլ արտերի միջանցքներից դէպի Ս. Թորոս: Տիրանն ու Արփենիկը երբէք չէին զատվում իրարուց, եթէ որ ստիպողական առիթ չէր լինում: Նրանք հրապուրուած գեղանի գարնան տեսարաններով՝ յետ էին մնացել բոլոր խմբերից: Նամանաւանդ, երբ արտերի միջից մերթ ընդ մերթ թռչում էին լոլեր, որոնք ապշեցնում ու զուարճացնում էին նրանց մանկական սիրտն ու հոգին. երկար նայում էին սլացող լոլերի յետևից, մինչև ճրդպրդալով՝ կըկկին թաղնվում էին հեռու արտերի մէջ: Երբ վերջին խումբը ևս իջաւ խորունկ ձորը, շտապեցին նրանք ուխտաւորին հասնելու: Ձորի միջից սընթաց գետակը իւր ափերի այգիներից ու ծաղկազարդ խոտոցներից (չայիր) կրծոտելով՝ փախչում էր դէպի խաղաղահոս մայր Երասխը:

—Տիրան, վազենք հասնենք մեր խմբին, ես վախենում եմ ջրից. ասաց Արփենիկը, երբ իջան ձորը:

—Ինչո՞ւ ես վախենում, Արփեն, տես, քեզանից փոքրները տարածուած ջրափին, անվախ ծաղիկներ են քաղում:

—Է՜յ Տիրան, դուն էլ ես ծաղիկ քաղում, չէ՞ որ ասում են ուխտ գնալիս ծաղիկ չեն քաղել, եթէ ոչ՝ «մուրաղը»

ծաղկից կ'առնի քաղողը:

—Քո մուրաղը ծաղկից լաւ է, Արփենիկ, հարցրեց Տիրանը:

Նա չ'գիտէր ինչ պատասխանէր, որովհետև ծաղիկը նորան շատ սիրելի էր, ուստի ուսերը շարժելով՝ ասաց:

—Զը գիտեմ, Տիրան. բայց վերադառնալիս էլ կարող ենք ծաղիկ քաղել:

Մինչդեռ սիրոյ զոյգը թիթեռի նման ծաղկանց մէջը ոստոստելով առաջ էին գնում առանց նրանց զառերի հրապելու, ուխտաւորաց մի տուտը արդէն հասել էր տեղ, մի մասն էլ շնչասպառ ու քրտնաթաթախ բարձրանում էր բարձրաղառ բլրի ծայրը, որի ծայրին հանգստանում էին Ս. Թորոսի ոսկորները. մի մասն էլ կիսամերկուած՝ անցնում էր գետակից:

—Պա՛յ, Տիրան, վազէ, որ հասնենք. մերոնք կ'անցնին գետակից, մենք կ'մնանք, ասաց Արփենիկը և ձեռք ձեռքի տուած՝ վազեցին:

Փոքրներուն գետից անցնելու վախը կատարեալ ազդել էր, որովհետև կամուրջ չ'կար գետակի վերայ: Մեծերը անցնում էին առանց երկիւղի, փոքրներին օգնում էին երիտասարդները, որոնք կարևոր դէպքում շալակով անցնում էին վախկոտ հարսներին ու աղջկներին: Տիրանը չ'ուզեց էշերին աւելի ծանրաբեռնել, բռնեց հօր ձեռից, սիրտը լոլի սիրտ շինեց ու անցաւ: Վերջապէս ամենն էլ անվտանգ անցան գետակից ու հարս, աղջիկ, ծեր, երիտասարդ միմեանց խառնուած՝ շարան-շարան սկսեցին բարձրանալ սրբատեղին: Տիրանն ու Արփենիկը միմեանց ձեռից բռնած, արագ-արագ բարձրանում էին, ջանալով՝ որ ամենից առաջ իրանց խմբի միջից իրանք տեղ հասնին: Նրանք հասան բլրի գագաթը և նստան մի քարի վերայ հանգիստ առնե-

լու։ Բարեբաղդաբար այն անգամ Տիրանի վարժապետ բահանան չէր եկել, որ արգելք դառնար նրա ազատ խաղերուն։

—Տիրան, տես, ի՞նչպէս կպաւ իմ քարը գերեզմանաքարից, ասաց Արփենիկը։

Երբ երեք անգամ պտուտ եկան գերեզմանի շուրջը, համբուրեցին ու նստան։ Տիրանն էլ իր կողմից մի քար վեր առաւ, խփեց գերեզմանաքարի կողմն, բայց նորա քարը չը կպաւ—մուրազը չառաւ։

—Տեսար, Տիրան, ես չասի՞ ծաղիկ մի՝ քաղել, որ մուրազդ առնես։

Տիրանը տխրեց և ոչինչ չ՝խօսեց։

—Դէ՛հ, բեր այդ բաճկոնիցդ (գպուն) մի կտոր կտրենք, փաթաթենք մացառներից, որպէս զի մեր ցաւ ու «չօռը» դրանց վերայ թափի—ասաց Արփենիկը՝ կարծես բարկացած։

—Մի՞թէ Արփենիկ, մենք ցաւոտ,—չօռոտ ենք։

—Ո՛չ Տիրան, բայց տես, բոլորը այնպէս են արել և անում են, 'ի՞հարկէ, մենք էլ պիտի անենք։

Տիրանի բաճկոնը այնպէս հին էր, որ նրանց նպատակներին բաւականութիւն տուեց։

—Տիրան, մերոնք դեռ շատ կ՝յեռանան, մենք գնանք այն տանձենու տակ նստինք, ասաց Արփենիկը՝ ցոյց տալով մոտակայ սաղարթների վայրի տանձենին։ —Տիրան, ո՞վ է այս տանձենին ջրում, տիրում, որ այսպէս լաւ տուել է, կրկին խօսեց նա, տես, խաղողի ճթի պէս կախուել են ճղերը։

—Արփեն ջան, այս տանձենին Ս. Թորոսի զօրութեամբ է աճում։ Տէրտէրս ասում է՝ որ Ս. Թորոսը ամբողջ օրը բարձը սարերու վերայ աղօթելով չարչարվում է և երեկոներին վերադառնում այս տանձենու պտուղներով կերակրւում ու հանգստում է եղել գիշերները։—Արփեն ջան, դիտե՞ս, Ս. Թորոսն էլ Թուրքերի ձեռքիցն է փախստական ընկել սարերը։ Վերջը հէնց այս խնձորենու տակ քնած ժամանակին անհաւատ Թուրքերը նահատակում են անխընայ։ Մեր գիւղացիք լսում են սրբի նահատակուիլը, գալիս են մարմինը ամփոփում են այդտեղ և մի փոքրիկ մատուռ են շինում, որի հիմքը տակաւին յայտնի է։ Անցնում է մի առ ժամանակ, Թուրքերը տիրում են մեր գիւղին, որն եղել է այժմեան «բերդաթաղը»։ Այս իմ ասածներս շատ հին բաներ են. . .

—Թո՞ղ հին լինի, Տիրան, ընդհատեց Արփենիկը, միայն դու շարունակիր։

—Թուրքերը կարծելով թէ՝ գանձ կայ թաղած մատուռի մէջ, կրկին շարունակեց Տիրանը,—քանդում են ու ցիր ու ցան են անում սրբի ոսկորները, բայց ոչինչ չեն գտնում և պատիժներն էլ ստանում են։

—Մի՞թէ նրանք սրբերին չե՞ն հաւատում, Տիրան, հարցրեց Արփենիկը։

—Տէրտէրս ասում է, Արփենիկ, նրանք ո՞չ վախենում են և ոչ էլ հաւատում են այն սրբերին, որոնք իրանց ազգից չեն։ Մեր թագաւորութիւնը վերջանալուց յետոյ, ասում է, անթիւ գանձեր մնացին արնաշաղաղ աւերակների տակ, բարբարոս ազգերի արշաւանքների ժամանակ, դորա համար էլ Թուրքերը մեծ յուսով քանդում են Հայոց վանքերն ու աւերակները և շատ անգամ աջողվում է նրանց։ Օրինակ, երբ նրանք Միջնաթաղը» խլում են Հայերից, հիմնայատակ են անում շինութեանց հետ եկեղեցին ու տեղը արտ

են անում։ Նոյն արար վարելիս արօրի խոփին է ընկնում ոսկով լի սափորի (գիւղիւմ) անկը, որով հարստանում է Թուրքը, այժմ մեր գաւառի մէջ առաջին հարուստն է դառել։

Տիրանը խոր հառաչեց և էլի շարունակեց պատմութիւնը։

—Հա՛, մուռացայ, Արփենիկ, երբ լսում են մեր գիւղացիք Ս. Թորոսի գերեզմանի քանդուիլը, դալիս նորից նոյն տեղը ամփոփում են ոսկորները, բայց էլ ոչ մատուռ են շինում Թուրքերի երկիւղից և ոչ կոփածոյ քարերով են շինում գերեզմանը, այլ մանր մանր խոշոր քարերով շինում են այժմեան քարակոյտը (չակլ)։ . .

—Դու ինչպէս միտքդ ես պահում, Տիրան, այդ երկար պատմութիւնները—Տիրանի աւարտելուց վերջը հարցրեց Արփենիկը։

—Ոչ թէ այսքան, այլ այսպէս քան պատմութիւններ է անում տէրտէրս, Արփենիկ, ափսոս ես շատը չեմ կարողանում սովորել, միտքս տահել։

—Վա՛ էր կայ, գնանք, Տիրան, մերոնք արդէն եկել են, ասաց Արփենիկը և միասին հեռացան տանձենուց։

Ուխտաւորները ցած ի՛ջան բլրից ու նստուեցին կանաչազարդ մարգագետինների վերայ։ Կարճ միջոց հանգստանալուց յետոյ, հարսներն ու աղջիկներն սկսեցին մատաղացու աքաղաղները փետրահան անել, ուրախ-ուրախ կատակներով, հասակաւոր կանայք հնոցները պատրաստել։ Մանուկներն էլ տարածուան ծաղկաշաղաղ վայրերը անհուն զուարճութեամբ ծաղիկներ քաղելով. իսկ յօդնաջան էշերը փռուած շրջակայ կողմերը, ախորժակով արածում էին նոր բաբողջոջ խոտերը անհոգ, անխնայ կերպով։

—Արփենիկ, կերակուրները դեռ ուշ կ'պատրաստեն, մենք գնանք ծաղկաքաղ, մինչև որ պատրաստեն։ տէս, տղայ, աղջիկ միմեանց խառնուած՝ բարձրանում են սարը «կակաչ ու «օխթնաղբօր-արիւն» քաղելու, ասաց Տիրանը։

—Բայց չէ՞ որ, Տիրան, մենք դեռ ծոմ ենք, ապասէ՛, ես գընամ մօրս մօտից մի դաթայ բերեմ, ուտելով գնանք։

—Չէ, Արփենիկ, մի՛ գնալ, քո տուած դաթան դեռ ճուում է ծոցիս, այն ուտենք, բաւական է։ եթէ որ մօրդ ձեռն անցար, էլ բաց չի թողնիլ քեզ։ . .

Նրանք փոքրիկ դաթան կերան ու սկսեցին բարձրանալ ծաղկոտ սարը։

—Այս սարում հօրդ-մօրդ կայ, չէ՞, Տիրան, հարցրեց Արփենիկը։

—Այո, Արփենիկ, բայց այժմ բացուած չի լինի «ալալ-խնձորի» պէս։

—Ալալխնձորն էլ բացուած չի լինի, Տիրան։

—Ո՛չ, Արփենիկ, դրանք ուշ ծաղկող ծաղիկներ են, մայիսի մէջն են ծաղկում։ Օ՜հ, Արփենն ջան, տէրտէրս ասում է «մայիսը գարնան զարդն ու պսակն է» բոլոր ծաղիկները մայիսին են ծաղկում։ . .

Նրանք քաղցրաբար խօսակցելով՝ բարձրանում էին, աշխատելով որքան հնար է տանձենանալ թփոտ ձորակներում, որպէս զի ոչ ոք արդէլը չ'դառնայ իրանց ծաղկաքաղութեանը։

Մինչև ծաղկանց խիտ տեղը հասնելը նրանք լաւ բրոտնան ու դադրան։

—Ինչո՞ւ, Տիրան, ծաղկանց շատը թփերի ու մացառների մէջն են բուսնում, հարցրեց Արփենիկը յուզուած, երբ նրա նոր հագած հալաւի քղանցքը (փէշ) պատատեց մացա-

ոը, որի համար մայրը խիստ յանդիմանական նկատողութիւն պիտի անէր անշուշտ։

—Մենք էլ չար մարդկանցից հեռու ենք փախչում, Արփենիկ ջան, որ չ'մնասուինք, ազատ մնանք, չէ՞ որ ազատութիւնը շատ լաւ բանէ։ Ծաղիկներն էլ տաւարի կերակուր լինելուց ազատուելու համար, մացառների մէջ են բուսնում, որ միառժամանակ ազատ մնան, կեանք վայելեն։

—Մի՞թէ ծաղիկներն էլ ցանկանում են երկար ապրել, Տիրան. . .

—Իհարկէ՝, Արփեն, ինչ բան որ աճում է, նա և ցանկանում է ապրել, տերտէրս է ասում։

—Ուրեմն մեղք չէ՞, Տիրան, որ մենք քաղում ենք այս ծաղիկները։

—Ոչ, ծաղիկը կոկոն քաղելիս է մեղք, իսկ մենք ընտրում ենք լաւ բացուածներ, ժամահասները, բայց տաւարները կոկոնախառն ծաղիկները թփերով պորճկտում, ուտում են. . . ։

—Օ՜հ, Տիրան ջան, ի՜նչ լաւ կ'լինէր, եթէ մեր գիւղը այս ծաղիկների մօտ շինուած լինէր, խօսեց Արփենիկը լի սիրով, որ ամեն օր միասին գայինք այստեղ, խաղայինք, քաղէինք և չ'թողնէինք որ ծաղիկները թոռոմին։

—Իրաւի, ի՜նչ լաւ տեղ է, Արփեն ջան. . .

Եւ երկուսով պարուրուան ծաղիկների մէջ, մանկական անմեղ փայփայանքներով և անսահման բերկրութեամբ. . .

—Ուշացանք, Տիրան, շրջակայքում ձայն չէ լսվում, գնանք. բայց ես շատ ծարաւ եմ, այստեղանք ջուր չ'կայ արդեօք, հարցրեց Արփենիկը։

—Տես, Արփեն, հեռու ժայռի երեսից կարծեմ ջուր է պսպղալով թափվում, գնանք խմենք, ես էլ եմ ծարաւ. . .

Նրանք գնացին։ Մի փոքրիկ վտակ գոյանալով սարի գագաթի ձիւնից, քչքչալով վայր էր հոսում ձորակից։ Նրանք իրանց ծարաւները կոտրեցին ու նստան վտակի կանաչ եզերքին։ Երկար ժամանակ լուռ էին նրանք և դիտում էին վտակին, որն անընդհատ ձայներ հանելով փըրփրալով վազում էր դէպի հովիտը հանգիստ առնելու։ Միայն մի անգամ Տիրանը բանաստեղծական զգացմունքով խօսեց։

—Որքան գեղեցիկ վայրեր են, Արփենիկ ջան, մարդ չէ ուզում բաժանուիլ։

Նրանք խոր հառաչելով բաժանուան վտակից։ Նրանք վերադարձան, արդէն կերակուրները պատրաստուած էին, լաւ անարդուելուց յետոյ, լաւ ախորժակով էլ ճաշեցին։ Ճաշի ժամանակ տղամարդիկ (այր) առանձին, սեղան էին կազմելկանայք առանձին, հարս ու աղջիկ առանձին իսկ նշան դրուած երիտասարդները ոչ մի սեղանի չէին մասնակցում, այլ բարձրացել էին բլուրների ծայրերը ընկեր—ընկեր և դիտում էին լի սիրով երջանիկ խմբերուն։ Սակայն նրանց չէին մոռանում իրանց զոնքանչները, որոնք մանուկների ձեռքով առատ բաժին էին ուղարկում նոցա։ Ճաշը վերջացաւ թէ չէ՝ բոլոր խմբերը միացան ու սկսեցին փողով թմբուկով պարել։ Մինչև իրիկուն ուրախութեան հանդիսից թնդում էր Ս. Թորոսի ձորը։ Երբ որ սարի ստուերը ընկաւ ուխտաւորների վերայ, ծերունիք հրամայեցին՝ որ պատրաստուին տուն վերադառնալու։ Մի քանի րոպէից վերջը ուխտաւորը ուրախ զուարթ ճանապարհ ելաւ, աղաղ աղջկները մինչև գիւղ հասնելները անուշ ձայներով տաղեր էին երգում։ Արևը մայր մտաւ, ուխտաւորն էլ գիւղ հասաւ ուրախ տրամադրութեան մէջ պարուրուած.

ՄԻ ՕՐ ՏԻՐԱՆԻ ԵՒ ԱՐՓԵՆԻԿԻ ԿԵԱՆՔԻՑ։

Ժ.

Հասան դարձեան երանաւէտ օրերը։ Մայիսը իր փառաւորութեամբ տարածուել էր ամենուրեք։ Վարդի, փշատի և այլ ծաղկանց բուրմունքը փառաւորում էր մարդկանց սիրտն ու հոգին։ Տիրանը արդէն աղատուել էր վարժապետի ճնշումներից։ Նորա գլխաւոր գործն էր այդին գնալ պահպանելը. առաւօտեան վաղ գնում էր, երեկոյեան վերջալուսին վերադառնում էր գիւղը Արփենիկի հետ։ Նա էլի իրանց այգումն էր և շատով ջրում էր բանջարանոցը, որ սարքէր ու գնար Արփենիկի հետ խաղերը շարունակելու։ Ջրերը վիկրաալով հոսում էին այգիների ճանապարհներից անցնող առուակներից։ Դրախտայի՜ն տեսարան, երկնայի՜ն ձայներ։ Երանի՜ նորան, ով որ դարտ չունէր սրտում և ապրում էր այնտեղ. . . Կէս օր անցաւ թէ չէ՝ Տիրանը վերջացրեց իւր գործը և գնաց Արփենիկի մօտ, որը քաղհան էր անում իր ծաղկոցը։ Նրանք միացան կրկին և երկար խաղում էին բնութեան դրախտի մէջ, բնաւ մոռացած աշխարհիս դարդն ու հոգսը։

—Տիրան, այս տարի դուք պիտի վանքը (Վարդիհէր) չը գնաք, հարցրեց Արփենիկը, երբ յոգնած՝ նստած էր ծառի տակը։

—Ո՛չ, Արփենիկ։

—Չէ՞ որ անցեալ տարի էլ չ՝եկաք, երկու տարի է վանքը չէք գնում, մեղք չէ՞, Տիրան։

—Մայրս ասում է գնանք, բայց հայրս չէ յօժարանում, ասում է, առանց դառի ամօթ է գնալ։

—Ինչո՞ւ, Տիրան, Վաթոյենք դառ շատ ունին, մենք էլ նրանցից առանք։

—Իսկի չես ասում, Արփենն, փող կայ։

Արփենիկը լռեց և չ՝գիտէր ինչ պատասխանէր։

—Տիրան, հայրիկիս կ՝ասեմ, որ ինձ էլ քեզի էլ աջհամբուրի փող տայ. . .

—Հապա մերո՞նք. . .

—Է՛հ, Տիրան, թող ձերոնք չ՝գան. իմ դարդս դու ես։

—Եթէ մերոնք չ՝գան, չէ՞ որ ես էլ չեմ կարող գալ, Արփենն Ջան։

—Հայրս ու տէրտէրը քեզ բռնութեամբ կ՝տանին, անցեալ օրը մեր տանն ասաւ. «Տիրանին տանենք հեռներս վանքը, որ սպասաւորութիւն անէ (դպրութիւն) անցեալ տարուայ պէս խայտառակ չ՝լինենք։»

—Վախենում եմ հայրս չ՝թողնի, Արփենիկ։

—Կը թողնի՛, կ՝թողնի՛, դու էն ասա թէ, քանի՞ օր մընաց «Համբարձմանը»։

—Այսօր երկուշաբթի է, վաղը չէ, միւս օրը չէ, էն միւս օրը համբարձում է։

—Ուրեմն այսօրուանով երեք օր է մնացել։

Արփենիկի ուրախութեանը չափ չ՝կար, որովհետև արդէն որոշուաւ որ Տիրանը պիտի ընկերակցէր իր ուխտագնացութեան։ Նրանք կրկին սկսեցին խաղալ, զուարճանալ, մինչև որ արեգակը իր ծիրանափայլ շողերով ծածկեց հեռու հորիզոնում. իսկ Նրանք էլ թողին խաւարապատ այդին և դիմեցին դէպի տուն։

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԻ-ՀԵՐ ԵՒ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻՆԸ։

ԺԱ.

Երեքշաբթի օրը՝ երեկոյեան դէմ ուխտաւորի մի մասը ճանապարհ ելաւ դէպի Ղարավանք գիւղը, որոնց հետ էին Տիրանն ու Արփենիկը։ Ղարավանք գիւղը հեռու չէ Կաղզուանից, շատ-շատ մի ժամու ճանապարհ։ Ուխտաւորները երբ հասան գիւղը, դեռ երեկոյեան զանգերը չէին հարել, թէև Ղարավանք գիւղի եկեղեցին զանգակ չունէր, այլ ուխտաւորի սակաւ հանգստանալուց զկնի, ժամ կոչը բարձր ձայնով ճուաց. «Օրհնեա՛լ է Աստուա՛ծ, յիշեցէ՛ք Աստուած. Աստուած ողորմի ձեր ծնողացը, ժամ հրամեցէ՛ք»։

—Մայրիկ, սրանք զանգ չունի՞ն, որ ժամակոչն է ճվում, հարցրեց Արփենիկը, լսելով ժամկոչի խռպոտ ձայնը։

—Զունին, բայց դրանց զանգը մերերից լաւ է, որդիս, պարզաբար մեզ հրաւիրում է եկեղեցի պարտքերներս դէպի Աստծուն կատարելու համար, պատասխանեց մայրը և երկուսով գնացին եկեղեցի։

Երբ ուխտաւորները եկեղեցուց դուրս եկած՝ զբօսնում էին պարտիզում, հետաքրքիր Տիրանը մօտենալով իրանց տանտիրոջ տղին, հարցրեց։

—Ո՞վ է շինել այս վանքերը, Կարօ։

Սակայն կարօն ամօթից կարմրեց և նայեց հօր երեսին, որ նա պատասխանէ։ Տիրանի հարցը առիթ տուեց ծերունուն մի քանի խօսք խօսելու վանքերի մասին։

—Այս վանքերի շինուիլը ոչ ոք չգիտէ, որդիս, խօսեց ծերունին և դառնալով դէպի հասակաւորները՝ աւելացուց։ Այս վանքերը չորս էին և խաչաձև շինուած. մէկն այս է, որի մէջ ժամերգութիւն ենք անում, մինը բլրի ծայրի փոքրիկն է, մինը այն է՝ որ հաղիւ նշմարվում է հիմքը, իսկ մինը այն բլրի ծայրին է եղել, որի քարերը քայքայելել տարել են Ենգիջա գիւղի Քուրտ բնակիչները, իրանց տներն ու գոմերն են նորոգել։

Ծերունին խորունկ հառաչեց և էլի շարունակեց թախծալի ձայնով։

—Վանքերը կոչվում են Ս. Խաչ վանքեր ինչպէս և գիւղի անունը, բայց թուրքերը խաչի անունը չյիշելու համար, դառուցել են ղարավանք (սև վանք) ինչպէս անուանում են այժմ։

—Ամի, այս վանքերը չե՞ն, որոնց մէջ ժամերգութիւն են անում եղել մի ժամանակ Ս. Վարոս-Թաթուլ իրանց խոտաձարակ ընկերներով։ Անհամբերութեամբ հարցրեց ծերունուց Տիրանը, կամենալով յայտնել, որ ինքն էլ կարդացող է, բան գիտէ.

—Այո, զաւակս, դու ո՞ւմից ես սովորել այդ, հարցրեց ծերունին շփելով նրա գլուխը։

—Ես սովորել եմ իմ վարդապետից, ոչ թէ այդքան, այլ շատ-շատ բաներ, ասաց Տիրանը վեհանձնաբար։

—Ո՞վ է քո վարժապետը։

—Տէր Խաչատուրն է։

—Աստուած էլ աւելի շնորհք տայ, աչքաբաց տղայ ես երևում։

Տիրանը այդ գովեստը լսելուն պէս՝ կամեցաւ աւելի պարզել իր գիտութիւնը և ասաց։

—Իմ վարժապետս այդպէս չէ ասում վանքերի համար, Նա ասում է, որ երբ Քրիստոսի Խաչափայտը յոյները պարսից գերութիւնից ազատած՝ բերում են եղել, մի գիշեր բանակով այս գիւղումն են դիշերել և խաչափայտը դրել են այս վանքերից մէկի մէջ: Առաւօտեան կրկին վեր են առնում և տանում: Հէնց դրա համար էլ այնուհետև վանքերը կոչուել են Ս. Խաչ վանքեր:

—Որ տեր Խաչատուրն է ասում, իհարկէ, քո պատմածդ աւելի ճիշդ կ'լինի, ասաց Ծերունին և ուխտաւորների հետ բլուրից իջան տները:

Ովքեր որ մատաղացու դառ չունէին, մի մի թուխս գառ մի մի զոյգ էլ աղաւնի գնեցին Ղ. գիւղից և ապա անդորը քնով հանգստացան գիւղի հովասուն ու քաղցրաբոյր օդի մէջ:

ՎԱՐԴԻ-ՀԷՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

ԺԲ.

Զորեքշաբթի, առաւօտեան վաղ ժամին ուխտաւորը կրկին ճանապարհ ընկաւ: Ճանապարհը թփերի, մացառների միջով և առատաբար ձեւերով բարձրանում է Ծաղկաշաղաղ և ջրալի սարն ի վեր: Վաղորդեան ցողը կաթիլ կաթիլ կախուել էին ցողունների քթերից: Օդը կարելի է ասել, որ ցուրտ էր, ինչպէս սովորական է այդ յաւերժական վայրերուն տարուայ ամառ եղանակին անգամ: Տիրանն ու Արփենիկը չմրսելու համար համարեայ վազում էին շարունակ: Ճանապարհը բարձրանում էր «Արզի-իւրդ» սարի (ցանկալի վայր) կողքով, որի գագաթում և ծմակ տեղերում դեռ պսպղում էին ձիւնի շերտերը:

—Պա՛յ, Արփենիկ, տես, այստեղ նոր է ծաղկել ձնծաղիկը, ասաց Տիրանը, մատենալով ձնծաղիկների խմբին, որոնք նոր նոր աղատուած ձնի ճնշումներից, փթթել էին:

—Զգուշացի՛ր, Տիրան, չ'քաղես, միտքդ բեր Ս. Թորոս դը-նալու օր. . .

Նա կամեցաւ յիշեցնել այն անցքը, որ Ս. Թորոս ուխտ գնալիս Տիրանը ծաղիկ էր քաղել, մուրաղը չէր կատարուել:

—Տիրան, տես, «Հօրատ-մօրատն» ու ակալենձորը այստեղանք ինչ լաւ բացուել են, ասում էր Արփենիկը և ամեն խմբի մօտ մի նշան էր շինում, որ վերադառնալիս քաղեր:

—Օ՜հ, օխթնաբոր արիւնը այստեղանք որ քան խիտ է, Արփենիկ ջան, ո՞ր մէկը պէտք է քաղենք, ղուր տեղը նշաններ ես դնում դու, Արզի-իւրդի ծաղկանց հաշիւ չկայ:

Նրանք անդադար վազելով, դէս ու դէն ընկնելով առաջ էին գնում, մինչև որ Արփենիկը յոգնած նստաւ, կանաչի մէջ թաղուաւ:

—Նստի՛ր, Տիրան, քիչ հանգստինք. . .

—Չէ՞ որ մեղք է, Արփէն, վե՛ր կայ գնանք հանգստեան քարի վերայ հանգստինք. . .

—Ոչինչ, մի քիչ այստեղ հանգստինք, ես շատ յոգնեցայ, Տիրան, օ՞ֆ-ֆը:

Նա հոգոց հանեց և կրնկին ծաղիկների մէջ պառկուաւ: Տիրանն էլ կամայ ակամայ հնազանդեց նորա կամքին, ինքն էլ թաղուելով կանաչների մէջ: Սակայն դեռ չէին հանգստել, խումբը հասաւ նրանց:

—Ա՛յ, անամօթներ, չէք ամաչում, որ հանգստեան քարին չ'հասած՝ նստել էք, ասաց Արփենիկի մայրը, խիստ բարկացած:

Նրանք ամբիսածութեամբ վեր թռան տեղերից ու առաջ վազեցին։

—Այսի թէ՝ չ'նստինք, Արփեն—մրթմրթաց Տիրանը։

—Տիրան, դեռ շատ կայ հանգստեան քարին, ես բոլորովին մոռացել եմ, հարցրեց Արփենիկը, երբ կրկին հեռացան խմբից։

—Ո՛չ, մոտեցանք, Արփեն ջան, «վիշապայ-ձորի» այս կողմն է. . .

—Ինչո՞ւ վիշապաձոր են ասում, Տիրան, շտապով հարցրեց կրկին Արփենիկը սթափուած։

—Մի՛ սարսափիլ, Արփեն ջան, այժմ էլ վիշապներ չ'են բնակվում այնտեղ, նրանց հալածեցին Ս. Վարոս-Թադեոս իրանց աղօթքներով. օհ, Արփեն, դրանց պատմութիւնը շատ երկար է, որը սովորել եմ տէրտէրից։

—Ո՞ւմ պատմութիւնն ես ասում, Տիրան։ Վարոս-Թադեոսի՞։ Ուրեմն պատմի՛, ես շատ եմ սիրում լսել պատմութիւններ։

—Արփեն ջան, ես պէտք է սկզբէն սկսեմ, որ լաւ հասկանաս։ Ս. Վարոս-Թադեոս ճգնաւորներն իրանց մի քանի ընկերների հետ ցերեկները այս սարերու վերայ թափառելուց վերջը, երեկոներին վերադառնում են եղել այն տեսածներս վանքերը (Ս. Խաչ) ժամերգութիւն անելու, ըսկըսեց նա։ Դրանք էլ, Արփեն ջան, բարբարոսութիւնից ըստիպուած՝ թողել են աշխարհիս վայելչութիւններն, կրօնի, ազգի սիրուն, որ թուրքերը ստիպում են եղել այն ժամանակներում այդպէս լաւ կարդացողներուն հաւատները ուրանալ, իրանց կրօնը պաշտել և հեռացել են այս անմարդաբնակ վայրերը, անդադար աղօթելով Աստծուն իրանց հոգիներու և ազգի փրկութեան համար։ Մի օր էլ

Ս. Վարոսը մենակ վերադառնում է եղել վանքերից դէպի իրանց ճգնարանը, նստում է այժմեան «Վարդնաձի» ափին և ընկղմվում է մտածութեան մէջ, երկնային սիրով վերացած։ Այն ժամանակը Քրիստոս տէրը նորա համբերութիւնը փորձելու համար, անդամալուծի կերպարանքով իջնում է նորա մօտ։ Ս. Վարոսը սթափվում է յափշտակութիւնից, տեսնում է անդամալուծին, գոյթը շարժվում է, իսկոյն լճի ափի ուռիներից մի զամբիւղ է գործում, անդամալուծին տեղաւորում է մէջը զգուշութեամբ և ապա նրան շալակած՝ ճանապարհ է ընկնում զառիվեր ուղիով դէպի իրանց խուղը (ալաչուղ), որ այնտեղ հոգ տանի ծերունի անդամալուծին։ Նա մինչև հանգստեան քարին հասնելը՝ դադրում է, ուստի հանգիստ է առնում քարի վերայ, դրա համար էլ հանգստեան քար է ասվում։ Ահա՛ երևաց հանգստեան քարը, Արփեն ջան, վաղենք քարի վերայ նըստենք, մնացածը նոր պատմեմ։

Երբ հանգիստ առան հանգստեան քարի վերայ, Տիրանը կրկին շարունակեց։

—Սուրբը անդամալուծին այստեղից էլի շալակում է ու առաջ գնում։ Երբոր նա ծանր բեռնաւորուած՝ հասնում է վիշապաձորի մէջ, անդամալուծը խնդրում է սրբից, որ քթի խլինքը սրբէ. նա էլ զգուշութեամբ սրբում ու խլինքը գցում է ճանապարհից ցած, որտեղից իսկոյն բըխում է պարզ, լուսի պէս ջուր, որն այժմեան «լուսաղբիւրն է»։ . .

—Այն՝ որ կ'հանդիպե՞նք, և որից եթէ չ'խմենք, կ'բորոտինք, չէ՞։

—Այո՛, Արփեն ջան, հէնց այն է։ Շտապիր հասնենք, մի լաւ խմենք նրա քաղցրահամ ջրից։

Նրանք մեծ փափագով հասան պաշտելի աղբիւրին, անյագաբար խմեցին սառն ու համեղ ջրից և նստան ծառի հովանու տակ։

—Այս է վիշապաձորը, Արփեն ջան, հառաչելով խօսեց Տիրանը, մի ժամանակ այս ձորը խիտ անտառ է եղել, մեծ ու փթած մայրիներով լի է եղել, նրա համար էլ այստեղ վիշապներ են բնակվում եղած։ Տեսնո՞ւմ ես, Արփեն, այժմ փոքրիներն են մնացել, բոլորը մեր գիւղացիք են կտրել. կամաց կամաց վերջացրել են։

Նրանք կրկին անդամ խմելով սուրբ աղբիւրի ջրից, կրկին շարունակեցին առաջ գնալ, իսկ Տիրանը էլի սկսեց ընդհատած պատմութիւնը։

—Հա՛, Արփենիկ, Ս. Վարոսը երբ հասնում է այժմեան վանքի տեղը, անդամալուծը ասում է «Վարդի հայր» և յիսուս սրբի մարմինը նոյն տեղը ամփոփում են, վանք են շինում և անուանում են «Վարդի-հեր» Ս. Վարոս զամբիւղը շալակից վայր է իջեցնում, տեսնում է որ անդամալուծը չ'կայ և այն ժամանակը Տիրոջ հրեշտակը երկնքից ձայնում է. «Ով Ս. Վարոս, լրացաւ քո չարչարանաց սահմանը, Տէրը լսեց քո աղօթից ձայնը, այժմ աւանդիր հոգիդ». այդ ձայնը լսելուն պէս, սուրբը աւանդում է հոգին և նորա ընկերները ամփոփում են նրա մարմինը։ Բայց գիտես Արփենիկ, այժմեան վանքը նրանց շինածը չէ, քանի՛ քանի անդամ անօրէն թուրքերն ու քուրտերն աւերել են, մեր գիւղացիք նորից շինել են կամ նորոգել։

—Երանի՛ քեզ, Տիրան, որ այդպիսի լաւ-լաւ պատմութիւններ ես անում, ասաց խոր հառաչելով Արփենիկը։

Նրանք քիչ էլ առաջ գնացին թէ չէ՝ Վարդեհեր վանքը երևաց, ուստի ոտնամանները հանեցին ու բոբիկ ոտներով

վազեցին առաջ։ Կէս օր անցել էր, ուխտաւորները տեղաւորուան վանքի շուրջը, ծաղկապատ հովտում։ Հազիւ թէ հանգստացել էին, մի կողմից պարը սկսեցին և կամաց կամաց եռաց ուրախութիւնները։ Երգերի ու թմբուկների ձայնից, որոտում էին շրջապատ սրածայր ու սեպուն լեռները։ Արեգակը արդէն հակուել էր դէպի կուսական ժայռերի գագաթները, երբ Տիրանն ու Արփենիկը խաղից, պարից լիացած, նստել էին ծաղկապերճ բլուրի ծայրին և անհուն սիրով դիտում էին խոր ձորը, ուր անթիւ աղբերաց ջրերը քշփշալով հոսում էին ժայռերի ճեղքերից դէպի կանաչազարդ ծործորակները։ Այն աղբերաց խոխոջմունքները ձայնակցելով մայրի ծառոց սրտաշարժ սոսափիւնէն՝ փախչում էին հեռու, շատ աղբիւրների, վտակների հետ միանում, խրոխտում։ Սակայն հեռութեան մէջ կրկին մեղմացնում էին իրանց խրոխտալի ձայնը և միանում էին բնութեան միս նուագումներին, մինչև որ հասնում, լռում էին վերջապէս մայր Երասխի գրկում։ Այն յաւերժական ձայներից խսպառ հրապուրուած՝ Տիրանն ու Արփենիկը հոգով ու մտքով վերացել էին աշխարհիս զուարճութեան պանծալի դահը։ Մինչ-դեռ նրանք զմայլած էին հանդէպ տեսարաններով, վանքի կոչնակը հարուաւ։

—Ի՞նչ շուտ, Տիրան, զարմացած հարցրեց Արփենիկը։

—Այս երեկոյ ժամասացութիւնը երկար է, Արփենիկ, դրա համար էլ վաղ են սկսում, գնանք մենք վանքը. . .

Երեկոյեան արեգակը անմասչելի լեռների յետև մտնելուն պէս՝ թանձր խաւարը պաշարեց վանքի խոր ընկած հովիտը։ Երևացին անհամար խարոյկներ ստուար բոցերով։ Սակայն խաղն, պարի և երգերի ձայները չ'դադարեցին բնաւ։ Այն սրբավայրերը մի օր առաջ սովորականի պէս նըն-

ջում էին խորին մրափի մէջ արեգակի մայր մտնելուց վեր-
ջը։ Նոյն գիշերուայ անհամար խարոյկների փոխարէն, շատ
հեռուից, այրերի առաջ, նուաղ պլպլում էին աւաղակ
բրդերի վառած խարոյկները միայն։ Իսկ աղմուկների փո-
խարէն մերթ ընդ մերթ լսվում էր գիշատող կենդանիների
կռնչիւնը, ո՛չ որպէս երգողի յատուկ երգը, այլ որպէս բո-
ղոքալի մի տխուր ողբ, որը լսող մենաւոր անձի արիւնը
սառուեցնում էր երկիւղից. վերջապէս ո՛չ մի կենդանի չէր
կարողանում համարձակ ձայն հանել, վասն զի քաղցած
արջը երբեմն երբեմն իր կատաղի մռնչիւնով վնգվնգացնում
էր անդնդային ձորերն ու սեպակուրծք ժայռերը։ Բայց այն
գիշերը ուխտաւորաց աղմուկը խպառ վրդովել էր վայրի
յարական անդորրութիւնը։ Արջն անդամ լռել էր երկիւղից
և չէր համարձակվում դուրս գալ իր որջից, անտառի խոր-
քում, այլ անքուն, բարկացած մռմռում էր իր որջում մին-
չև լուս։ Իսկ առատաբուղխ աղբերաց ճոլուսն ու ընդհատ
ընդհատ հողմերից շարժուող ծառոց մեղմ սոսափիւնը չէ-
ին դադարում իրանց անուշ քնարը նուագելուց։ Տիրանին
ու Արփենիկին բնաւ չէին գրաւում մարդկանց ուրախու-
թիւնները, նրանք այլ նպատակ ունէին կատարելու։

— Տիրան ջան, վաղ չէ՞-հարցրեց Արփենիկը ,երբ երկուսով
իջնում էին մօտակայ ձորը, Արփենիկի ձեռքի փոքրիկ
բղուղը եօթ աղբիւրից աւաղ ու ջուր լցնելու։

—Ո՛չ, վաղ չէ, Արփեն ջան, աստղերը արդէն երևում են,
բայց ո՞րքան պարզ է երկինքը. հրաշալի գիշերուայ շնորհ-
քին է։ Գիտես, Արփենիկ, տէրտէրս ասում է՝ որ Համբարձ-
ման գիշերը բոլոր ջրերը կանգնում են հենց այն ժամին,
երբ Քրիստոս երկինքն է համբարձել։

—Ուղիղ է, Տիրան, մայրս ասում է, եթէ ջուրը կանգնե-

լիս բռով վեր առնիս, ոսկի կ'դառնայ. . .

—Այո՛, Արփենիկ, բայց այնքան կարճ միջոց է կանգնում,
որ մարդիկ չեն կարողանում նկատել. . .

—Աբի, ես ու դու այս վաղող ջրի վերայ սպասենք, հա՞
Տիրան։

—Կը մրսենք, Արփեն, նկատում չես, որ գնալով ցրտում է։
Բայց ինչ լաւ գիշեր է, մանաւանդ աղբիւրների ձայները,
ո՞րքան քաղցր են լսվում, երանի՜ տաք լիներ, ողջ գիշերը
չքնէինք, գուցէ ջրերի կանգնելն էլ տեսնէինք. . .

—Եթէ դու մնաս, Տիրան, ես կ'մնամ, որքան էլ մրսիմ։

—Ուրեմն մնանք։

—Երկիւղալի չէ՞, Տիրան, այստեղանք գայլ արջ չե՞ լինի։

—Ի՞նչ ես ասում, Արփենիկ, սատանէքն անդամ փախան
այս տեղերից, լսելով ուխտաւորների աղմուկը, մանաւանդ,
որ չորս կողմերս լի են մարդկանցով։

Մինչև հիմայ Արփենիկը միամիտ էր, բայց յանկարծ
երկմտեցաւ, սիրտը վախ ընկաւ։ Ի զո՞ւր Տիրանը նորան
սիրտ էր տալիս։ Նա երկիւղից մօտեցաւ Տիրանին. . . Տի-
րանի մէջ եռաց կարեկցութեան խանդը, բռնեց նրա ձե-
ռից, լի սիրով գրկեց. . . նորից նորից սիրտ տալով։

—Է՜հ, Արփէն ջան, մոռացիր այդ խորտաղներն ու մար-
դակերները. այստեղ չեն կարող գալ սրբերի երկիւղից։ Արի
գոնէ մի երգ երգենք, որ վախը սրտէդ դուրս գայ։

Նրանք բարակ ձայնով ձայնակցեցին գիշերային քաղցր
նուագումներին։ Նրանք դէպի իրանց բերին երկու համա-
պաշտօն անձինք, որոնք տեսնելով նորանց, հասկացան ինչ
նպատակի են, կրկին անյայտացան ծառոց խտութեան մէջ։

—Տեսա՞ր, Տիրան, նրանք էլ ջրի են եկել-խօսեց Արփենի-

կը-բայց դու չես մտածում, որ մենք սխալուել ենք։

—Ինչո՞ւ, Արփենիկ։

—Զի՞ որ առանց խօսելու պէտք է լսնէինք բղուղը։

—Վա՜յ, Արփենիկ, լաւ միտքդ բերիր. դու նկատեցիր, որ մեզ մտեցողները ամենևին չէին խօսում։

—Իհարկէ, նկատեցի՝ որ միտքս ընկաւ։

—Ուրեմն, Արփեն ջան, թափենք, նորից լսենք, հօ այստեղ էլ մեր գիւղը չէ, ամեն մի քայլափոխում մի աղբիւր կայ։

Ասաց Տիրանը և բղուղով ջուրը շուռ տուեց գետին։ Նրանք լռելեայն պաշտօնով կատարեցին իրանց անհրաժեշտ գործը և վերադարձան. . . Այն պահուն ուխտաւորաց ուրախութեան ձայները նուազել էին, խաղոյկներն ու բոցերն էլ հիւծելով հիւծում էին։ Ով որ իւր սրտում դարդ չունէր, հանգիստ քնել էր մաքրաշունչ օդի մէջ բացօդեայ կամ անշուք վրանի տակ։ Տիրանն ու Արփենիկը նոյնպէս դարդ չունէին, եթէ որ միմեանց մօտ էին, ուստի խաղաղ քուն մտան կապերտեայ վրանի տակ։ Արփենիկի հայրն ու մայրն ոչինչ նկատողութիւն չարին, որովհետև նրանց կատարելիք գործը իրանց ևս հաճելի էր։ Առաւօտեան արեգակը դեռ չծագած՝ տասնեակ հնոցներ վառվում էին մատաղացուները եփելու համար, որոնց ծուխերը քուլայ քուլայ բարձրանում էին մինչև սարերի գագաթը, ուր խառնուելով վաղորդեան մէգի հետ, թանձրանում ամպերի ձև էին ստանում։ Առաւօտեան հովիկը, մօտակայ աղբերաց ձայները գրգելով՝ բերում, զարկում էր մարդկանց ականջներին իւր անուշ երգի հետ միասին։ Անտառիկը մօտ էր։ Թռչնոց ձայները լսվումէին նորա միջից, որ գիշերային երկար լռութիւնից վերջը, անհուն սիրով, թարմ եռանդով ճռւոողում էին թառած ծառերի վերայ, կամ

ծառից ծառ ոստոստում։ Սոխակը, կարծես զգալով իր երգի գերազանցութիւնը, հեռացել էր միւս թռչուններից դէպի առանձնութիւնը, որ իւր դայլայլեկները չ'խառնուին միւս խրոխտ ձայներին ու կորչին. . . Սարի լանջում, կանաչագեղ հովտի վերայ, մի մայրի ծառ աղատուել է փայտահատի կացնից, աճել է վերջին շքեղութեամբ։ Սոխակը նորա վերայ է թառած, լարել է իւր դայլայլեկները և կենդանացնում է շրջակայ ամայութիւնը։ Հաղիւ լսվում է նորա ձայնը, բայց աւելի համեղ՝ քան հանճարեղ մարդկանց յօրինած քնարները։ Աւաղ, որ իմ անզօր գրիչն է նկարագրում. . . Արեգակը վաղուց է ծագել, բայց դեռ սարերի բարձր կատարներն է լուսաւորում։ Շատ ուշ կարող է իր շողերը դցել խորունկ հովիտը, ուխտաւորներից շատերը սպասում են նրան, որ գայ տաքացնէ իրանց։ Մարդագետինները ցօղի մէջ շաղաղուել էին, իրանցից մի քիչ հեռու դէպի լերանց լանջերը եղեամով է պատած, իսկ նրանցից վեր ձիւնն է փայլում արեգակի առաջին ճառագայթներից։ Այն առաւօտը ուխտաւորները թողել էին իրանց ուրախ աղաղակները, միայն լսվում էր դեռ չմոռթուած դառների բառաչիւնը, տանտիկինների հրամայական ձայները, որ կամ սրան նրան գործի էին շտապեցնում և կամ մանուկների վերայ էին բարկանում, որոնք ցրտից ըստիպուած՝ հնոցներից չէին հեռանում։ Ով որ գործ չունէր, գնացել էր վանքը ջերմեռանդ աղօթելու իրանց նպատակներին կատարում ստանալու յոյսերով։ Չ'նայելով այդ խաղաղութեան, բայց մի քանի անձինք, երիտասարդ, հարս կամ օրիորդ, որոնք ցաւ ունէին սրտերում, հեռացել էին բազմութիւնից և առանձնացել էին մի ձորակում կամ մի հովտի գոգում քարի վերայ տխուր և բնութեան զմայլելի

տեսարաններից ու ձայներից իսպառ յափշտակուած՝ մոռ-
ծումէին անհուն թախծութեամբ։ Ահա խորունկ հառաչ
եց և այն հառաչանքի հետ դուրս ցոլացին մի քանի կա-
թիլ արտասուքներ առանձնացած նազելի կոյսի աչերից։
Ոչ ոք չէր կարող հասկանալ թէ ինչ բողոք էր այն. դուցէ
նա լսեց սոխակի ձայնը և յիշեց այն քաղցր ժամը, որ երբ
սիրած անձի հետ, այդու ծառոց խտութեան մէջ սիրա-
լի փայփայանքներ էին անում, առանց ուշ դարձնելու սո-
խակի գայլայլիկներին*)։ «Ա՜խ, անցած օրեր, երջանիկ ժա-
մեր»-դուրս թռան հառաչանքի հետ այդ քանի բառերը
կոյսի բերանից, և նա վեր եկաւ տեղից, սրբեց աչերը, տը-
խուր տրտում գնաց աւելի հեռու, նկատելով՝ որ մի երի-
տասարդ և մի օրիորդ խօսակցելով մօտենում են իրան։
Եթէ բոլոր առանձնացած անձերին մօտենայիր, նոյն թաղ-
ծալի դէմքը, նոյն արտասուքները կ'նկատէիր, բացի զոյ-
գերից։

Ս. Պատարագը վերջացաւ։ Հացկերոյթից յետոյ բոլոր ուխ-
տաւորները շարան-շարան ուղի ընկան դէպի «չարչարան-
քը»-սրբոց աղօթատեղին, որը հաղիւ մի վերստ հեռու լի-
նի վանքից, և է մի սեպակուրծ ժայռի բացուածք, ուր-
տեղ բարձրանալը ամեն ուխտաւորի համար սրբազան պար-
տականութիւն է համարվում. մահը աչքի առաջ ունենա-
լով՝ մի քանի անգամ բարձրանում են, նայելով թէ որքան
թանկագին է իր նպատակը և քանի անգամ է ուխտել
բարձրանալ։

—Տեսնո՞ւմ ես, Արփենիկ, ասաց Տիրանը, երբ բարձրացաւ
չարչարանքը—սրբերը այնքան ծունրադրութիւն են արել,

*) Բայց այժմ չկայ այն անձը, ջոկուել է նրանից։ Բարբարոս
քրդերին զոհ է դառել նա։

որ ձեռքերի ու ծնկների տեղերը յայտնի են. իսկ այս ա-
ւազանը գոյացել է նրանց արտասուքներից, որը ամենևին
չէ ցամաքում։

—Ինչու՞, Տիրան, մայրս ասում է, որ մի տարի ցամաքել է։

—Ա՛յո՛, Արփենն ջան, ցամաքում է, երբ մեղաւոր մարդ է
գալիս վրէն։

—Ուրեմն լեց մեր շերը, Տիրան, քանի չէ եկել Ասոյենց
Ադամը, հայրս ասում է, որ նա շատ վատ մարդ է, ինչ
խորհուրդ որ լինում է հայերի մէջը, գնում թուրքերին
ասում է։ Գլոողը տանի նրան։

—Արփենիկ, գիտես այս ինչ գերեզմաններ են, հարցրեց
Տիրանը, մօտենալով մի անշուք քարակոյտի (չակլ), երբ
արդէն իջել էին չարչարանքից։

—Գիտեմ, Տիրան, «հարս ու տալի» գերեզմանը չէ՞։

—Ա՛յո՛, բայց դու գիտես թէ ինչու հարս ու տալի գե-
րեզման է ասվում, Արփեն։

—Ո՛չ։

—Հարս ու տալ չարչարանքից իջնելիս, տալը վայր է ընկ-
նում ու մեռնում։ Հարսը տեսնելով տալին հասած տարա-
բախտութիւնը, ողբալով շէջում է «վա՜խ, ես ի՞նչ լուր տա-
նեմ տուն» և իսկոյն ինքն էլ կամովին ընկնում, մեռնում
է։ Ուխտաւորները հէնց այստեղ երկուսին մի գերեզման են
փորում ու թաղում։ Այն օրից մնում է աւանդութիւնը,
որ այս նոյն հարսի տալի գերեզմանն են։

Ա՛յսպէս պատմեց Տիրանը Արփենիկին հարսի-տալի գե-
րեզմանի մասին։

—Աւրջի գերեզմանն էլ տեսել ես, Արփենիկ, կրկին հար-
ցրեց Տիրանը։

—Ո՛չ։
—Նրանն էլ վանքի մօտն է. նա կենդանի ժամանակ ծառայում է եղել վանքին, նրա համար էլ գերեզման են շինել նրա վերայ։
—Դու մի՛ դալ, Արփեն ջան, սարսափելի դժուար է բարձրանալը, շատ կ'չարչարուիս, ասաց Տիրանը, ու կամայ բաժանուեց Արփենիկից և միացաւ «Ս. Մամակամայ բաժանուեց Արփենիկից և միացաւ «Ս. Մամաս-Թումաս» ուխտատեղին բարձրացող երիտասարդների և օրիորդների հետ։ Երեք ժամի չափ, խիստ դժուարութեամբ, համարեա մակլցտելով հասան վերխարի սարի գագաթը, ուր հանդստում են սրբոց ոսկորները և որտեղից կարելի է տեսնել մի քանի գաւառներ հանդերձ սահմաններով. . . և թէ Տաճկահայաստանում։
—Օ՜ֆ, Արփեն ջան, լաւ որ չ'եկար, հոգինելու քիչ մնաց դուրս գար, ասաց Տիրանը, երբ վերադարձաւ «Մամաքարից», այսպէս է կոչվում այն ուխտատեղին։
—Այնտեղ էլ վանք կայ, Տիրան, հարցրեց Արփենիկը։
—Ի՞նչ ես ասում, Արփենիկ, կանգնելու տեղ անգամ չ'կայ, հազիւ մի քանի մարդ կարողեն համարձակ շարժուել, մանաւանդ ոչ ջուր կայ և ոչ մի բուռ հող. . .
Մինչ-դեռ նրանք խօսակցում էին, ուխտաւորաց մի մասը ճանապարհ ելաւ դէպի տուն։ Մի ժամից յետոյ այն սրբավայրը կրկին դադարկուաւ և խաղաղ լռութեան մէջ թաղուաւ սովորականի պէս։
—Տիրան, դիտես, ես էլ աղջկներու հետ գնացել էի ծաղկաքաղ, մեր խուրջինը լիքը լցել եմ ծաղիկներով, ասաց Արփենիկը, երբ որ ճանապարհ ընկան։
—Մինչև ո՞ւր էիք գնացել։
—Շատ հեռու, դու տեսնէ՞լ ես այն մեծ ջրթափը (ջրվէժ),

որ ահագին բարձրութիւնից ցած է թափվում քարի երեսից։
—Պա՜յ, Արփենիկ, ի՞նչ շատ հեռու էք գնացել, չէիք վախենում, այնտեղանք վայրի կենդանիներ շատ են լինում։
—Ինչո՞ւ պիտի վախենայինք, մեր հետ կային մի քանի երիտասարդներ, որոնք որսորդութեան էին եկել։ Հա՛, մէկ էլ յանկարծ գոգոացին սարերը, նայեցինք դեպի սարը, տեսանք, որ վայրի այծերը քարերի վերայից թռչելով փախչում էին, իսկ նրանցից մէկը գլորվում էր սարից ցած։ Ցետոյ իմանանք, որ էլի Իշխանենց Խորէնն էր եղել խրփողը։
—Օ՜հ, ես նրա հոգուն մեռնիմ, նրա հրացանի գնդակը երբէք ղուր չէ անցնում, նա թուրքերուն ու քրդերուն էլ է այդպէս խփում, երբ նրանք Հայերուն աւարում, նեղութիւն են տալիս։ Միտքդ չէ՞, Արփեն, անցեալ չէ՞ միւս տարին՝ որ քրդերը վրայ տուին (պաշարել) մեր գիւղը։ Խորէնը իսկոյն մի քանի երիտասարդների հետ բարձրացաւ եկեղեցու կտուրը։
—Այո՛, միտքս է, Տիրան, որ բոլորս փախանք, լցուանք եկեղեցի, չէ՞, ընդհատեց Արփենիկը։
—Այո՛, Արփեն ջան։ Խորէնը մի քանի հրացան վրա-վրա գոգոացուց թէ չէ՝ բոլոր քրդերը սրտապատառ փախան, մէկի դիակը թողնելով գիւղի մօտ։ Բայց յետոյ շատ փողեր փչացուց Խորէնի հայրը այն սպանուած քրդի մասին։ Ասում են կոտերով ոսկի են ունեցել, բոլորը տուգանքի տալով՝ հատել է, վերջն էլ չէ՞ որ Խորէնի եղբօր Ցարութիւնին դաշտում վար անելիս գաղտնի սպանեցին, Արփեն։
—Գիտեմ, Տիրան ջան, հառաչելով խօսեց Արփենիկը։
—Է՜հ, Արփեն ջան, դու կարծում ես Խորէնը պիտի վը-

րէժը չ'հանէ՞. . .

Նոյն օրը, երեկոյեան պահուն ուխտաւորները հասան գիւղը։

ՎԻՃԱԿԱԽԱՂ.

ԺԳ.

Համբարձման երկրորդ կիւրակի օրը Կաղզուանում մեծից փոքրը վիճակախաղութեան մէջ էին։ Որովհետև պարտէզները առանց պահպանութեան չէր կարելի թողնել, ուստի Տիրանը գնացել էր պահպանելու թէ իրանց և թէ Արփենիկենց պարտէզը, միայն այն պայմանով, որ Արփենիկը իր համար էլ վիճակ հանել տայ։ Վիճակախաղութիւնը վերջացաւ թէ չէ Արփենիկը վազեց Տիրանի մօտ, անդադար կրկնելով թէ իր և Տիրանի բազդավճիռ վիճակաերգերը։

—Տիրան ջան, ասում են, որ մեր վիճակաերգերը լաւ չեն գուշակում մեր ապագայի համար, ասաց նա, երբ հասաւ Տիրանի մօտ։

Սովորաբար, հարցրեց Տիրանը։

—Ա՛յո՛։

—Հապա ասա՛։

—Երկուսիս երգերն էլ Հեքիմենց Նուշերը ասաւ, Տիրան։ Քոնը այս երգն էր։

Օրեր կանցնին «վաղը» ասելով,
Ա՜խ, կ'մնանք մենք կարօտով,
Որպէս Սոխակ վարդի սիրով. . .
. . . . . .

—Ը՜ն, է՛յ. . . մէկ տողը մոռացել եմ, Տիրան ջան, միւ-

քը ս չէ դալիս։

—Ոչինչ, Արփենիկ, թող մնայ այն մէկ տողը, առանց նը-րան էլ հասկացվում է, որ լաւ չէ։ Այժմ քոնը ասա, Արփենիկ։

—Իմն էլ այսպէս էր։

Սակայն ես, ա՜խ, զըկվում եմ
Քո զմայլիչ գեղ պատկերէն.
Ես էլ քեզ նման տխուր եմ. . .
Դեռ կարօտ եմ աշխարհէն։

Նրանց տխրութիւնը այդ մասին երկար չ'տևեց, շուտով մոռացան ամենը և սկսեցին խաղալ, զուարճանալ մինչև իրիկուն։

—Տիրան, այս տարի էլ պիտի քնի՞նք հնձանում պարտէզները պահպանելու համար, խօսեց Արփենիկը, այգիներից դէպի տուն գնալու ժամանակ։

—Ի՛նչպէս չէ, Արփենիկ, հէնց վաղը հայրս պէտք է տեղաշորերս տանի, Համբարձմանն ենք սպասում։ բայց հայրս ասում է, որ այս տարի հայրդ քեզ չ'պիտի թողնի ինձ ընկերակցես. . .

—Ինչո՞ւ, շտապով հարցրեց Արփենիկը։

—Որովհետև մեծացել հասուն աղջիկ ես դառել, դրացիները կ'պարսաւեն, հայրդ այդպէս է ասել։

—Ի՜հ, Տիրան, բոլորովին սուտ խօսքեր են, հայրս ինձ քո հետ աշխարհի ծայրը կ'ղրկէ և այդպէս չի ասել, այդ թշնամու խօսքեր են. . .

Նրանք երկար նոյն մասին խօսելով հասան գիւղը։

ԺԴ.

Յունիս ամսի վերջերումն էր։ Արեգակը՝ ինչպէս ասում են՝ դառել էր, և թթերը հասել կաթկաթում էին գետին։ Տիրանն ու Արփենիկը էլի ստանձնել էին իրանց պաշտօնը, այն է՝ պահպանում էին պարտէզները ցերեկ գիշեր։ Ցերեկները նրանց գլխաւոր գործն էր թթերը ծառերից պահել։ Եթէ բարեբաղդաբար ծառեր չէին լինում, նրանք երկար խաղում, զուարճանում էին, մինչև որ շոքից նեղացած, խաղից դադրած՝ պարկում էին ստուերներում, և նրանց խոնջեալ մարմինները առժամանակ հանգիստ էին առնում հրապուրելի ստուերաց ներքոյ։ Անցնում էր մի ժամ, անցնում էր ստուերը նոցա վերայից և արեգակը իր ազդող ճառագայթները կիզում էր անխնայ. . . Երբ զարթնում էին նրանք, արդէն ջերմով (դող) բռնուած էին լինում, ինչպէս էին նոյն միջոցներում գիւղի համարեա բոլոր երեխաներն ու պառանկներն, իսկապէս մեծերից էլ շատերը զերծ չէին։*) Ոչքան էլ տանջվում էին նրանք ջերմից, այնուամենայնիւ ուշ դարձնող չկար, ուստի ստիպուած՝ կըրում էին ցաւի խստութիւնները, ողջ օրը քաշ գալով արևից ստուեր, ստուերից արև, թէ մեծերը և թէ փոքրերը անպայման տոկունութեամբ տանում էին ջերմի խստութիւնները, մինչև որ ցաւը ինքը սարջանում էր, որովհետև այնքան սովորական էր դառել, որ կարծում էին թէ՝ անշուշտ

*) Վերջին տարիներում համեմատաբար շատ սակաւ էր ջերմը։ Նոյն իսկ ես, 3 տարեկան հասակից մինչև 13—14 տարեկան հասակ, ամեն տարի ջերմով բռնվում էի, այդ նշանակում է, որ Կազդուանի հասարակութիւնը ևս մի քայլ քարշ է եկել ժամանակի հետ։

բնական է, չի՛ կարելի ազատվել։ Այն օրը ոչքան ուրախալի էր Տիրանի և Արփենիկի համար, երբ նրանց ջերմը չէր բռնում։*) Սակայն պէտք է ասել, ոչքան էլ որ ծնողները անտարբեր էին ջերմի առաջն առնելու համար, բայց և այնպէս սնոտիապաշտութիւնից ազատ չէին։ Օրինակ. մի օր մայրը Արփենիկին տարաւ «Ջրթի գերեզմանի» վերայ**) մոմ վառեց, խունկ ծխեց, ջերմեռանդ աղօթեց, որ իր սիրելի զաւակը ազատուի ջերմից։ Բայց իզուր. . . կրկին նոյն սև օրերը։

—Ես ջերմից պրծայ, Արփենիկ, ասաց Տիրանը, երբ ջերմից ազատուած՝ գնաց Արփենիկի մօտ—մայրս կապել տուեց մերոնց նանին. . .

—Իմն էլ Հովհաննեսի նանը կապեց, Տիրան, ընդհատեց Արփենիկը, տես, ամեն ձեռիս մի մի հատ կայ։

Նա ցոյց տուեց բաղուկներից կապած թելերը, որոնք յիշեալ պառաւը ջերմեռանդ աղօթելով, երեք հանգոյց էր տուել ու կապել նրա բաղուկներից։

—Ինչու այս օր վաղ չեկար մեր այգին, Տիրան, եթէ որ ջերմդ չէր բռնել, կրկին խօսեց Արփենիկը։

—Թթերն էինք թափում, Արփենիկ, պարապելս այս է՝ որ եկայ քեզ հանդիպելու։ Այս օր էփենք պիտի, խամը առնենք, պատրաստենք, որ վաղը կանուխ «բաստիլ»ները գըցենք, որպէս զի մայրս կարողանայ լուացք անել չէ՞ որ միւս օրը «վարդավառ է», եկեղեցի կ'գնանք։

*) Զերմ կայ՝ ամենայն օր է բռնում, ջերմ կայ՝ օր մեջոց է տալիս։

**) Ջրթի գերեզմանը մինչև օրս էլ գտնվում է մի տաճկի պարտեզում, ես չեմ կարծում թէ այն սաղապ ու անճոռնի քարի տակ որ և է անձի ոսկորներ են հանգիստ առնում։

—Իրաւ, դու քանի՞ տարի է Ս. Կարապետի պասը պահում ես, Տիրան։

—Հինգ տարի է պահում եմ, երկուս էլ պէտք է պահեմ, որ լինի եօթը, գնամ ուխտս կատարեմ, վերադառնամ նըշանուիմ, մայրս այդպէս է ասում, Արփենիկ։ Իսկ դու երկու տարի՞ է որ պահում ես։

—Այո, երկու տարի է սորանով։ Տիրան ջան, գնամ «հինայ» քաղեմ, ծեծեմ, որ վաղը ձեռներս կարմրացնենք և կարմրախաշխաշ ձեռներով գնանք եկեղեցի*)։

—Լաւ ասիր, Արփեն ջան, միայն շատ քաղէ, որ բաւականացնէ երկուսիս էլ եթէ ձեր մարգերում (բանջարանոց) քիչ կայ, արի՛ մերերից էլ քաղէ։

—Ինչո՞ւ, Տիրան, մեզ էլ շատ կայ. ասաց Արփենիկը և գնաց քաղելու։

Օրը մթնեց թէ չէ Տիրանը մնաւ անկողին և պարկաւ, որ գցած էր հնձանի բացօդեայ կտուրի վերայ, որովհետև նրանք վերին յարկ չունէին։ Նա երկար հրատուրուած՝ նայում էր աստղապատ երկնքին և հիանում էր գիշերային փայլակներով, երբ Արփենիկը ծեծած հինէն կաղամբի տերևների մէջ փաթաթած բերեց, որ հինայէ նորա ձեռքերը։

—Ի՞նչ ես փնտռում երկնքում, Տիրան, քո աստղը—հարցրեց Արփենիկը, երբ մօտեցաւ Տիրանին։ Իմն տես, այն մերոնց բարդու գլխից երևող վառվռուն աստղն է։

—Իմ աստղը ես վաղուց եմ գտել, Արփենիկ, այն դէմ ու դէմ փայլողն է։ Բայց չէ՞ որ քո աստղդ իմից քիչ հեռու էր։

—Այ՛ խ, Տիրան ջան, իմ այն աստղը այլ էլ երևում հառաջելով խօսեց նա. դուցէ ցոլացել է ընկել է վար. . .

—Տես, տես, Արփենիկ, էլի մի աստղ ցոլաց, ընկաւ Երասխի մէջ։ Մայրս ասում է՝ որ աստղերը ցոլալիս ընկնում են ծովերի ու գետերի մէջ միայն։

—Հա՞, Տիրան ջան, ասում են՝ ում աստղը երկնքից ցոլայ, վայր ընկնի, նա կ'մեռնի։

—Բայց չէ՞ որ դու այժմ էլի աստղ ունիս, Արփենիկ։

—Այո՛, Տիրան, իմն ցոլալուն պէս ես ընտրեցի մի այլ աւելի փայլունը. ուրեմն ես էլ չեմ մեռնիլ չէ՞։

Նա մօտեցաւ Տիրանին։ Տիրանը հազիւ ամրքեց նրա յուզուած սիրտը, թէև ինքն էլ էր հաւատում նոյն դուշակութեանը, և այդ բանը մոռացութեան տալու համար՝ ասաց։

—Տեսնում ես, Արփենիկ, այն էլ «Տրդատ Թագաւորի խաչն է»։

—Բա՝ «Կոստանդիանոսի խաչը» որն է. Տիրան։

—Զը գիտես, Արփենիկ, քո աստղդ մօտը չորս փայլող աստղեր են, «արօր աստղերն» էլ այն եօթը աստղերն են, որ փայլում են Հէքիմենց հնձանի ծայրից։

—Ինչո՞ւ, Տիրան, արօր աստղեր են ասում նրանց։

—Ես էլ չ'գիտեմ, Արփեն ջան։ Մի օր մայրիկիս հարցրի— «օհ Տիրան արօր աստղերի պատմութիւնը շատ երկար է» ասաց ու լռեց։ Մինչև օրս չեմ լսել նրանց խորհրդաւոր պատմութիւնը. եթէ մի օր լսեցի, ես էլ քեզ կ'պատմեմ։

—Գիտես որ, Տիրան, ես լաւ ուշացայ, բեր ձեռքերդ հինայեմ, գնամ։

Նա հինայեց Տիրանի ձեռները, տերևներով փաթաթեց և պինդ կապեց։

—Հիմայ դու էլ ի՞նչ կարող ես անել, Տիրան, ձեռքերդ կա-

*) Այժմ վերացել է մեր մէջից այդ պարսկական զաւեշտը սովորութիւնը։

պեցի, ասաց Արփենիկը։ Եւ սկսեց նրա կողերը խոնջտ անել։ Տիրանը ծիծաղեց բոլորովին թուլացել էր, բայց ի՞նչ կարող էր անել։ Արփենիկը մի քանի անգամ էլ կրկնեց իր ուրախ կատակներն ու գնաց։ Արփենիկը գնալուն պէս՝ Տիրանը կրկին զբաղուաւ աստղերով, որոնք խսպառ գրաւել էին նրա միտքը։ Երկար, շատ երկար նա մտքով թափառում էր անսահման երկընքում, տխուր և թէ ուրախ անցքերը նորից նորից կենդանանում էին նրա յիշողութեան մէջ, մինչև որ ընկաւ քնի հանգուցիչ գիրկը։

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ս. ՓՐԿԻՉ։

ԺԵ.

Հետեւեալ օրը վարդավառի շաբաթ օրն էր։ Յանկարծ վարդեհերի սարի գլխից դուրս եկան սև-սև ամպեր, դընալով թանձրացան, միմեանց շփուեցան և դղրդալով յորդ անձրև թափեցին երկրի վերայ։ Հաղիւ թէ անձրևը դադարել էր, Արփենիկը վազեց Տիրանի մօտ և հարցրեց։

—Ի՞նչպէս արիք բաստիները, Տիրան։

—Ի՞նչ պէտք է անենք, Արփենիկ ջան, անձրևը փչացուց բոլորովին—պատասխանեց նա տխրութեամբ։

—Ուրեմն, Տիրան ջան, երեկոյեան դու եկեղեցի չես գայ, կրկին հարցրեց Արփենիկը,իւր քնքոյշ դէմքին տխուր կերպարանք տալով,—մայրդ չի՞ թողնիլ։

—Ո՛չ, Արփենն, մայրս կ'թողնի, թէև մի քիչ ծնկներուն շատ խփեց անձրևը գալիս, բայց որ նկատեց զուր է՝ հանգըստացաւ, շատ կարելի է ինքն էլ գայ, և ի՞նչպէս կարելի է ինձ չ'թողնի, քանի որ ես պաս եմ, պէտք է ճաշակում։

Արփենիկը էլն ուրախացաւ, պարզեց իր մատյլ դէմքը և Տիրանին սփոփելու համար, աւելացուց։

—Ի՞նչ կարող ենք անել, Տիրան ջան, Աստծու կամեցածն է, անձրևը բոլորին էլ ՁՆասեց, որի բաստիները ՁՆասեց, որի հորացրած թուքը, որի հիրը, որի թուղը (աշանի) և որի բաքմաղը (մաթ). ամէն տեղից «վայ, վայ»-ի ձայներ էր լսվում։

—Զէ, գիտես արփեն ջան, մերը տան բաւական էր, կորկոտով էր պատրաստուած, դրա համար մայրս շատ սգաց։

Մինչ դեռ իրանք խօսակցում էին, փչեց հպարտ քամին, քշեց տարաւ փետուրի նման թանձր ամպերը դէպի Շիրակի կողմերը, և արեգակը ազատուելով ամպերից, ծիծաղում էր ցողալի երկրի հետ։ Այդ գեղեցիկ տեսարանից ցնծացին Տիրանի ու Արփենիկի սրտերը։ Տիրանը մոռացաւ ամէն ցաւ և բռնելով Արփենիկի ձեռից, ուրախ—ուրախ վազեցին «Հարսի-ինձոր» (գեալին-ալմայ) կոչուող խնձորենիների տակ, որոնք սլսլան հողմերից տատանվում էին և իրանց կարմիր պտուղների հետ ցողի կաթիլները «քրթ-փրթ» ձգում էին կանաչների վերայ։

—Լաւ կարմիրներից հաւաքիր, Արփեն ջան, որ երեկոյեան հետներս տանինք եկեղեցի։

—Լաւ ասիր, Տիրան ջան, գիտեմ «Բարձր-Աստուածածնեցիք» էլ կ'գնան «Ս. Փրկիչ», տանենք քեռանցս լուսիկին, ես շատ եմ սիրում նրան. . .

Կէս օր անցաւ, Տիրանն ու Արփենիկը իրանց մայրերու հետ եկան ճանապարհ դէպի եկեղեցի, որ այդիներից մի մղոն հեռաւորութեան վերայ էր։ Կիւրակի առաւօտեան պատարագը վերջացաւ թէ չէ՝ ուխտաւորների հետ նրանք

էլ գնացին Ս. Փրկիչ, որ շատ հեռու չէր գիւղից։ Ամեն կողմից խումբ-խումբ ուխտաւորներ էին թափում այն սրբաւայրը։ Երբ նրանք էլ տեղ հասան, արդէն բազմաթիւ ուխտաւորներ կային այնտեղ, որոնցից մի հարս մօտեցաւ Արփենիկին և ասաց։

—Սիրուն աղջիկ, ո՞ր տեղացի ես։

—Կոտրած-կարմնջեցի եմ-պատասխանեց Արփենիկը։

—Ումի՞նցէն ես, քեզ իմ եղբօրս պիտի ուզեմ, շատ դուրական ես թւում ինձ՝ կրկին խօսեց հարսը ծիծաղելով։

Արփենիկը ամօթից գլուխը կախեց և պատասխան չը տուեց։ Տիրանին բոլորովին դուր չ'եկաւ հարսի վերջին խօսքերը, ուստի նրանից հարցուց։

—Դու ո՞ր տեղացի ես և ո՞ւմ հարսն ես։

Հարսը կարծելով թէ Տիրանը Արփենիկի եղբայրն է՝ կամեցաւ լաւ պարզել իւր բարձր տան աղջիկ և հարս լինելը՝ ասաց։

—Միջնաթաղցի Սարգիս քէհի աղջիկն եմ, Բարձր-Աստուածածնին վարդապետենց տունը հարս եմ գնացել։

Տիրանը աւելի վշտացաւ, երբ լսեց, որ այն հարսը հասարակ տան աղջիկ չէր, այլ յայտնի «օձախի», որ նոյն միջոցում հռչակուած էին ողջ Երասխաձորում իրանց հիւրասիրութեամբ և բարեգործութեամբ, ուստի Արփենիկին, ակնարկեց ու միասին հեռացան հարսից, որը հիացած նայում էր Արփենիկին։ Տիրանը նպատակով հեռացուց Արփենիկին հարսից։ Նա մտածում էր չ'լինի՞ թէ սրտանց էր ասում հարսը, չ'լինի՞ թէ խլէր Արփենիկին իր ձեռից եղբօր համար։ Տիրանը այսպէս մտածելով՝ լաւ հեռացուց Արփենիկին ուխտաւորներից և նստան կարկաչահոս առուակի ափին, ուռենու տակ։ Ուխտաւորները կատարեալ իրարանցման մէջ էին, որը հերանցն էր գտել, որը քրոջը, որը եղբօրը, որը ազգականին և որը այլ բարեկամին։ Կար ժամանակ, որ դրանք բոլորը մի գիւղի մէջ էին ապրում, եկան բարբարոս ազգերը, ցրուեցին ամենին մի կողմ։

—Երևի Տիրան, Ս. Փրկիչն էլ թուրքերն են աւերակ դարձրել հարցրեց Արփենիկը, երբ արդէն հանգիստ էին առել բազմութեան աղմուկներից հեռու։

—Օ՜հ, Արփենիկ ջան, սրա պատմութիւնը աւելի ցաւալի է, խոր հառաչելով խօսեց Տիրանը։ Տէրտէրս ասում է, որ մի ժամանակ սա մի փառաւոր վանք է եղել երբ մեր գիւղն էլ եօթ տուն է եղել այն էլ բերդի պարիսպների մէջ։ Գիւղի հիմնադիրն եղել է «Կաղ-Օհան» անուամբ մի մարդ, որի անունով մեր գիւղի անունը մնացել է վերջի վերջոյ Կաղզուան։ Որովհետև մեր գիւղը եկեղեցի չէ ունեցել, ամեն մեծ տօներին բերդի դուռը փակելով՝ մեծ ու փոքր գալիս են եղել Ս. Փրկիչ ուխտ, պատարագ անել տալիս, աղօթում և վերադառնում են եղել կրկին գիւղը։ Բայց մի անգամ էլ գիւղացոցին մէկը ձախութիւն է անում, չէ գընում Ս. Փրկիչ, այլ գնում է «Կալոցի-տափ» դաշտը վար անելու։ Ախլցխայի թուրքերը, որ միշտ որսում են եղել բերդը Հայերից խլելու, օգտվում են դէպքից, վրայ են հասնում 20—30-ի չափ հրոսակներ և այնքան են ծեծում վար անող գիւղացուն, որ նա անձարացած բերդի բանալիքների տեղը ասում է (բանալիքները պահուած են լինում բոլոր գիւղացոց յայտնի սովորական տեղը)։ Թուրքերը հեշտութեամբ տիրում են բերդին։ Գիւղացիք երեկոյեան վերադառնում են ուխտից, մնում են սառած, բայց ի՞նչ կարող էին անել, արդէն եղածը եղած էր. ուստի ակամայից հեռանում են և ամեն մի տունը առանձին ընակարան է

հիմնում իւր համար։

—Ուրեմն այն օրից Թուրքերը հաստատուել են մեր գիւղում և այսքան շատացել են Տիրան, հարցրեց Արփենիկը։

— Այո՛, Արփեն ջան, այն անիծուած հայի պատճառով այն էլ։ Տէրտէրս ասում է, որ ինչքան մեր ազգը վնասներ է կրել, հայի մատը մէջն է եղել անշուշտ։ Բայց թողնենք այդ։ Նօթը տունը՝ նօթը գիւղ կամ նօթը թաղ են կազմում, կրկին սկսեց ընդհատած պատմութիւնը, որոնցից մի քանիսը դեռ կան. օրինակ. այժմեան մեր գիւղը, Պետրոս-Բերդը, Զորը և Բարձրաստուածածին, ուրտեղ այն ժամանակ վարդապետն է նստում եղել*)։ Իսկ մնացած երեքն էլ այժմեան աւերակներն են, որոնք են՝ Միջնաթաղ, Զովհար և Անջահուն։

—Զ՛ուշացո՞նք, Տիրան։

—Ինչո՞ւ ես շտապում, Արփեն, այստեղից լաւ տեղ չենք կարող գտնել, ուխտաւորի կէս մասը դեռ չէ համբուրել, մանաւանդ, որ մայրս հազիւ գտել է քրոջը և սիրով կարոտով խօսակցում են, մէկ էլ ո՞վ գիտէ, ե՞րբ կ'աեսնեն միմեանց։

—Մ՞օրաքոյրդ Պետրոս-Բերդցի՞ է, Տիրան։

—Այո՛։

—Դէհ, Տիրան ջան, սկսիր մնացած պատմութիւնը, որ

*) Թէ և ես ոչ մի տեղից չեմ տեղեկացել, սակայն եմ կարծիքով Բարձրաստուածածինը պետք է լինի Սրասխաձորի առաջնորդարանը, որի աւերը շրջակայքում կան նշանաւոր շերեմներ, որոնցից մէկը մինչև օրս տեղացիներից պաշտվում է «Վարդապետի-դերեզման» անուամբ։ Շատ կարելի է եպիսկոպոսի լինի, վասն զի տեղացիները սովորական Եպիսկոպոսին վարդապետ են անուանում, և այդ սովորութիւնը ներկայիս անցեալից է մնացել։

վերջացնես, քանի ուխտաւորը չէ ընկել ճանապարհ։

—Ա՛խ, Արփենիկ ջան, անհաւատ Թուրքերը ամեն բան տակն ու վրայ են արել։ Երբոր տիրում են բերդին, մի քանի տարուց յետոյ հայերից բռնութեամբ խլում են նաև բերդի պատկանող սահմանը, որն է այժմեան «Բուրմբեթը»։ Այնտեղի հայերը դառնացած սրտով թողնում են ծննդաբան հայրենիքը և հեռանում են գէպի օտար երկիրներ։ Գուցէ մի օր էլ մեզ օտարութեան մատնեն, հալածեն. բայց եթէ ես լաւ հասակս առնեմ, պէտք է անպատճառ վրէժ հանեմ այդ շներից։ Տէրտէրս ասում է, որ մեր գիւղերը, վանքերն ու բոլոր բերդերը դրանք են աւերակ դառուցել։ Մեր խեղճ պապերը դրանց անգթութիւններից վշտացած՝ մտել են դերեզման։

Տիրանի պատմելու ժամանակ Արփենիկը բոլորովին լուռ էր, միայն երբեմն-երբեմն խորին հառաչանքներ էր հանում սրտից. Տիրանը նկատելով Արփենիկի տխրութիւնը, շտապեց շուտով վերջացնել պատմութիւնը։

—Արփենիկ ջան, այս աւերակ վանքը, որ այն ժամանակ նայողին զարմացնում է եղել իր գեղեցիկ տեսարաններով, Թուրքերը Թաղը դրաւելուն պէս, վանքը քար քանդ են անում և սրբատաշ քարերով իրանց հնձաններն են զարդարում։ Ահա, տեսնում ես, Արփեն, դէմի երևող հնձանը, որը կարմիր ու կոփածոյ քարերով շինուած է, բոլոր քարերը վանքի քարերից են։

Տիրանը վերջացուց պատմութիւնը, բայց Արփենիկին խիստ ազդել էր, ուստի զանազան հարցեր էր առաջարկում։

—Տիրան ջան, դու չասացիր թէ՝ ինչո՞ւ աւերակ են դառել երեք թաղերը, հարցրեց Արփենիկը։

—Արդէն Միջնաթաղի մասին ասել եմ ես, Արփենիկ ջան. Զովհարցիք էլ վախենալով՝ եկել, միացել են մեր գիւղացոց հետ. իսկ Անջահունցիք Քրդերից կատարեալ աւարուելուց և մի քանի մարդիկ նրանց զոհ տալուց յետոյ, գաղթում, բնակութիւն են հաստատում «Հէրանց» աւերակ գիւղում: Դու հօ տեսել ես, Արփենիկ «Հերանց-մանուկ» ուխտ գընալիս Հէրանց աւերակ գիւղը:

—Այո՛, տեսել եմ, Տիրան, որի մէջ կայ մի լաւ վանք, չէ՞:

—Հէնց էն է, Արփեն ջան, ես մի օր քեզ կ'պատմեմ նրա պատմութիւնը: Այժմ գնանք, մայրդ կանչում է:

Մի քիչ յետոյ ուխտաւորները շարա՛ն-շարա՛ն ճանապարհ ընկան դէպի տները, բայց մինչև տեղ հասնելները՝ ոտքից ցցուել թրջուան: Վարդավառ է-ասում էին՝ և «շարը» ջուրը գլխին, ով որ մի քիչ ջոր էր մնացել: Նոյն օրը, արեգակը դեռ մայրը չ'մտած՝ հասան գիւղերը ուրախ տրամադրութեան ներքոյ:

ԽԱՂՈՂԻ ՊԱՍԸ.

ԺԶ.

Ամառը վերջին օրերին էր մօտենում: Տանձը, Խնձորը և այլ պտուղները կարմրել ու դեղնել էին, այնպէս՝ որ պըտուղների ծանրութիւնից բոլոր ծառերը իրանց ճիւղերով ճկուել էին գետին և մերթ ընդ մերթ փչող հողմերից օրօրվում էին նաղելով և իրանց գեղեցիկ պտուղներով նախշում էին թերևս կանաչ գետինը: Խաղողը նոյնպէս հասել էր ամեն տեսակով: Սև ու սպիտակ ճթերը որթերի վերայ կախուած՝ հրապուրում էին անշուշտ նայողին: Բայց դեռ

արգելուած էր, ո՛չ ոք չէր կարող նրանց մօտենալ և ուտել, պաս էր:

—Խաղողը ինչո՞ւ է պաս, Տիրան. հարցրեց Արփենիկը, երբ երկուսով ման էին գալիս խաղողոց շրջաններում, տեսնում էին հասունացած ճթերը, ինչպէս ասած է-թուքերը կուլ էին տալիս, բայց չէին կարողանում ուտել:

—Տէրտէրս ասում է, որ Արփեն ջան, հէնց խաղողն է եղել որ Աստուած արգելել է Ադամ պապին ուտելու, բայց նա չէ համբերել, վերջը կերել է ու դրախտից արտաքսուել է: Այդ յիշատակը չ'մոռանալու համար, մենք էլ պաս ենք մնում խաղողից, մինչև «Աստուածածին» (Վերափոխումն Ս. Աստուածածնի). . .

—Գալող կիրակին Աստուածածինը չէ՞, ընդմիջեց Արփենիկը:

—Այո՛, Արփենիկ, Տիրտէրը եկեղեցում կ'օրհնէ խաղողը, կ'բաժանէ և այնուհետև բոլորս էլ ազատ կուտենք:

—Ճշմարի՞տ է, Տիրան, ասում են, որ խոշոր ճթերը երկար անքաղ թողնելիս՝ տքում են-հարցրեց Արփենիկը:

—Ճշմարիտ է, Արփենիկ-պատասխանեց Տիրանը աւելի համոզուած կերպով: Հայրս ասում է՝ որ պապս խաղողնոցում ման գալիս լսել է մի ծանր տքոցի ձայն, փնտռելը գտել է տքող ճութը և երբ կտրել է, պոչից արիւն է կաթկաթել: Պապս այդ բանը Տէրտէրին յայտնել է-նա էլ խորհուրդ է տուել, որ պատանքով թաղէ, որովհետև այն ճութը Քրիստոսի արեան իսկական օրինակն է. ասել էր: Պապս էլ պատանդել ու թաղել է:

—Բա՛ դու գիտե՞ս, Տիրան, խաղողի բոլոր տեսակի անունները-իսկոյն խօսակցութիւնը փոխեց Արփենիկը:

—Այո՛, գիտեմ, Արփենիկ:

—Հապա՛, ասա՛ տեսնեմ։

Տիրանն սկսեց մի առ մի ասել։ Գոմշապտուղ, Մօռդամ շապտուղ, Բոլորպտուղ, Ի՞ծուպտուկ, Խաթուն-պարմաղլի, Մօռ-խաթուն-պարմաղլի, Ձերմակ, Ներկի, Խաս-լուսայ, Խամ-լուսայ. . .

—Էյ՛. . . Բա՛ Ծտի՛ն, ձրտկենը, Իրիցու խաղողը-իսկոյն վրայ տուեց Արփենիկը, յաղթանակ տարածի պէս։

Նրանք դեռ խօսակցում էին՝ հեռուից լսուաւ ծնած կովերի բառաչիւնները։

—Օ՜հ՜, Արփենիկ, նախիրը գալիս է, ես գնամ տաւարին դէմ։

Արփենիկն էլ նրա հետ միացաւ, գնացին դէպի մօտակայ դաշտը ուրախ, անբաժան. . .

Գ Ա Ղ Ո Յ.

ԺԷ.

Ամառը ողջոյն տուել ու հեռացել էր արդէն սգաւոր աշունից։ Մառախլապատ օրեր էին։ Անձրևը մաղուելով՝ թափվում էր յագեցեալ երկրի վերայ։ Բնութիւնը խաղաղ էր. լուռ էին և ամեն ինչ, միայն անձրևի ներդաշնակ ձայնն էր լսվում ծառերի տերևներուն շփուելուց։ Բնութեան այդ խաղաղ միջոցներում Երասխը ևս մեղմացնում է իր ձայնը, որով բնութիւնն ընդհանրապէս ներկայացնում է կատարեալ խորհրդաւոր, բայց տխուր տեսարան։ Այդ օրը նոյն իսկ տեսարանն էր կատարում։ Շահէնենց հնձանը հարս ու աղջկներով համարեայ լեցուած էր, որոնք անհամբեր սպասում էին անձրևի վերջանալուն, որպէս զի կրկին սկսէին «քաղոցը» (այգեկութ) խաղողների,

տանձերի ու խնձորների։

—Այսօր էլ չի լինի, մայրիկ, ասաց աղջկներից մէկը Արփենիկի մօրը, կրկին նորոգելով նոյն մասին ընդհատուած խօսակցութիւնը—վաղը կանուխ դանք՝ կ'վերջացնենք, ինչ կայ որ. . .

—Որդիս, չէ՞ որ վաղը Զովհարյանց պիտի գնանք քաղոց...

—Ես էլ Իշխանենց եմ խօսք տուել—Արփենիկի մօր խօսքը հատեց մի այլ աղջիկ։

—Մ'իւս օրն էլ Ոսկէնենց քաղոցն է-կրկին խօսեց Արփենիկի մայրը—արդէն երկուշաբթի-երեքշաբթի ուխտաւորները կ'թափին չորս կողմից, կաւիրեն մնացածը։

—Զէ կարելի թողնել, պէտք է աշխատենք մի կերպով այսօր ձերը վերջացնել. մենք ամենքս էլ մէկին խօսք ենք տուել վաղուայ համար,-խօսեց հարսներից մէկը։

—Շատ լաւ է ասում Վարդիթերը—ասացին հարսներից ու աղջկներից շատերը. . .

Մինչ դեռ նրանք վիճում էին, Տիրանը ներս վազեց՝ գոչելով։

—Դուրս արէք, անձրևը բոլորովին կտրուել է, արեգակն էլ դիպել (ծագել)։

Տիրանի ձայնը լսելուն պէս, իսկոյն դուրս թափան հրնձանից ուրախ ու սրտապատառ և սկսեցին քաղել առանց ուշ դարձնելու շաղի վերայ, որ թեթև շարժումից առատօրէն թափում ու թրջում էր իրանց շորերը։ Արեգակը իւր ծիրանի ճառագայթներով ծիածան էր կապել ցօղի կաթիլների վերայ, որոնք շեթ առ շեթ կախուել էին պտուղների կամ տերևաց քթերից։ Տիրանն ու Արփենիկն էլ ուրախ սրտով մրգերը կրում էին հնձանը. խաղողը լցնում էին «աղբը» (ճմրելու տեղ), իսկ տանձն ու խնձորը «խրն-

ձորատունը»։

—Դու քանի՞ խնձոր ես նախշել, Եւայ, ասաց Ոսկին իւր սրտակից ընկերուհուն, որոնք առանձնացել էին այգու խորքում գտնուող խնձորենու տակ, քաղում էին և խօսում ազատ։

—Ո՛չ մի հատ չեմ նախշել, Ոսկի,—պատասխանեց Եւան. ում համար պէտք է նախշեմ, Ղազարից յետոյ իմ բաժին աշխարհը սև է։

Ղազարը Եւայի նշանածն էր. նրանք սուրբ սիրով միմեանց սիրել և մեծ դժուարութեամբ նշանուել էին միմեանց հետ. բայց հազիւ մի ամիս այգւոց խորքերում վայելել էին իրանց կուսական փայփայանքները, մի օր բարբարոս Թուրքերը ընչին հակառակութեան համար խեղդել էին Երասխում նորան։

—Ինչքա՜, Եւայ ջան, քանի՛ քանի՛ երիտասարդներ քեզ սիրում են, մանաւանդ Զովհարցոնց Արշակը. նա քո համար խելքը կորցրել է։ Վաղը նրանց պէտք է գնանք քաղոց, մի նախշուն խնձոր կ'տամ նրան քո անունով։

Եւան ոչինչ չ'խօսեց, իսկ Ոսկին կրկին շարունակեց։

—Խնձորը ստացաւ թէ չէ՝ կ'աշխատէ քեզ տեսնել, այնուհետև շուտ-շուտ միմեանց կ'տեսնիք, կ'խօսաք, դուն էլ նորան կ'սիրես։ Արշակը շատ շատ սիրուն երիտասարդ է, Եւայ ջան։

—Է՜հ, սրանց այդին խօմ աւերակների նման է, ոչ մի երիտասարդ չէ երևում, ոչ իրանց կայ և ոչ ուրիշներն են համարձակվում մտնել—կրկին խօսեց անդարդ Ոսկին։

—Ո՞ւրեն ուրախ ես, Ոսկի, երանի քեզ՝ որ դարդ չունես։

—Լա՜ դարդ չունեմ, երկու երեք շաբաթ է, որ Արսէնին չեմ տեսել, խնձոր եմ նախշել՝ տանող չկայ, քո հետ խօմ

այդ մասին խօսել չէ լինում, կարծես թէ աղապ աղջիկ չես, առաջ այդ մասին խօսելիս՝ ծծերդ դող էր ելնում։

—Ա՛խ, Ոսկի ջան, այժմ իմ սէրս հատել է, էլ ոչ զքին չեմ կարող սիրել։ Երկու շաբաթ է չես տեսել, դարդ ես անում, բա ես ի՞նչ անեմ։ Թող Ղազարն էլ կենդանի լինէր, իմացիր, որ նա կայ աշխարհում, գոնէ մի օր կ'տեսնեմ նրան. . .

Նա էլ չ'կարողացաւ խօսել լուռ ու մունջ արտասուքի կաթիլները հոսեցին նրա գեղեցիկ այտերի վերայից. այն կաթիլները բողոք էին ընդհանուր մարդկութեան դէմ, բողոք էին բնութեան դէմ, վասն զի Աստուած սիրում է զոհեր, նոյն իսկ ինքը զոհուաւ մարդկութեան սիրուն։ Բայց աւա՜ղ. . . դեռ քանի՞ զոհեր Ղազարի նման պիտի կլանէ ազգը մարդկութեան։ Դեռ ժամը չէ հասել, սիրելի Եւայ, որ սրբէ աչերդ անմեղ, կուսական. դեռ շատ կ'բանի սուրը բարբարոսութեան. Է՜հ, Եւայ ջան, այդքան էլ մոռածել, մաշուել կ'լինի՞, Աստուած է կամեցել, ի՞նչ կարող ես անել—խօսեց Ոսկին երկար լռութիւնից վերջը։

—Աստուած այդպէս անդթութիւններ չի անիլ, Ոսկի ջան, Աստուած չէ ուզում, բայց բարբարոս մարդիկ անում են. . Ա՛խ, անգութ մարդիկ։

Վերջին խոր հառաչանքի հետ դուրս թռաւ երկու բառ միայն, որոնցով խսպառ թափեց իւր սրտից դառնութիւնը անարդարութեան դէմ։

—Մոռացի՛ր, Եւայ ջան, մոռացի՛ր նորան, հարիւրաւոր Ղազարներ կան քեզ սիրող-կրկին խօսեց անզգայ Ոսկին։

—Սուրբ սիրով սիրողը չի՛ կարող մոռանալ, Ոսկի ջան, մինչև գերեզման մտնելը։

—Լ՛Հ, անօգուտ է, Եւայ Ջան, նոյն սիրով սիրել մեկին, կ՚լինի Ղաղար, զուցէ նրանից էլ լաւ, էլ ի՞նչ ես գիշեր ցերեկ մաշվում:

—Օ՛հ, Ոսկի, ես սիրեմ ուրիշին, սիրեմ այն երիտասարդներին, որոնք չունին վրէժխնդրութեան զգացմունք. . . Է՛հ, ես չեմ սիրել ոչ ոքի, նրանք էլ մեզ նման թոյլ արարածներ են, նրանք չեն կարող սրբել մեր արտասուքները, նրանք մեզանից զանազանվում են նորանով՝ որ անզգայ են, քարասիրտ են. . .

Մինչ դեռ նրանք խօսակցում էին, Արփենիկն ու Տիրանը մօտեցան նրանց քաղաք խնձորը կրելու համար և ընդհատեցին նրանց խօսակցութիւնը:

—Երանի՜ ձեզ, մի ժամանակ ես ու Ղաղարն էլ անբաժան էինք միմեանցից ձեզ պէս, խաղացէք, զուարճացէք քանի ձեռքերդ չէ թռել երջանիկ ժամանակը. անմեղնե՛ր, ո՞վ գիտէ, ապագան ի՞նչ տեսակ պիտի վարվի ձեզ հետ. մրմնջաց ինքն իրան Եւան ու լռեց:

Հետևաբար չէ միւս օրը Ոսկինենց քաղցն էր: Արփենիկն էլ Տիրանին էր օգնում փոխադարձաբար. նրանցը քիչ էր. կէս օր անցաւ պրծան: Որովհետև Տիրանն ու Արփենիկը իրանց պարտականութիւնները կատարել էին, ուստի արգելք չ՚կար նրանց, ուր որ կամենային, կարող էին գնալ: Նրանք ճանձրանալով այդուց, մեն գալով գնացին Երասխի եզերքը, ուր փշատի ծառերի վերայ հարիւրաւոր ագռաւներ լիքած՝ կտցահարում ու գետին էին թափում փխրուն փշատները:

—Մի երդ երգե՞նք, Արփենիկ, հարցրեց Տիրանը, երբ որ նստան Երասխի մօտիկ ափին:

—Այո, Տիրան Ջան, երգենք.—պատասխանեց Արփենիկը լի

սիրով:

Նրանք ձայնակցեցին Երասխի յաւերժական ողբին:

—Որքան քաղցր է թռում, Տիրան, այստեղ երգեցողութիւնը:

—Այդ նրանից է, որ մեզ Երասխը ձայն է պահում, Արփենիկ: Եթէ որ տիրացուները ձայն չ՚պահեն, տիրացու Մովսէսն էլ այնպէս քաղցր չի կարող երգել «լոյս ղուարթը»

Նրանք բնութեան եղերալի շարժումներից գրգռուած՝ լեցուան անհուն սիրով, և այն ազատ վայրում ոչ ոք չէր կարող արգելք լինել նոցա կամքերին. . . Բերկրապատառ սրտով, անարատ հոգով միմեանց սէր բաշխեցին. . . Նրանց սիրոյ ազատ փայփայանքներին միայն վկայ էր Երասխը, որը նոյն ժամին իւր մեղմ ալիքներով ողբում էր իր քաղցր անցեալն կորուստը, սիրտ չունէր այլոց յայտնելու նրանց խորհուրդը: Արեգակը մայր մտնելու վերայ էր, նրանք էլ տուն վերադարձան տխուր տրտմագրութեամբ, վասն զի Երասխը իր ողբալի ձայնով ազդել էր նրանց, մանաւանդ որ չափազանց ուրախութեան վերջը, չափազանց տրտմութիւն էր յաջորդում բնականապէս:

ԺԸ.

Մուշնուխտի (Վարագայ Ս. Խաչ.) պասը մտնելուն պէս, հարիւրաւոր ուխտաւորներ (Վարդեհերի) թափան Կաղզուան: Տուն չկար, որ 5-10-30-ի չափ ուխտաւորներ հիւրասիրած չ՚լինէին: Մինչև նոյն շաբթու հինգշաբթի երեկոյեան ուրախութեան աղաղակներից թնդում էին բոլոր այգիները: Ամեն տեղ խաղ, պար և այլ զուարճութիւններ էր: Տիրանն

ու Արփենիկը չափից դուրս ուրախ էին. Ի՞նչ փոյթ, որ իրանց այգիներու մրգերը ուտում, փչացնում էին ուխտաւորները: Անցան և այդ անձկալի օրերը, անթիւ յիշատակելի անցքերի տպաւորութիւններ թողնելով Տիրանի և Արփենիկի սրտերում: Կրկին եղանակը դաժանացաւ, կրկին մառախլապատ օրերը ծանրացան նրանց վերայ և դաշտային աղատ կեանքից զրկուելով՝ ընկան ընտանեկան փակ կեանքի մէջ: Երբ ձիւնը փառաւորապէս զարդարեց երկիրը իւր սպիտակ վերմակով, Տիրանը էլի ընկաւ վարժապետի ճընշողութեան տակ: Նա բացի ընթերցմունքից, նաև սովորել էր լաւ գրել, ուստի Արփենիկի հայրը նորան գրագիր ապրաւ, և ով որ մի գիր էր ունենում գրել տալու, դիմում էր նորան: Գիւղացիք զարմանում էին Տիրանի աչքաբացութեան վերայ, կարծելով թէ՝ հաղարից մէկը չի կարող գրագրութիւն սովորել: Վերջապէս Տիրանը իր շնորհալի գրութեամբ դառաւ Շահէնենց տան ծաղիկը: Տիրանն ու Արփենիկը համեստութեան ծածկոցի տակ՝ վայելում էին սիրոյ նախնական քաղցրահամ պտուղը, պարուրուած երջանիկ ժամերով: Տիրանի գլխաւոր գործն էր «Նարեկից», «Կտակարանից» և «Աւետարանից» անգիր անել, միշտ ստիպում էր նորան վարժապետը: Եբեմն էլ սուրբ գրքերից պատմութիւններ էր անում Շահէնենց օգում վարժապետի կամքին համաձայն, որով վարժվում էր պատմաբանութեան մէջ:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՀԷՐԱՆՑ-ՄԱՆՈՒԿ, ԾԻՐԱՆԱԿ ԿԱՄ ՀՈՎՈՒԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ:

ԺԹ.

Զմեռն անցել էր. կրկին գարուն էր: Օրը շաբաթ էր և գեղեցիկ ու շատ գեղեցիկ օր: Զատիկը նոր էր անցել՝ թողնելով իր վայելուչ հետքերը: Խօսուն թռչունները ծառ է 'ի ծառ թռչկոտելով, քաղցրահնչիւն դայլայլիկներով մարդկանց սրտերը լցնում էին անսահման ուրախութեամբ: Ճշմարիտ է, երբ բնութիւնն ուրախ է, և կենաց աղատութիւնը վայելելու բաղդ ես ունենում մի քանի րոպէ, անշուշտ մայիսեան արեգակի պէս ծագում են սրտիդ խորին անկիւնները աշխարհիս համայն զուարճալի տեսարանները և ծաղկեցնում են թառամած սիրտդ. նամանաւանդ պատանի հասակում, երբ տակաւին չես հասած կեանքի ալեծուփ հասակին, (գիտութեան), որ նրա յեղյեղուկ ալեաց տատանումից՝ ջնջուին քո դէմ բերկրալի տեսարանները, և դու բնաւ մոռանալով կենացդ զուարճութիւնները, սկսես մաքառել նորա դէմ, որ անդ ի զուր զոհ չ'լինի դժընդակ ալեաց: Ոչ էլ մանկական տգիտութեան մէջ ես, որ չ'կարողանաս գիտութեամբ վայելել բնութեան տուրքերը... Տիրանն ու Արփենիկը պատանեկական հասակի մէջ էին, և ուրախութեան ամբիոնը բարձրացած՝ միայն ու միայն ուրախութիւն երևոյթներ էին նկատում: Աշխարհս նրանց համար բնականապէս պայծառ էր. . . Նրանց զլուխները դեռ չէին պարունակել իրանց մէջ մոքի ընդարձակութիւն,

որով կարողանային նշմարել աշխարհին ջրպետաց մեջը, որ մարդիկ լցրել են ու լցնում են չարութեամբ: Այդպէս ուրախ էին Տիրանն ու Արփենիկը. նրանց ուրախութեան գլխաւոր պատճառն էր «Հէրանց-մանուկ» ուխտ գնալը, որ նոյն պահուն ամեն կարևոր պատրաստութիւններով ճանապարհ ելան իրանցների և այլ ուխտաւորաց հետ: Նրանք այժմ աւելի սիրում էին առանձնութիւն, ինչպէս այդ յատուկ է սիրող անձանց, ուստի շտապ քայլերով բոլորից առաջ անցան:

—Տիրան, ինչո՞ւ այս դաշտի մէջ ծառերի արմատներ կան, հարցրեց Արփենիկը, երբ Երասխի կամուրջով անցան ընդարձակ դաշտը:

—Արփեն ջան, մի ժամանակ այստեղանք էս այգեստան են եղել: Հայրս ասում է, որ «Ղարաբաղ» գիւղից մի աղջկայ՝ ճակատագիրը գցել է հեռու, օտար երկիր, «տէր, ըստամբօլ» (Կ. Պոլիս): Անցնում է երկար միջոց, նրա ծնողները մեռնում են հայրենիքում առանց ժառանգի, այդ լուրը հասնում է այն ժամանակ, երբ նա զրկուած է լինում ամուսնուց և իր աչքերից, իսկոյն իւր միակ որդու հետ ճանապարհ է ընկնում դէպի կարօտալի հայրենիք, իր որդուն հայրական կայքերին տիրացնելու համար: Երբ գալիս հասնում է այս դաշտը, մայրը ձիու վերայ երկիւղով խոնարհում է գլուխը:

—Ինչո՞ւ ես գլուխդ կախում, մայրիկ, հարցնում է որդին:

—Նոր որ անցանք Երասխի կամուրջը չէ՞:

—Այո՛:

—Չէ՞ որ, զաւակս, մտանք այգիների մէջ, վախենում եմ գլուխս ծառերին դիպչի:

—Ի՞նչ ես ասում, մայրիկ, այստեղանք բոլորովին այգիներ

չկան, միայն ծառերի արմատներն են մնացել հեռու ժայռի տակ երևում են մի քանի այգիներ, երևի գիւղն է:

—Հա՜ հօ՛յ, հառաչում է մայրը, այո, զաւակս, քո ասածը գիւղի պարտէզներն են. դառի՛, որդիս, դառի՛ գնանք Կաղզուան, քուրանցս տունը, էլ չենք կարող հէրանցս կայքերը գտնել, որովհետև նրանց բոլոր այգիները այստեղանք էր:

—Հապա՛, Արփենիկ ջան, մի ժամանակ այս դաշտը այգիներով լի է եղել, բարբարոս քրդերը եկել գիւղը աւարել են, այգիներն էլ կրակ գցել վառել են, այն օրից այսօր այսպէս ամայի է մնում, և այդ երևող արմատները ծերունի անցորդներին յիշեցնում են անցեալ տխուր պատուհասը: Մի օր տէրտէրիս հետ գնում էինք Ղարաբաղ, այս տեղից անցնելիս նա պատմեց այդ մասին շատ բաներ, բայց ես մոռացայ. նա պատմում էր և լալիս:

Կէս օր չանցած՝ ուխտաւորները հասան Ղարաբաղ գիւղը: Տիրանն ու Արփենիկը հիւրընկալի տանը չկարողացան երկար մնալ դուրս եկան գնացին դէպի այգիները զբօսնելու: Ճանապարհին յիշեց մի կարճ պատմութիւն Տիրանը, որը լսել էր հօրից և ասաց Արփենիկին:

—Դու տեսնում ես, Արփեն, այս այգիներն էլ մերերին նման են: Բայց ինչո՞ւ Ղարաբաղ են (սև այգի) ասում:

—Չը գիտեմ, Տիրան:

—Ուրեմն լսի՛ր, ես այդ մասին մի կարճ պատմութիւն եմ սովորել, պատմեմ:

—Պատմի՛ր, Տիրան ջան, ես սիրով կ'լսեմ, շատ եմ սիրում քո պատմութիւնները, որովհետև դու միշտ լաւ բաներ ես պատմում, իսկ մամ ու մայրիկս էլ երբեմն պատմութիւններ են անում, բայց նրանց պատմածները շարունակ գեների, սատանաների ու մարդակերների մասին է:

—Մի ժամանակ այստեղ գիւղ չէ եղել,—սկսեց նա, երբ նստան այդու մէջ, ծառի հովանու տակ։—Մեր գիւղում մի մարդ շատ սիրուն մի աղջիկ է ունեցել, որին մի քանի թուրք երիտասարդներ գիշեր ցերեկ որսում են եղել, որ փախցնեն։

—Ա՛խ, Տիրան ջան, էլի մեր գիւղի հնութիւնը,—հարցրեց ըստ սովորոյ Արփենիկը։

—Ա՛յո, Արփեն ջան, էլի մեր գիւղի թուրքերը։ Աղջկայ մէկուճար եղբայրը անքուն դիշերներով հսկում է եղել քըրջոջ սիրտ տալով այսպէս—«Դու երբէք մի վախենալ, քոյրիկ ջան, քանի շունչս բերանումն է, ոչ ոք չի կարող քո գաղին դիպչէր»։ Իսկ թուրքերը ասում են եղել միշտ—«Ափսոս չէ՞, այդպիսի անման աղջիկը անհաւատ հայի ձեռքում մնայ»։ Վերջապէս մի գիշեր սպանում են եղբօրը և փախցնում են անբաղդ աղջկան։ Նորա ծերունի հայրը դիմում է կառավարութեան, դէս դէն, շատ է չարչարվում, որ գտնէ աղջկան նորից իրեն յանձնեն, բայց իզո՞ւր. . . Թշուառ ծերունին մարդկանցից վշտացած, աշխարհից զզուած՝ իւր պառաւ կնոջ ու ծառաների հետ հեռանում է մարդկային բնակարաններից դէպի այս ամայի վայրը։ Շինում է իւր համար մի խրճիթ ու բնակվում է, անդադար անիծելով չար մարդկանց, ողբալով որդուն ու աղջկան։ Ցնոյ Հայրս պատմում է թէ, մեր գիւղացիք ծերունուն այնուհետև «զարաբաղդ» են (սև բաղդ) ասում։ Մի ժամանակից յետոյ, մարդիկ տեսնում են այս տեղի տեղի յարմարութիւնները, դալիս բնակվում են հեռվհետ և գիւղի անունը մնում է Ղարաբաղ՝ ծերունու անունով։ Բայց տերանունը մնում է Ղարաբաղ՝ ծերունու անունով։ Բայց տերանունը այդպէս չէ ասում, նա ասում է որ—ծերունին մի այգի է տնկում և անուանում է Ղարաբաղ, դրանից էլ մնում է գիւղի անունը։

—Տիրան ջան, դու միշտ ինչպէս պատմութիւններ ես ասում—հառաչելով ասաց Արփենիկը։

—Այդպէս է, Արփեն ջան, մեր գիւղի ամէն մի քարը, ամէն մի ձորը և ամէն մի դաշտը ունի իր առանձին յաւելի պատմութիւնը։ Տէրտէրս շատ-շատ բաներ է պատմում մեր գիւղի մասին։ Նա ասում է «մեր գիւղի շրջակայքում, ամէն մի քայլ տեղը հայերի անմեղ արիւնով է ներկուած»։ . .

Նոյն օրը մնացին ուխտաւորները Ղարաբաղ գիւղում և հետևեալ առաւօտը ճանապարհ ելան, երբ նոր էր արշալոյսը ծիրանի գոյն ստացել, երբ թռչունները աղմկում էին թարմ ու խաղաղ բնութիւնը՝ սրտաբուռ ապասելով արեգակի դուրս գալուն. երբ նոր էր հովիւը հօտը փարախից դուրս քշում դէպի յօղտատ մարգագետինները, նուագելով իր սրինգը մեղմիկ զեփիւռների հետ. երբ նոր էին դուրս եկել «տափարանից» (դիշերելու տեղից) կաքաւները և թումբից թումբ թռչկոտելով՝ կոդկոդում, լեռներին արձագանք տալիս։ Ճանապարհը դեռ կէս չէր եղել, ուխտաւորները շեղուան ճանապարհից, մտան մի խուղի մէջ, որի մէջ կայ մի անշուք դերեզման։ Գերեզմանի վերայ մոմեր վառեցին, խունկ ծխեցին ու դուրս եկան, նստան երկու հսկայակազմ ուռենեաց ստուերի տակ, որոնք բարձրութեան մէջ օրօրուելով՝ հովանաւորում էին նահատակի շերիմը և կարծես իրանց ինքնայատուկ սոսափիւնով նորա եղկելի մահն էին ողբում, մինչում մեծակայ ճանապարհի անցորդներին։ Տեսարանները Տիրանի յիշողութիւնը նորոգելով վերածնեցին նորա մտքի մէջ այն նահատակի պատմութիւնը, որը սովորել էր նա իր պատմասէր վարժապետից։

—Իհ, Արփենն ջան, «Ծիրանակն էլ» (ուխտատեղի անունն է) ունի իր առանձին պատմութիւնը—խօսեց Տիրանը խորին հառաչմամբ։—Մի ժամանակ այս ուռենեաց փոխարէն ածում են եղել երկու ծիրանի ծառեր,—սկսեց նա վշտահար ձայնով.—ի հարկ է այս աղբիւրը, որ այժմ բղխում է ուռենեաց տակից, այն ժամանակ բղխում է եղել ծիրանիների տակից, հէնց այդ պատճառով էլ տեղի անունը մնացել է ծիրանակ։

—Դու էն ասա, Տիրան ջան, թէ ո՞վ է այս նահատակը՝ և ի՞նչպէս է նահատակուել, որ նրա գերեզմանը այս անմարդաբնակ վայրում է նահատակուել, հարցրեց հետաքրքիր Արփենիկը անհամբերութեամբ.

—Սպասէ, Արփենիկ, ես էլ այդ պիտի ասեմ։—Սորան էլ անխիղճ թուրքերն են սպանել, Արփենիկ, շարունակեց Տիրանը։ Սա եղել է մի հայ հովիւ։ Մի օր այս դաշտում իր հօտը արածացնելիս, մի քանի թուրք որսորդներ, քաղցած փորով ու անյաջող որսորդութիւնից վերադառնալիս, պահանջում են նրանից մի գառ։ Բայց ի՞նչպէս խեղճը կարող էր տալ, քանի որ աւելի անգթութեան կ՚մատնուէր իր քուրդ «աղի» կողմից. . . Վերջապէս թուրքերը խիստ բարկանում են, որ մի հայ հովիւ համարձակվում է իրանց պահանջը մերժել, ուստի առանց ժամանակ կորցնելու հրացանը արձակում են թշուառ հովուի վերայ, և նա իսկոյն գլորվում է գետին ու մեռնում. . . Ահա, Արփեն ջան, այն գերեզմանի մէջ հանգստում են յիշածս անմեղ հովուի ոսկորները։ Երբ նորա ծնողները լսում են իրանց որդու մահը, գալիս թաղում են հէնց ընկած տեղը և ապա կորում են ծիրանիները, նրանց տեղը մնկում են այս երկու ուռիները, որ սգի նշան է, որպէս զի միշտ իրանց սիրելի

որդու գերեզմանի վերայ օրօրուելով՝ սգան։

—Ուրեմն, Տիրան ջան, մի անգամ էլ գիտութեամբ համբուրենք հովուի գերեզմանը և գնանք, ուխտաւորները հեռանում են, ասաց Արփենիկը։

Վերկացան տեղերից, կրկին անգամ աւելի սիրով համբուրեցին այս յիշատակելի շիրիմն ու հեռացան։ Ուխտաւորները տեղ հասան կէս օր չ՚եղած։ Հէրանց-Մանուկի գերեզմանը գտնվում էր մօտ 4 սաժէն բարձրութեան վերայ, ժայռի պատուռածքում, ուր բարձրանալը սաստիկ դժուար է, սակայն չնայելով այդ դժուարութեանը, մակլցելով բարձրանում են բոլոր ուխտաւորները, իւրաքանչիւրը իր նպատակին (մուրազին) հասնելու յոյսերով վերացած։

—Ինչո՞ւ, Տիրան, այս հեշտ կողմից չենք բարձրանում,—հարցրեց Արփենիկը, երբ հաղիւ հաղ բարձրացաւ սրբի գերեզմանը, այն էլ Տիրանի օգնութեամբ։

—Ասում են՝ որ, Արփեն ջան, սուրբը չէ յօժարանում հեշտ կողմից բարձրանալ, ինչպէս, երբ թէ շատերը փորձել են, գլորվել են ցած, իսկ դժուար կողմից մինչև օրս ոչ ոք չէ ընկել։

Տիրանի մնոտիասպաշտ աւանդութիւնը շատ տրտմեցուց Արփենիկին, որովհետև սոխպուած էլի նոյն դժուար տեղից պէտք է իջնէր, որ ամենափոքր անզգուշ շարժումը կարող էր ցած գլորել ու փշուր փշուր անել։ Վերջապէս առանց վտանգի ամենն էլ իջան սրբարանից ցած ու նստան գոգաւոր հովտի վերայ, տերևախիտ ուռենու տակ, որի տակից բղխում է սառն ու համեղ մի աղբիւր և ոռոգում է նոյն հովիտը՝ կանաչներն ու ծաղիկները կենդանացնելով։ Այնտեղ փոքր ինչ հանգիստ առան, ճաշեցին և

սկսեցին պարերգութիւնը։ Տիրանն ու Արփենիկը կարճ միջոց պարին մասնակցեցին ու ծաղիկներ քաղելով՝ գնացին զբօսնելու։ Նրանք գնալով հասան «Հէրանց» աւերակ գիւղը, որի մէջ մի վանք իւր հսկայ բեկորներով յայտնում էր իր կորցրած շքեղութիւնը։ Երանք ներս մտան աւերակի մէջ թէ չէ՝ ծիծիւռնակներն ու ճայերը փռփռալէն դուրս փախան, ձուերն ու ձագերը թողնելով պատերի քանդուած խոռոչներում, բոյների մէջ։

—Մի՛ դիպչէլ, Տիրան, Աստուած սիրում ես,-խնդրեց Արփենիկը Տիրանին, երբ նա ձեռք մեկնեց թերափետուր ձագերին։

—Ես նրանց չեմ նեղացնել, Արփենն, ուզում եմ առնեմ ձեռքս, համբուրեմ ու էլի դնեմ բնի մէջ։

Նա համբուրեց բռնած ձագին, տուեց Արփենիկին, նա էլ համբուրեց, յետոյ կրկին բոյնի մէջ դրեց։

—Շուտով այս ձուերն էլ ձագեր կ'դառնան,-կրկին հարցրեց Արփենիկը։

—Այո՛, Արփենիկ, տեսնում չէս, գոյները փոխել են արդէն։

—Դուրս գնանք, Տիրան ջան, տես, մայրը ձագերին որդեր է բերել, որ կերակրէ, մեղանից վախենում է. . .

Նրանք աւերակից դուրս եկան, նստան գիւղի կիսակործան գերեզմանաքարերի վերայ։

—Արփեն, դու յիշո՞ւմ ես, որ ես Ս. Փրկչում խոստացայ մի օր քեզ պատմել այս գիւղի մասին,—խօսեց Տիրանը կարճ լռութիւնից վերջը։

—Այո, Տիրան, յիշում եմ, սրանից յարմար օր չէ լինի, շտապի՛ր, պատմէ՛, քանի ուխտաւորները ճանապարհ չեն ընկել։

—Անջահուն գիւղացիք շատ նեղութիւններ քրդերից կրելուց վերջը, թողնում են իրանց գիւղը, գալիս, նորոգում են այս գիւղը, որն էլի աւերակ է լինում և բնակվում են։ Որովհետև այստեղ աւելի անկիւն է, ուստի ևս առաւել հարստահարութիւնների են հանդիպում։ Թշուառները այստեղից էլ գաղթում են, մի մասը գիւղացոց հիմնում է այժմեան «Խար» գիւղը, մի մասն էլ չվում են հեռու, քրիստոնեայ թագաւորութեան երկիր։ Արփենիկ ջան, հէնց այն գաղթականութեան միջոցին «Մանուկ» անւամբ մի երիտասարդ անյայտանում է, ոչ ոք չէ հասկանում թէ ինչ եղաւ։ Նրա հայրը երկար փնտռելուց յետոյ, գտնում է ժայռի մէջ նորա խողխողուած մարմինը, ցաւօք սրտի նոյն տեղը թաղում է ու վշտացած սրտով, դառնացած հոգով իւր ծննդավայր երկրից հեռանում է։ Մանուկը հայրենիքից չ'բաժանուելու համար, առանձնանում է ժայռի մէջ, որ գոնէ ճգնութեամբ անցնէ իր կեանքը հայրենիքում։ բայց մի քանի օրից վերջը, մի խումբ աւազակներ Մանուկի ճշդնարանն են մտնում գիշերելու համար, նորան այնտեղ են գտնում, իսկոյն սրախողխող են անում։ Այն օրից այսօր ուխտատեղ է դառնում Հէրանց—Մանուկի գերեզմանը։ Դրա համար եմ ասում, որ մեր գիւղի ամեն մի քայլ տեղը շաղաղուած է հայերի արիւնով և ունի առանձին տխուր պատմութիւն։

Այսպէս վերջացուց Տիրանը. . . Մինչ դեռ նրանք հայրենիքի անցեալ յիշատակներն էին նորոգում հոգի մէջ ուխտաւորաց պարերգութեան ձայնը տարածվում էր հեռուլեռների մէջ և կրկին ու կրկին արձագանք տալիս։ Արփենիկը նկատելով պարի աւելի կենդանութիւնը, որ վերջանալու նշանէ, ասաց։

—Տիրան, գնանք, մենք էլ մի քիչ պար խաղանք, երևում է պիտի վերջացնեն։

Նրանք հաղիւ մասնակցեցին պարին, ուխտաւորները ուրախ սրտով ճանապարհ ընկան և երեկոյեան վերջալուսին տուն հասան։

ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

ՏԻՐԱՆԸ ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ.

Ա.

Տիրանի պանդխտութեան երկրորդ ամառն էր։ Արեգակը բարձրացած միջօրեայ դահը, իր վառող ճառագայթները սփռել էր Թ. քաղաքի վերայ ու ճնշում էր խորշելի տապով։ Պարտէզներում բոյսերն ու ծաղիկները թոշոմել էին, չնայելով որ շատ քնքոյշ և կոպիտ ձեռքեր մեծ խնամքով հսկում էին նոցա վերայ։ Շրջակայ դաշտերն ու հովիտները իսպառ մոխրացել էին, կորցրած իրենց նախկին գեղատեսութիւնը։ Քաղաքը սովորականին հակառակ՝ խաղաղութեան մէջ մրափում էր։ Երջանկաբաղդ մարդիկ հեռացել էին քաղաքից դէպի հովասուն ամարանոցները իւրեանց զուարճութիւնները շարունակելու։ Իսկ մնացեալ անբաղդ դասակարգը կամայ ակամայ զինջուցանում՝ էր շոքի սխրալի կայծը, որոնք նստոտած ստուերներում կամ «նարդի» էին խաղում, կամ դժգոհութեամբ խօսակցում էին օրուայ շոքի մասին։ Հէնց այդ միջոցին Տիրանը ծանր բեռը շալակին տանում էր մուտաւոր հոսող գետի մէջ թափելու։ Նա հասաւ գետափը, իր նեղէջ բեռը լցրեց գետի մէջ, սրբեց ճակատից հոսող քրտինքը և ծանր հառաչելով՝

նստաւ գետի աւազոտ ափին։ Օ՜հ, այն պահուն նրա միտքը սլացաւ հեռու, շատ հեռու. . . Ցիշեց քաղցր հայրենիքը, յիշեց Երասխ գետը, որի կանաչազարդ ափերին անցուցել էր իր մանկութեան անհոգ ու երջանիկ օրերը սիրասուն Արփենիկի հետ։ Կրկին անգամ խորունկ «ա՛խ» քաշեց և կիսամաղ դրութեան մէջ ընկաւ սակառի վերայ. . . Գուցէ շատ երկար տառապէր, եթէ մի այլ բեռակիր նորան չ՝ձայնէր։

—Տղա՛յ, կռո՛, յօրմ՞ քնուկ ես յուդայ, եան ֆիքը կէնիս։ Մրգամ դու լէ զլմ պէս նապլա՞ թողերիս երկիր, ճժիր թողերիս երկիր։ Վա՜խ իմ նապլու, վա՜խ իմ ճժեր, թամամ երիք տարին լմնցաւ չըմ տեսեր—հառաչեց մշակը։

—Եթէ որ ամուսնացած ես, ինչո՞ւ ես կնոջդ, երեխաներիդ թողել եկել, ախմախ.—հարցրեց Տիրանը լոկ իւր գործի տեսակէտից մոռածելով-էլ ի՞նչ դարդի համար ես ընկել օտար երկիր։

—Հայ-հոյ, մռնիմ քզի, իմ դարտեր շա՜տ ու շա՜տ է, մը բանալ զլմ դարդերսի.—կրկին խօսեց յուզուած մշեցին։—Հը՜ հա՜, մը ոչխարին խամար չկեար, մը եզանց, գմշու ու կովերի նախիր դաշտեր կ՝բռնէր. քիւրդեր եկան զմէն թանլեցին, աւրեցին տարան, մը տեղ-տուն լէ վառեցին, մացինք նօթի, ծառաւ, խալխի դռներ. քանի մի ոսկի զլմ խէր պարտ վերցուց, օրէ օր պարտը շատցաւ, չ՝կեարցինք տալ. մը օղլուշաղ եսիր մնաց պարտատէր քիւրդի ձեռ։ Մկայ չորս աղբեր վաթանից տիարկիւն ընկած, զոր ու գիշեր դադար չունինք, կեաշխատինք բալի քանի մի ոսկի վաստակինք, տանք անօրայ քիւրդին, մը բուր ու բուֆլաթ ազատինք եսրութունից։

Մշեցին կոշտ ձեռքերով սրբեց աչքերի առատ արցունքները։

քը և կրկին սկսեց. . . Բայց Տիրանը համարեայ ոչինչ չէր լսում, նա իր ցաւերի վերայ էր մտածում. երբեմն մեքենայաբար կարճ հարցեր էր տալիս, որպէս զի իր բաղդակիցը չ'սրտնեղի, որ նա անտարբեր է դէպի իր ցաւերը: «Այդպէս մշեցի բեռնակիրը իր հազարաւոր ցաւերը Տիրանին նաղլ անելով՝ գնացին նորից գործ սկսելու:

ՏԻՐԱՆԸ ՀԻՒԱՆԴԱՆՈՒՄ Է.

Բ.

Աշնան մայիսն էր—Սեպտեմբեր ամիսը: Ժամանակը անսայթակ առաջ էր գնում, սակայն Տիրանը նպատակին հասցնող գումարը չէր կարողանում ձեռք բերել: Մի ոչն օր նրա բաղդակիցները իրանց հետ տարել էին նորան քաղաքից դուրս զբօսանք: Նոյն միջոցում դաշտերը ալատուած ամրան երաշտութիւնից, նորից կանաչել էին տեղացող անձրևների շնորհիւ: Այնտեղ, կանաչների վերայ Տիրանի ընկերները ուրախ, զուարթ խաղում էին հայրենական խաղեր, իսկ ինքը մի հովտի խուլ գոգում առանձնացած՝ թաղուել էր խորին մտածութեան մէջ: Երկար ժամանակ նա մտածեց, մինչև որ քունը յաղթեց խոնջած մարմնին ու գցեց ցնորքների մէջ: Արեգակը դէպի հորիզոնը թեքուաւ թէ չէ նորա ընկերները վերադարձան քաղաք կարծելով՝ թէ նա իրանցից բաժանուելիս քաղաք է գնացել, որովհետև ակամայից էին տարել նորան զբօսանք: Տիրանը երբ քնից ըսթափուեց, զարմացաւ, աստղերը արդէն փայլում էին երկնքում: Նա սարսափած վեր ցատկեց տեղից, վազեց դէպի ընկերների խաղալու տեղը, ո՞ւրքան շփոթուաւ, երբ ընկերներին այնտեղ չ'գտաւ. . . Տխուր, վրդովուած վերադարձաւ քաղաք, բայց չ'կամեցաւ իր ընակարանը գնալ, որովհետև ժամանակը անցել էր, վախեցաւ դիշերապահներից, ուստի մի խուլ անկիւնում կգկտաւ ու քնեց: Անցաւ կէս գիշեր, փչեց սառ քամին, մտաւ Տիրանի թոքերի մէջ, և խանդարեց նրա կիսառողջութիւնը: Ծագեց լուս առաւօտ. ծագեց արեգակ, բայց նա չէր վեր կենում տեղից: Ցուրտը նորան ազդել էր և ծանր հիւանդի պէս տքում էր: Ոչ ոք աչք չէր դարձնում նորա վերայ, մինչև որ բարեսիրտ ընկերները երկար փնտռելուց վերջը՝ գտան ու տարան պարկեցուցին իւր գզգզուած անկողնի մէջ: Ո՞վ է թշուառ պանդուխտին խնամողը, եթէ իր կաթոգին մայրը սնարի մօտ կրթնած՝ չէ՛ հսկում. . . Օրէցօր նրա դրութիւնը վատանում էր: Մինչև անդամ յուսահատուաւ իր կեանքից, ուստի ընկերներից թանաք, գրիչ խնդրեց, և երբ ընկերները գնացին աշխատելու, դողդոջուն ձեռքերով գրեց հետևեալ նամակը մօրը:

«ԻՄ ԿԱԹՈՂԻՆ ՄԱՅՐԻԿ»!

—Տոչորուած սրտէս, կարօտակէզ հոգւոյս խորքերից՝ առ ըղձալի բարեւս հիւսիսի պաղ-պաղ հողմերից, որոնք միշտ սլաքացնում են մեր պարտիզի ծառերը: Երբ կ'լսես ծառերի խորշափիւնը, իմացիր՝ որ իմ թախծալի հառաչանքներով շաղաղուած են այն հողմերով: Մայրիկ ջան, կանգնիր մեր պարտիզի աւազանի (հաւուզ) մօտը և անյագաբար ներս շնչէ կենսատու օդը, կարօտդ առնիս պանդուխտ, տենչալի որդուդդ, որովհետև օդի մէջ դեռ լողում են իմ մանկութեան բերկրալի բառերն ու հառաչանքները: Երբ կ'լսես Երասխի քաղցր ձայնը, այնպէս կարծէ՝ որ քո անբաղդ որդին էլի խաղում է նորա կանաչաղարդ ափերին, և

իմ երգերս տակաւին ձայնակցում են նորա խաղաղածուփ ալիքներին։ Ներող եղիր, մայրիկ ջան, ես մինչև հիմայ մի խորհուրդ ծածկել եմ քեզանից, այժմ յայտնում եմ։ Եթէ քո մօտը լինէի, գուցէ էլի չ'կարողանայի յայտնել։ Կանչէ մօտդ Շահէնենց Արփենիկին, որին քո զաւակներից շատ էիր սիրում, այս նամակս նրա մօտ կարդալ տուր։ Ես նորան, նա ինձ՝ խօսք էինք տուել, ուխտ էինք հաստատել, որ երբ ես օտարութիւնից վերադառնայի, միմեանց հետ պսակուէինք. բայց ա՜խ, անգութ ճակատագիրս ինձ լա՜ բաժանեց, գցեց ցաւի ձեռքը, որից աղատուելու երբէք յոյս չունիմ։ Ասա՛, մայրիկ ջան, որ Արփենիկը ինձ համար շատ չ'սգայ, միայն չ'մոռանայ, երբեմն յիշէ ինձ. իսկ իմ անշուք, սգաւոր դերեզմանս պիտի ողողայ յաւիտեան. . . այս օտար երկրում։ Մայրիկ ջան, Արփենիկի հետ գնացէք, նստէք իրանց «Ձորափի խնձորենու» տակ և դիտէք Երասխի ափերում շարուած ուռենիներին, տեսէք, թէ ի՞նչպէս դողում են խրոխտ ալիքների առաջ, իմացէք, որ իմ կեանք այժմ նման է նրանց, այսօր կամ վաղը անկուշտ մահը պիտի կորզէ ու գլորէ սառն հողի գիրկը։ Եւ տեսէք, էլի իմ ծովառ արտը ծածանվում է բարակ հողմերից, թէ ղեկուած տիրոջից, խոպանացել է անվար, անմշակ։ Տեսէք, էլի «Բարի-լուսի» դաշտում նախիրներն ու ոչխարների հօտերը փռուած՝ արածում են անդարդ հոտաղների ու հովիւների առաջ։ Կամ, էլի մեր գիւղացիք քրտինքով ողողում են էն սիրուն դաշտերը. ձմերուկ, սեխ, վարունկ, բամբակ ցանում են։ Ա՜խ, էլի լսում էք «օրթմից» (հնձանի վերին յարկն է), մայրիկ ջան, գիշերները հոտաղների երգերի անուշ ձայները, որ բամին երասխի ձայնի հետ քշում, բերում է նուագ-նուագ։ Էլի լսում էք գութանի ճռինչի հետ

հոտաղների «հ ո լ ո վ ե լ հ ո»-ն։ Մայրիկ ջան, որքան բարելի երկիր է Աստուած մեզ տուել, այդ իմ ասածներից ո՛չ մէկը չ'կայ այստեղ, միայն մի բան կայ, որ ամենից լաւն է, ամենից գլխաւորն է, այն է՝ այստեղի Հայերը բոլորովին ազատ են բռնութիւնից ու հարստահարութիւններից. ոչ ոք չի «թալանում». իրանց քրտնքի աշխատանքը, իրանք են ուտում, որովհետև այստեղի տէրութիւնը քրիստոնեայ է։ Արդեօք էլի՞ քրդերը, լեզգիները, գալիս թալանո՞ւմ են մեր խեղճ գիւղացոց, էլի անգութ թուրքերը առաջուայ պէս նեղո՞ւմ են Հայերին. . . Բայց չէ՛. ես կարծում եմ, որ այժմ Աստուած ամեն երկրին էլ խաղաղութիւն ու հաշտութիւն է տուել։ Օ՜ֆ, բաւական է, ձեռքերս չեն գրում, մայրիկ ջան, մնացածն էլ դուք հասկացէք։ Բարևս հաղորդիր բոլոր ընկերներիս և բոլոր գիւղացոց։ Իմ տեղ տէրտէրիս աջը համբուրէ։ Մնաք բարով և երջանիկ։

Ձեր սիրոյ կարօտով տոչորուած,
քո անբաղդ որդիդ՝ Տիրանը.

. . . Սեպտեմբեր ամիս
Թ. քաղաք.

Կան մարդիկ, որ երբ անյուսալի հիւանդութեան մէջ են, ախորժակով պատմում են իրանց սրտերում տարիներով պահած խորհուրդներն անգամ, առանց զգալու, որ իրանց պարզ խօսքերը կարող են խիստ վիրաւորել սիրելիներին։ Այդ տեսակներից էր և Տիրանը։ Նա ո՛չ մի յուսակտուր բառ չ'խնայեց մօրը նամակ գրելիս. բնաւ չ'մտածեց. որ իր բառերը կ'թունաւորէին մօր, կամ Արփենիկի ծաղիկ կեանքը։

Գ.

Աշունը վերջանալու վերայ էր։ Տիրանի ընկերներից մի քանիսը պատրաստվում էին հայրենիք վերադառնալու, որպէս զի ձմեռան ճանկը չընկնէին։ Նա իր գրած նամակը տուաց նրանց և խնդրեց, որ անվնաս հասցնեն իր մօրը (նրանց ճանապարհը Տիրանի գիւղի մէջէն է անցնում)։ Մի քանի օրից յետոյ, երբ գնացողները ուզում էին բաժանուել Տիրանից, նա լեցուաւ հաղար ցաւերով և սկսեց երգել հետևեալ երգը։—

Սիրելի ընկերներ, ունիմ մէկ խնդիր,
Երբ որ ոտ կ'դնէք մեր անուշ երկիր,
Առէք մի բուռ հողէն, մի լաւ համբուրէք...
Ես կարօտ մնացի քեզնից, Հայրենիք։

Կամ երբ հասնիք երկիրն Արշարունեաց,
Ինձնից ողջոյն տուէք լերանց, վտակաց,
Ծաղկոտ հովիտներուն, պաղ աղբերաց այն՝
Ուր ուրախ օրերս անցան, ո՜հ, անցան։

Գնացէք, կանգնեցէք «Արգելի-լուրդ» սարին,
Բարձր ձայնով երգէք դէպի մեր գիւղին...
Ասէք, որ ողջում եմ ձայնով կողկողուն,
Հայրենեաց կարօտով, անքուն օրնիրուն։

Ասէք-նա մեռնում է ձեզանից կարօտով,
Ախ ու վախ անելով՝ այրու�, դառայ բով։

Ես Տիրանն եմ, գիշեր, ցերեկ ողբալով—
Ա՜խ Հայրենիք, քաղցր մայրիկ, Արփենիկ։

Տիրանի ընկերները նամակն առան ու հեռացան։ Նա արտասուաթոր աչքերը լուսամուտից դուրս գցած՝ նայում էր ընկերների յետքից, երբ հեզաշունչ քամին ներս շնչեց սենեակը և գիւրալի ինքնութեամբ հարեց նորա նիհար երեսին։—Օ՜խ, ի՜նչ անուշ հոտ էր. անուշիկ հովեր, արդեօք մեր գիւղին էլ հանդիպո՞ւ էք, կարծես Արփենիկիս ծաղկոցի հոտը լինէր.—մրմնջաց Տիրանը և սկսեց կրկին երգել։—

Ա՛խ, անուշ հողմեր, փչէ՛ք դէպի այն,
Ուր իմ Հայրենիք—իմ ծննդարան.
Տա՛ր, հարէ՛ ղեփիւռ, սեաւ մաղերուն,
Ուր յիշէ ինձի մէկ պահ սիրուհիս։

Հարէ, սթափէ, խորին մրափից,
Ուր յիշէ անցեալ, իրան ժամերից...
Թող նա հառաչէ-«ախ անցած օրեր...»
Թափէ՝ աչքերից սառըն կաթիլներ։

Մէկը կայ այնտեղ սո՜ւգ, անմխիթար,
Դեռ սպասում է, սրտերումն ուխտ կար...
Մեղմասուն սուայ սիրուն այտերին,
Սրբէ՝ արտասուք աչքից բնաւին։

Գ.

Գարունը նոր էր բացուել և բաց էր արել թշուառ մարդկանց ապրուստի կապերը։ Տիրանը ողջ ձմեռը հիւան-

դութեամբ անցնելով, գարնան հետ լոյս էր ընկել սև, մութ յարկի տակից։ Արդէն նրա պանդխտութեան երրորդ գարունն էր, ուրեմն լրացել էր ութսեալ ժամանակը, բայց ի՞նչպէս վերադառնար Հայրենիք, երբ մի կոպէկ փող չունէր, (նորա վեց ամիս հիւանդութեան միջոցում երկու տարուայ դառն քրտինքի աշխատանքը անխնայ ծախսուել էր ընկերների ձեռքով) և ի՞նչ յուսով գնար տուն, քանի որ փողի կարևորութիւնն էր նորան գցել օտարութեան մէջ։ Տիրանը երբ նորից ձեռք առաւ աշխատանքը, որ նպատակին հասցնող գումարը կազմէ, և որովհետև գարնան սկիզբն էր, տարագնաց թռչունները նորից վերադառնում էին Հայրենի հարաւից հիւսիս։ Նա տեսնելով թռչնոց երամները, էլի եղերանքով լցուաւ, և առանձնանալով մի անկիւն, լալագին ձայնով երգեց այս երգը.—

Նորից վերադառաք, թռչուններ, հիւսիս,
Դեռ ինձ սպասում է, ա՜խ, իմ նաղելիս.
Արդեօք դուք երգեցի՞ք մէջը պարտեզիս,
Տակաւին մաշուելով սպասում է՞ զիս։

Լռի՞լ են սոխակներ այն պարտիզումը,
Թէ՝ էլի երգում են մեր անբաղդ սէրը.
Արդ ո՞վ է գիշերում վերնայարկումը.
Տակաւին բլխո՞ւմ են պաղ աղբիւրները։

Ամենը տեղերն են, թաղ, այգի և պարտէզ,
Կամ ինձորենին, մեր սիրոյ պարտէզ.
Եւ էլի Երասխը խրոխտ հոսո՞ւմ է. . .
Ա՜խ, սիրուն Հայրենիք, ո՜հ, հեռու եմ ես։

Նա երգելու ժամանակ աչքերից կաթիլ կաթիլ թափում էր արտասունքը։ Երբ երգը աւարտեց, ծանր հոգւոց հանեց վիրաւոր սրտից ու գնաց աշխատելու։

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

ԱՐՓԵՆԻԿԻ ԿԵԱՆՔԻՑ.

Ա.

Տիրանի Հայրենիքում Շահէնենց պարտէզը գարնան ընորհիւ կրկին բուրաստան էր դառել, ուր եկող թռչունները իրանց քաղցր ճռողունելով կենդանացնում էին շրջակայ վայրերը։ Վարդերը բացուել էին, երփնագեղ ծաղիկները կանաչների միջից լռիկ ճիջիկ ժպտում էին նայողի դէմ։ Մի խօսքով պանծալի գարունը նախագահում էր բնութիան համակ արարածների վերայ, բարձրացած իր սեթևեթ գահը։ Սակայն այն բոլոր տեսարանները չէին կարողանում հրապուրել Արփենիկի սիրտը։ Նա յոյժ տխուր նստած պարտէզում, ընկղմուել էր մտածութեան խորին ովկիանոսը։ Նորա միտքը սաւառնում էր հեռու անհուն ծաւալի մէջ, բայց ոչ մի տեղ հանգիստ չէր առնում, մինչև որ գտնում էր իր սրտի գեղձ առարկան, ամփոփում էր իր միտքը, հոգին այնտեղ և երկար զբաղվում էր նորանով. . . Ո՜հ, ցնորական երջանիկ ժամեր. . . յանկարծ սթափվում էր. . . ա՜խ, խափո՞ղ յոյսեր, ունայն յոյսեր, ինչո՞ւ խափեցիք, ինչո՞ւ շուտ անցաք.—խօսում էր նա ինքն իրեն։ Կրկին երկինքը մառախլապատ է. . . կրկին պարտէզը թվում է նորան որպէս ամայի աւերակ, իսկ թռչնոց ուրախ ձայները լսում էր ինչպէս հեծեծող սրտի դառն մրմունջները. իսկ բնութեան

բոլոր ձայները միախառնուած՝ թվում էին տխուր մեղեդիի տխուր նուագներ։ Եթէ նոյն միջոցին տարերք աշխարհի միմեանց խառնուէին, կրկին նա չէր զգալ իսկապէս։ Վերջապէս նա էր վշտահար օրիորդաց բուն պատկերը ցոյց տալիս նայողին։ Այն օրից նա զրկուել էր ուրախական ժպիտից, երբ լսել էր Տիրանի դուժաբեր նամակի միտքը, և որով թունաւորել էր իր նաղելի կեանքը։ Ահա՝ թէ ինչպէս։—Մի օր, դեռ վաղորդեան շամանդաղը արշալուսի հետ խառնուած ժամին, նա հայ գեղջկուհու սովորութեան համաձայն կուժը ուսին առած՝ գնում էր գիւղից դուրս հոսող առուակից ջուր տանելու, հանդիպաւ մի խումբ մշակների, որոնք մօտենալով նորան, հարցրին։—

—Բաջի, Ոսկինենց տուն որ մէկն է։

—Ի՞նչ պէտքէ անիք,—հարցրեց Արփենիկը իր կողմից դեռ չ՚պատասխանած։

—Ուրանց տղէն դիր մը խրկած է հետ մզեկ։

—Տիրանը։

—Խա, Տիրօն։

—Տուէք ինձի, ես նորա քոյրն եմ,—խօսեց Արփենիկը և նամակը խլեց մեկնած ձեռից ու վազեց Տիրանի մօր մօտը։

Սակայն Արփենիկը նկատելով՝ որ նամակի ընթերցումը պէտք է շատ յետանայ, նամակը տուեց Տիրանի մօրը, իսկ ինքը վազեց նամակաբեր մշեցոց կողմը։ Նա այն պարզամիտ մշեցոցէն կենդանի բառերով լսեց Տիրանի դրութեան մասին աւելի յուսակտուր, աւելի ցաւալի։ Ցարդելի ընթերցող, ինձ նման մի հանճարաղուրկ անձ բնաւ չէր կարող նկարագրել Արփենիկի հոգեկան դրութիւնը իրապէս, ուստի այդ մասին ես լռում եմ, վասն զի ձեր երևակայութիւնը առաւել ճիշտ կարող է հաղորդել ձեզ, քան իմ

անպօր գրիչը։

ԱՐՓԵՆԻԿԻ ՕՐՀԱՍԸ.

Բ.

Աշնան ժամանակ էր։ Շահէնենց պարտէզը խպառ կորցրել էր իր նախկին փարթամութիւնը։ Ծառոց տերևները դեղնել էին. վարդենիները թափել էին իրանց տերևները, ինչ Արփենիկի ծաղկոցը բոլորովին փչացել էր թէ եղանակից և թէ անտէրութիւնից։ Նոյն Արփենիկի ծաղիկ կեանքը աշնան պատկեր էր ստացել, որովհետև ցաւոց որդերը ուտում, մաշում էին օրէց օր։ Սիհարած, տխուր ման էր գալիս պարտէզում և նայում էր իր խնձորենուն՝ տեսնում թէ ինչպէս բարակ հողմերից անդամ թափվում էին նորա տերևները։—Լրացել է ժամանակ, ա՜խ, լրացել է և իմ կենաց ժամանակը, հառաչելով մրմնջաց նա։ Անցնում էին տաղտկալի օրերը և նա տակաւ-տակաւ մօտենում էր օրհասական ժամերին։ Վաղուց անցել էր ուխտեալ ժամանակը, Տիրանը չէր յայտնվում. բայց Արփենիկի առկայծեալ յոյսերը դնալով հիւծում էին։ Նա զբօսնելով՝ գնաց նստաւ այն ժայռի վերայ, ուր մի քանի անդամ բերկրալի սրտով նստել էր Տիրանի հետ, և կրկին ընկաւ մտածութեան մէջ. . .

—Ա՜խ, անցած օրեր, ցանկալի ժամեր. կրկին դուրս թռան նորա բերանից այդ մի քանի բառերը։ Գուցէ նա յիշեց այն օրը, որ Տիրանը արօրը թողեց արտում, որ վարում էր իր միակ արտը, և ինքը վազեց դէպի իրեն. . . Անձկալի յիշողութիւնները նորան ստիպեցին մեղմ ձայնով ձայնակցել Սրասխի ձայնին հետևեալ երգով։—

Գնալով անցնում է ուխտեալ ժամանակ,
Հիւծելով ուղղում եմ նուագ առ նուագ.
Բաղխելով մաշեցի, ոհ, սրտիս դիպակ,
Հասիր ինձ օգնութեան, սուզվում եմ յատակ։

Թռա՜ երջանկութիւնը ինձնից բերկրանք,
Մահուան դուժը սրտիս տուեց արձագանք.
Խրձա՛, դեռահաս եմ, իմ հոգի, իմ կեանք,
Հասիր ինձ օգնութեան, այլ ջունիմ վրկանք։

Երասխի աղբիւրը ինձ են կանչում,
Երերուն իմ կեանքիս մահ են սպառնում. . .
Կոծեալ ովկիանոսում որպէս մի ոստիկ,
Հասիր ինձ օգնութեան, կորչում եմ, կորչում։

Սէրը մարդկանց մէջ գիտութիւն է ներշնչում։ Երբ մի անհատի սէրը ընկնում է մի առարկայի վերայ, նա իւր սիրոյ առարկայի դրուատելու համար գիտութեան ծով է դառնում։ Անմշակ մտքով դառնում է նա բանաստեղծ։ Սէրը բանաստեղծութեան յատուկ նիւթ է բաշխում։ Ով որ սիրահարվում է, անշուշտ մի քանի ներբողական երգեր յօրինում է իւր սիրած առարկային, թէկուզ նա լինի մի պարզամիտ հովիւ։ Հին ժողովրդական բանաստեղծները (ուզում եմ ասել աշուղները) անուս մարդիկ էին, սակայն նրանց բանաստեղծական սիրաշաղաղ երգերը երգում էին արքայական պալատներում անգամ և զուարճացնում էին թագաւորներին, իշխաններին ու նոցա հոմանի հարճերուն։ Բացի այդ, նրանք առատ նիւթեր տուին այժմեան բանաստեղծներին իրանց առասպելական, վերացական պատմու-

թիւններով ու երգերով։ Նրանցից ամեն մէկը ուներ իւր առանձին սիրուհին, որոնց սիրուց բորբոքուած, հարիւրաւոր երգեր էին յօրինում, բնաւ չը հեռանալով իրանց սիրոյ առարկաներից։ Այդպէս էլ Տիրանն ու Արփենիկը, միմեանց վերայ սիրահարուելով՝ գրեթէ բանաստեղծ էին դառել՝ միմեանց գովաբանելու և սէր յայտնելու համար։

Արփենիկը երգը աւարտեց, թաշկինակով սրբեց աչերը և իջաւ Երասխի եզերքը։ Անցել էին և Երասխի խրոխտալի ժամերը. այն ժամանակ նա խաղաղահոս ալիքներով առանձին ցաւեր էր յայտնում, տրամակցելով Արփենիկին։ Արփենիկը այս անգամ առանձին սիրով էր զբօսնում, ամեն բանի վերայ անյագաբար նայում էր, կարծես հասկացել էր իր կենաց օրհասը, և կարօտն էր առնում սիրելի վայրերից։ Այդ օրը նորա կեանքը արդէն կատարեալ յուսահատելի էր։ Անհետացել էր նրա դէմքից ժպիտը։ Քնքուշ այտերը խապառ խամրել էին։ Մարել էր վառվռուն աչերի փայլը, միայն կամարահիւս յօնքերը վկայ էին նորա հաղուագիւտ գեղեցկութեանը։ Լուսնակաձև ճակատից բաժանուել էր լըրջութիւնը, տեղի տալով մռայլ կնճիռներին, որոնցով անագորոյն բաղդը ճիշտ նկարագրել էր կրած վշտերի քանակութիւնը։ Սևաթոյր մազերը անխնամ թափուել էին ուսերի վերայ և երբեմն սլսլող հովերից շարժուում, ծածկում էին երեսը, որից սրտնեղելով՝ կրկին յետ էր գցում։ Մի խօսքով նրանից վերացել էին կենդանութեան նշանները։ Նա երկարման եկաւ ամեն տեղ, ապա գնաց նստաւ աւազանի վերայ յօգնած, թուլացած, և վերջին սիրալեր հայեացքը դառուց իր ծաղկոցին, տեսաւ նրան դալկացած՝ սգում էր մօտակայ կորուստը։ Մի ծանր «ա՜խ» քաշեց տոչորուած սրտի յատակից, նոյն րոպէին նորա կենաց վերջին թելը կտրուաւ, և

գնաց ընկաւ մահուան անկողին։

ԱՐՓԵՆԻԿԻ ՄԱՀԸ.

Գ.

Անցնում էին օրերը, ամեն մէկը մի կաթիլ թոյն աւելացնելով Արփենիկի ցաւերի վերայ։ Նրա ծնողները թէև լսել էին իրանց դստեր ցաւերի պատճառը, բայց ի՛նչ կարող էին անել. . . շատ ուշ էր և անօգուտ։ Մայրը նկատելով դստեր անյուսալի վիճակը, կծկտել կմախք էր դառել։ Արփենիկի վերջին ժամն էր։ Նա երեսը դառուցել էր մարդկանցից և աչքերը լայն բացած՝ գցել էր երկինքը, ուր լուսագեղ հրեշտակները հազար հրապուրանքներով հանգիստ տալ էին խոստանում նրան իրանց գրկում, և նա զմայլած երկնային անպատմելի տեսարանից՝ ժպտում էր ու մրմնջում։ —Ա՛խ. . . տի. . ր. . ա. . ն. . . ջա. . . ն . . . մա. . շու. . ա՛. . . ։ մեր. . . ջա. . . ցա՛. . . ։ քո՛. . .— Նա էլ չկարողացաւ շարունակել մնացած բառերի հետ նորա անմեղ հոգին հրեշտակների գգուանքով սլացաւ դէպի երկնից բարձրութիւնը. . . յաւերժական հանգստարանը։ Այն արփիահրաշ էակները սաղմոսերգութեան զմայլելի նուագումներով և իրանց թևերի վերայ առած՝ թռուցին դէպ Եդեմեան ցանկալի պարտէզը նրա հոգին. . .

ԽՆՁՈՐԵՆՈՒ ԱՐՏԱՍՈՒԻՔԸ.

Դ.

Հետևեալ օրը մի քանի երիտասարդներ լքեալ տխրութեամբ, փորում էին Արփենիկի հանգստարանը իւր կտակի

համաձայն Խնձորենու տակ, և հառաչմամբ սրտով աւաղում էին նորափթիթ կեանքի վաղ թառամելուն։ Մի քիչ յետոյ ստուար բազմութեամբ գիւղի եկեղեցիէն դուրս տարան Արփենիկի դիակը դէպի փորուած դարանը։ Նոյն պահուն Երասխը ալիքների մեղմ ձայնով ձայնակցում էր թաղման տխուր երգերին։ Իսկ անընդհատ հողմը այն ձայները խառնելով իր հոսանքների հետ՝ քշում էր հեռու... Խնձորենին էլ իր դեղնած տերևներից հատ-հատ գցում էր դագաղի վերայ որպէս սգաւոր աչերի արտասուք, որն մի սառանձին եղերանք էր պատճառում հանդիսականներին։ Ծածկեցին սառը հողով նրա նազելի դիակը և լոկ մի բըլրակ կազմեցին վերան ու սրտաբեկ վերադառան գիւղը։ Արեգակն էլ այն պահուն հակուել էր մառախլապատ հորիզոնը և շտապում էր միւս աշխարհին հաղորդելու Արփենիկի եղկելի մահը։

ԳԱՐՆԱՆ ԱՐՏԱՍՈՒԻՔԸ ԱՐՓԵՆԻԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԵՐԱՑ.

Ե.

Արփենիկի բլրակը ամբողջ ձմեռը մնաց ձնի տակ։ Անցաւ ձմեռը, եկաւ գարունը և ամեն տեղ սփռեց իր գեղատեսիլ վերմակը։ Մտաւ նաև Արփենիկի պարտէզը, զարդարեց ծաղկախառն կանաչներով. բայց աւաղ, նորան այնտեղ չգտաւ, այլ գտաւ միայն նորա բլրակը։ Գարունն էլ աւաղեց Արփենիկի համար, արտասուք թափեց, հալեց սառուցը, փափկացուց հողը և կանաչներով ու ծաղիկներով զարդարեց այն բլրակը։ Մի քանի օրից յետո, հանճարաւոր վարպետը գեղեցիկ տիպարով շինում էր Արփենիկի անմոռացութեան նշանակը, և որի վերայ փորագրում էր հե-

տևեալ բազմատող տապանագիրը.—

«Հեռացէք, ամպեր, թող ծագէ լուսին
«Տխուր հայեացքով նայէ իմ շիրմին,
«Եւ համեստ լուսով պսակ անարատ
«Նորա տեղ հիւսէ շիրիմիս գագաթ։
«Ոսկորք հառաչեն իմ գերեզմանէս,
«Խառնուին օդի մէջ, գնան դէպ հիւսիս.
«Շնչէք, զեփիւռներ, տարէք Տիրանիս,
«Ասէք՝-նա մեռաւ, այլ չհեծէ զիս.
«Ասէք-բա՛ է լինիս թափառական.
«Արդէն Արփենիկ ոսկորներ փթան
«Խնձորենու տակ. փոխանակ նորան՝
«Կը գնաս, գտնիս նորա գերեզման . . .

Թող Արփենիկը անգարթ քնով հանգստի սև հողի տակին, ես յարգելի ընթերցողիս լուր կ'տամ պանդուխտ Տիրանից, թէ ինչ արկածներ են անցել նրա անբաղդ գլխով։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ.

ՏԻՐԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ-ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ.

Ա.

Տիրանը առողջանալու օրից սկսեալ ամենայն օր արևի ծագումից մինչև մուռը աշխատում էր, որ կարողանար իր նպատակին հասցնող գումարը ձեռք բերել, սակայն աշունը կրկին մոտեցել էր, դեռ շատ կարևորութիւն ունէր փողի։ Մի շաբաթ երեկոյ նա աշխատանքից վերադառնում էր քա-

ղաք, ճանապարհին տեսաւ, որ թռչունները երամ-երամ կազմած, կռկռալէն չվում են հիւսիսից հարաւ։ Օհ, էլի նորոգուան նորա ցաւերը։ Նստաւ մի քարի վերայ և բարձրը ձայնով երգեց։—

Անցա՛ դարուն, եկաւ ցանկալի աշուն,
Էլի ես մնացի օտար երկրում.
Թռչունք վերադառան հայրենական բուն,
Էլի ես մնացի օտար երկրում։

Երամ-երամ կազմած՝ երգում են, փնտռում,
Թողնելով հիւսիսը, հարաւ են գնում,
Դէպի քեզ են գալիս, քաղցր հայրենիք,
Էլի ես մնացի օտար երկրում։

Թռչունք իմ հայրենեաց, ինձանից հեռացաք,
Խրճանուս սգաւոր թողնք միայնակ. . .
Հայրենիք գնալու եղաւ ժամանակ,
Էլի ես մնացի օտար երկրում։

Տիրանը վերջացուց երգը և տխուր տրտում գնաց քաղաք, հասաւ հենց այն ժամանակը, երբ զանգերը անուշ ղողանջներով աւետում էին հանգստեան օրուայ գալուստ խոնջեալ մշակներին։ Նա՝ մոտեցաւ գեղեցկաշէն աւազանին, որի մէջից ջուրը ցնցուղում էր վեր-վեր և կրկին թափվում էր աւազանի մէջ վրդովելով կապոյտ ձկներին։ Աւազանը շրջապատած էր ծառերով, ծաղկունքներով և այլ բերկրաբերթ տեսարաններով։ Դու մի՛ զարմանալ, սիրելի ընթերցող, որ մեր «կռօ» Տիրանը համարձակուել էր երջանիկ մարդոց ղուարճարանը մտնել։ Աւազանը Տիրանի նախկին պարտնին

էր, որի մոտ նա ծառայում էր ձմեռը: Նորա աղնիւ բնաւորութիւնը ժլատ պարոնին այնքան դրաւել էր, որ պարոնը հաճել էր իր յետ ընկած սենեակներից մէկում Տիրանին տեղ տալ գիշերները քնելու: Տիրանը լուացուեց սառ ջրով ու նստեց աւաղանի ափին, նայում էր ձկներին: Պարոնի չորս յարկանի տները փառաւորապէս պատել էին դեղեցիկ պարտէզը, որոնց մուտքը սքողել էին խաղողի որթերը և երկար մարդկանց գլուխները անշուշտ շփվում էին նրանց տերևներին, կամ ողկոյզներին: Խաղողի որթերը ձողերի վերայով բարձրացել էին մինչև երրորդ յարկը և իրանց պարուրուած ծաղիկների հետ փառաւոր տեսքով զարդարել էին պատշգամբը, որի միջից սիրուն գլուխը դուրս հանեց պարոնի 18-20 տարեկան օրիորդը, որպէս ծովային մի յաւերժահարս՝ կամենում էր դիւթել տեսնողին, միայն գլուխը ծաղիկների միջից ցոյց տալով: Համասփիւռը (այդպէս էր անունը) վաղուց ուսումնարանից վերադառել էր տուն, ճաշելուց յետոյ մի ժամի չափ էլ քնել էր և ապա լուացուել ու երկար կոկուել էր հայելու դէմ: Սակայն պէտք է ասել, որ ամենայն օր երկար նայում էր հայելու մէջ իր պատկերին. որքան նայում էր, այնքան մեծ էր թվում իր քիթը բնականապէս, որն բաւականին պակասացնում էր իր գեղեցկութիւնը: Վերջ ի վերջոյ ստիպուած՝ մխիթարվում էր, մտածելով՝ որ իր ընկերուհիներից շատերն են մեծ քիթ (ինչպէս այդ յատուկ է այնտեղի իգական սեռին): Նա հէնց նոր էր կոկուել հեռացել հայելուց և կամենալով մի քիչ սիրտը բանալ, դուրս էր եկել պատշգամբը, որ պարտէզի խրախճ տեսարաններով զուարճանար, որպէս զի աւելի ուրախ սրտով դուրս գնար զբօսաբանները իր սրտին մօտիկ երիտասարդներին ճարելու: Նա

երբ գլուխը դուրս հանեց պաշգամբին պարուրուած թփերի միջից, տեսաւ Տիրանին և կամեցաւ մի քիչ կատակներ անել նրա հետ:

—Տիրան, լուացուել՝ լաւ ես սիրունացել. այժմ օրիորդները քեզ կ'հաւանին, չ'լինի՞ մէկին սիրում ես (նա վերջին հարցը այնպէս հեգնական ձևով արաւ, որ կարծես մշակները բնաւ սիրելու սիրտ չեն ունենալ և իրաւունք չունին սիրելու):

—Ես մի աղքատ մշակ եմ, ո՞ւմ կարող եմ սիրել, աղջիկ պարոն, պատասխանեց Տիրանը:

—Ինչո՞ւ, Տիրան, դու լաւ սիրուն երիտասարդ կ'լինիս, եթէ որ լաւ հագնուիս, կրկին խօսեց Համասփիւռը:

Տիրանը սրտնեղաւ, կարծելով, որ նա իր վերայ ծիծաղում էր (թէև անկեղծ էր խօսում Համասփիւռը), ուստի առանց պատասխանելու տեղից վեր եկաւ, որ գնայ:

—Սպասէ, Տիրան, ո՞ւր ես գնում այդպէս կոկուած, անշնորհք, պատասխան էլ չես տալիս,—խօսեց Համասփիւռը աւելի քնքոյշ ձայնով:

—Եկեղեցի պէտք է գնամ, աղջիկ-պարոն-պատասխանեց նա ամօթխածութեամբ:

—Հա՛, գնա աղօթիր Աստծուն, որ քեզ մի լաւ օրիորդ տայ բաժին,-կրկին ասաց Համասփիւռը լի հրճուանքով:

Նա շատ էր սիրում խօսել Տիրանի հետ, որովհետև աղատաբար թափում էր իր սրտից բոլոր զգացմունքները: Առհասարակ Տիրանի պէտները աղջիկ-պարոնի հպարտ հաճոյքներին մի տեսակ բաւականութիւն են տալիս, որովհետև նրանց համար հարկաւոր չէ նաղել, կեղծել և այլն: Ինչպէս այդ սովորեցնում է նորաձևութիւնը. հապա՝ վարուիլ պարզ, խօսիլ աղատ . . Տիրանը թողեց իր աղջիկ-

պարոնին ու աղօթեով գնայ եկեղեցի։

ՏԻՐԱՆԻՆ ՕԴՆՈՒՄ ԵՆ ՓՈՂՈՎ.

Բ.

Այն աշունն էլ անցաւ, որ Արփենիկը Տիրանի սիրուն գերեզման մտաւ Հայրենիքում։ Հասաւ ձմեռը և փակեց մշակների աշխատանքի աղբիւրը։ Տիրանը էլի մնաց օտար երկրում, ձմեռը անցնելով նախկին աղէ տանը. . . բայց կրկին դարունն բացուելուն պէս թողեց ծառայութիւնը, սկսեց պարապել զանազան օգտաւէտ գործերով։ Մի երեկոյ նոր էր վերադառել Տիրանը աշխատանքից, նստել էր բնակարանի դռանը, գլուխը կախած, միտքը Հայրենիքում՝ մտածում էր։ Նոյն օրուայ առաջիկայ օրը մեծ տօն էր, ուստի երջանիկ մարդիկ նախատօնակ էին կատարում՝ — Ամեն ոք պճնուած դուրս էին եկել զբօսարանները երեկոյեան զովարար օդը վայելելու։ Քնքոյշ օրիորդներն ու տիկիններն առաջիկայ տօնին պատշաճ, նուրբ ու փրփրան զգեստներով զարդարուած՝ նազանքեմ քայլերով գիմում էին հանդիսարանները իրանց ուրախութիւնները առաւել ճոխացնելու։ Քաղաքը, որ թնդում էր ուրախական ձայներից, բնաւ չէր զգում Տիրանը։ Նրա միտքը խորին մտածութեան մէջ էր։ Այն պահուն արեգակը հորիզոնից վերջին ճառագայթաւոր շողերով խաղում էր մօտակայ գետի ալիքների հետ, իսկ դաշտային հովերը աղատուած խրշելի տապից, ուրախ կատակներ էին անում ևս առաւել վազդովելով գետի խաղաղածածան մակերևոյթը ուր երկար կռում, ալեկոծում ու դուրս էին թռչում դէպի ծաղկաշաղաղ դաշտերը. . . Այն տեղ անուշաբոյր ծաղկանց վերայ դուրգուրալով, լուծում էին նրանց բուրմունքները և ապա կախարդաբար գիմում էին քաղաք ու անխտիր բաժանում էին ամենին այն եդեմեան բուրմունքից։ Բոյրաշաղաղ հովերը փողոցներում ղղղալով՝ հասան մինչև Տիրանին, հարեցին նրա բաղդից թառամեալ երեսին և ներս մտան քթածակերից։ Նա սթափուեց խոր թմրութիւնից, յիշեց. . . տատանուաւ մի քանի վայրկեան և վերջապէս ուշաթափ ընկաւ գետնի վերայ։ Մօտակայ մարդիկ տեսնելով նրան, հասան օգնութեան։ Նա անդադար ձեռքերը պարզում էր ու նորից կրծքին սեղմում, զանազան սիրային բառեր արտասանելով «Արփենիկ» բառերի հետ։ Հազիւ սրտին ջուր լցնելով՝ սթափուեց նա և ամօթխածութեամբ նստաւ տեղը։ Տիրանը նկատեց, որ իր ցաւերով հետաքրքրողներ շատ կան, և մտածեց՝ որ չի կարող ամենին առանձին պատասխանել, ուստի կամեցաւ մի երգով պարզել իր դլխի պատուհասները, և երգեց այս երգը։

Յանկարծ ընկաց հեզիկ քամին,
Անուշ հոտը ծաղիկներին,
Միտքս բերեց մեր ծաղկոցը,
Ուր գրկում էր իմ սիրուհին։

Նորա անունն է Արփենիկ,
Հարուստ ու միամօր աղջիկ.
Նրա պէս համեստ, գեղեցիկ
Բնաւ չկայ այս աշխարհին։

Ես Տիրանն եմ կաղջուանցի,
Բաղդի ձեռին, ո՜հ, մաշուեցի,

Բարբարոսութիւնն էր ինձի
Բաժանեց, ախ, արաւ գերի։

Տիրանի ձայնը լսելով՝ շատ մարդիկ հաւաքուան նրա մօտ, որոնցից շատերը չ'հասկանալով ցաւերի պաճառը՝ ասում էին.—«խիղճ կաւ, գժուիլ է»—ուստի նա մանրամասն պատմեց իր ցաւերը։ Պատմելու ժամանակ, մի քանի անգամ նրա աչքերը արտասուքով լցուան։ Նոյն իսկ լսողներից շատերը արտասուեցին, երբ լսեցին նրա անթիւ նեղութիւնները քրդերից ու թուրքերից կրած, որոնք պատճառ էին դառել Տիրանի անբաղդութեանը։ Ներկայ մարդիկ որքան ցաւեցին Տիրանի վերայ, միայն այսքան կ'ասեմ, որ մի քանի բարեսիրտ երիտասարդներ մի ցուցակ կազմեցին և բոլոր խանութները պտտուելով՝ այնքան փող ժողովեցին, որի կէս մասը Տիրանին նպատակի կ'հասցնէր։ Երբ այն մեծ գումարը ստացաւ նա, ուրախութիւնից քիչ մնաց գժուէր, ուստի կամենում էր հէնց նոյն ժամին ճանապարհ ընկնել, թէև օրը արդէն տարաժամել էր։ Նա վերջին գիշերը անհամբեր, բայց շատ ուրախ անցուց, որովհետև հետաքրքիր, կամ այն երիտասարդները, որոնք ըմպել էին սիրոյ դառն կամ համեղ բաժակից, հաւաքուել էին նրա մօտ և նորից-նորից պատմել էին տալիս նրա գլխի դալիքները։ Հետևեալ օրը Տիրանը ուրախ սրտով բաժանուաւ Թ. քաղաքից և ճանապարհ ընկաւ դէպի կարօտեալ հայրենիք։ —Ի՞նչ սիրով պիտի ինձ դիմաւորեն մայրս, Արփենիկը, եղբայրներս և ընկերներս— խօսում էր նա ինքն իրան. . . Բայց երբեմն էլ նրա շփոթուած երևակայութեան մէջ պատկերանում էր Արփենիկի սոսկալի գերեզմանը. . .

ՏԻՐԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻՔ.

Գ.

Տիրանը ճանապարհ ընկնելու օրից, ամենևին չէր դադարում ճանապարհորդելուց։ Չը ձանձրացնելու համար ընթերցողին, այլ չեմ գրում թէ ինչեր անցան նրա գլխով ճանապարհորդութեան միջոցին։ Անընդհատ գնալով՝ մի գեղեցիկ օր հասաւ այն սարի գլուխը*), որտեղից պարզօրէն երևում է Կ. գիւղը հանդերձ սահմանով։ Տիրանը երբ այդ տեսարանները տեսաւ, լցուաւ հազար ցաւերով։ Նախազգացմունքը կարծես յայտնել էին նրան իրական դժբաղդութիւնը, որովհետև շարունակ տխուր էր նա։ Այնպէս յուզուած՝ տխուր նստաւ մի բեկորի վերայ և սկսեց բարձր ձայնով երգել այս երգը։—

Նորից արժանացայ տեսնել քեզ, պարտէզ,
Էլի կանաչել ես, փառք, չորացել չես,
Բայց դու ինձ այն ասա, ողջ է սիրելիս.
Դեռ բացուած է, թէ՝ թառամեց իմ վարդս։

Վաղուց է սոխակը զլկուել է վարդէն.
Տխուր, պանդուխտ, թափառ բարձր սարերէն
Երգում է իր սէրը վարդին հեռուէն.
Ա՛խ, չ'գիտեմ թարմ է, թէ՝ խամրեց վարդս։

*) Տեղական կոչումով, «Ղաշլ-գլուխ» որն Երասխաձորի շրջանքն է։

Արտասուալի աչքով, սրտով, երերուն
Ձեզի եմ հարցնում, նախնեացս արբունք—
Խնդրում եմ, տուէք ինձ մի տեղեկութիւն,
Արդեօք դեռ նա ողջ է, երգո՞ւմ է վարդս։

Ձեզ էլ եմ հարցնում, հայրենի սարեր,
Ասացէք խնդրեմ, դեռ երգո՞ւմ է իւր սէր.
Անցել է գարունը, թոռմել են վարդեր,
Իսպառ ես անտեղեակ, փնտռում եմ վարդս։

Այստեղից տեսնում եմ նրա կեցարան,
Կարծես պատկերանում է բոշ, անտիրական,
Սոխակն եմ՝ անտարբեր և կողկողական,
Կորուցել եմ ժամը, աւա՜ղ իմ վարդս։

Տիրանը երգը աւարտեց, բայց ոչ ոքից մի տեղեկութիւն չ՚ստացաւ, և աւելի խոր խոցուած՝ թողեց գեղեցիկ վարդերը, շարունակեց առաջ գնալ։ Նա երբ տեղ հասաւ, ուղեղ դիմեց Շահէնենց պարտէզը, առանց տուն գնալու, որովհետև պարտէզը ճանապարհի վերայ էր, մանաւանդ որ նա մեծ յոյս ունէր Արփենիկին այնտեղ գտնելու։ Երբ մըտաւ պարտէզ, արեգակը իր վերջին նսեմ փայլը ևս թըռուց սարերի գագաթից և խաւարը քօղարկեց Արշարունեաց խոր-խոր վայրերը։ Տիրանը Արփենիկին չ՚գտաւ պարտիզում, սրտաթունդ բարձրացաւ այգու հնձանի վերին յարկը, ուր շատ անգամ զիշերել էր Արփենիկի հետ, բայց այնտեղ էլ չ՚գտաւ։ Մօտեցաւ ծաղկոցին. տեսաւ որ անցեկութիւնից փչացել էր բոլորովին, որից աւելի յուզուած՝ նստաւ աւազանի քարի վերայ ու սկսեց յուսահատ սրալը

որովհետև պարտէզի ամեն մի նշանից յայտնապէս երևում էր Արփենիկի երկար ժամանակ բացակայ լինելը պարտէզից։ Մի քանի րոպէից յետ, Տիրանը արդէն անճնաւոր էր եղել երազական ցնորքներին։ Նոյն պահին ամեն կենդանի արարածներ հանգիստ էին առել իրանց բնակարաններում, սոսկ զիշերային խօսնակներն էին խանգարում լռութիւնը։ Հեռուից լսվում էր բուի տխրալի ձայնը։ Երասխի շամփոտների ու ճահիճների միջից գորտերը արձակել էին իրանց անախորժ ձայները. աւելի սոսկական էր վայրի բադերի կռընչիւնները, որոնք դեռ լողում էին Երասխի կոհակներում։ Մերթ ընդ մերթ բարի-լուսի դաշտից անուշաբոյր հովերը քշում, բերում էին իրանց հոսանքի հետ հովուի սրնգի նուագը կամ միավանկ բառը, որով նա զգաստացնում էր հօտին հսկող գամբռներին։ Երբեմն էլ Երասխի ալիքները կռռվում էին հողմերի հետ, խրոխտ աղմուկ էին բարձրացնում և ամեն շշուկ, ձայն կլանում էին, մինչև որ նորից զնջանում ու ներդաշնակում էին համայն ձայների հետ, և բոլոր ձայները միախառնուած՝ կազմում էին մի զմայլելի նրուագ ու մղվում էին հեռո. . . այն ձայնը լսողի սիրտն ու հոգին վերացած՝ թռչում էր երկնից անսահմանութեան մէջ. . .։ Բնութեան այդ քաղցր ձայները Տիրանին օրօր էին երգում։ Նա երկար մնաց ցնորքների մէջ, մինչև որ նրան սթափեցրեց այգեպանի զել ձայնը։ Այգեպանը ջրում էր այդին և իր բորբոքուած սիրտը ամոքելու համար՝ երգում էր հին աշուղների երգերից մէկը տաճկաբարբառով։ Երգի միտքը պատմութիւնից հեռու չ՚լինելով՝ գրում եմ այստեղ։

Ո՞վ դու յաւերժահաս, տխրամած լուսնեակ,
Սահում ես սիգաձ՚եմ, թախծուն յարական.

Գէթ մի օր չ'տեսայ պայծառ, գոհունակ,
Մինթէ դուն ինքդ ցաւեր ունիս ինձ նման։

Բայց քո ցաւերդ իմին չեն հաւասարուիլ,
Ինձ պէս դժբաղդ աշխարհում այլ չի ճարուիլ.
Տրտմութիւնդ ծանր դարդ չեմ համարիլ,
Վասն զի չէ սպառում ցարդ յաւիտեան։

Սէրն է մարդուս միայն կեանք սպառողը,
Դեռ ծաղիկ հասակով շերիմ տանողը,
Սէրն է գցում դէմքին տրտմութեան քողը,
Էլ ինչու ես ինձպէս տխուր մշտական։

Իսկ ես սիրոյ ցաւից վաղ եմ յաղթուել,
Ուժգին բախումներից մաշուել, սպառել,
Շուտով կ'ինջնեմ 'ի հող և լուսին դուն էլ
Կրկին տխուր նայէ շերիմիս վերան.

Այդպէսն լռեց, բայց Երասխը անընդհատ երգում էր իր միւնոյն երգը։ Տիրանը կրկին ընկաւ հրապուրիչ ցնորքների գիրկը։ Այն միջոցում տասն ու հինգը անց բոլորակ լուսինը նկատելով՝ որ ամեն կենդանի քնի մէջ է, երկիրը խաղաղացել է, յուշիկ-յուշիկ դուրս եկաւ հօրիզօնից, համեստ հարսի նման բացեց երեսի քողը և իր համեստ լուսը տարածեց ամեն տեղ։ Լուսինը իր ոսկեդոյն շողերը կաթեցուց խնձորենու ճիւղերի միջից ու պսակեց Արփենիկի շերմաքարը։ Սև ագռաւների (ղարաղաղ) մի խումբ, որ թառած էր Տիրանի գլխի վերև, ծառի վերայ, երբ լուսինը ծագեց, թռչունները նկատեցին նրա շարժումները թէ չէ՝ թռփռտալէն թռան, հեռացան, որից զարթնեց նա

և տեսաւ, որ խնձորենին խիտ պտուղներով փայլում էր լուսնի դէմ։ Լուսնի լուսով նաև տեսաւ մի քանի կոնդեր. . . վեր եկաւ տեղից ու վախեվախ գնաց այն կողմը, բայց ի՞նչ տեսաւ. . . սիրոյ վրանը գերեզմանոց էր դառել— Արփենիկի շերմին շրջապատել էին մի քանի մեծ ու փոքր գերեզմանաքարեր, որոնց թուին էր նաև Արփենիկի մորը. նա չ'դիմանալով իր միակ սիրելի դստեր վաղահաս մահուան, մի քանի օրից յետ գիրկն էր առել սիրասուն զաւակին։ Արփենիկի հայրը իր դստեր և կնոջ սիրոյ համար թոյլ տուաց գիւղացոց, որ իրանց հանդուցեալները իր պարտիզում թաղեն։ Տիրանը երբ լուսնի լուսով որոշեց «Ատ հանգչի ոսկորք Արփենի, 16 տարեկան ծաղիկ հասակի հանդիպեցի սիրոյ ի վառ կրակի. այրուեցայ, աւաղ, 'ի հող շուտ մտի» բառերը քարի վերայ՝ իսկոյն աչքերը սևացան, ոտքերն ու ձեռքերն թուլացան, լեղուն բռնուաւ, գլուխը պտտուեց, ողջ մարմնով սկսեց դողալ և վերջապէս ուշաթափ ընկաւ գերեզմանի վերայ. . .

ՏԻՐԱՆԻ ԿԵԱՆՔԸ-ԱՐՓԵՆԻԿԻՑ ԶՐԿՈՒԱԾ.

Դ.

Տիրանը յոգնած լինելով, մինչև լուս կիսաքուն մնաց գերեզմանի վերայ ընկած։ Երբ զարթնեց, արդէն արեգակը ծագել էր և Արփենիկի շերիմը իր դէմ բոլորում էր։ Նա բոլորովին իրեն կորցրած՝ սկսեց անզգայաբար խօսել.—Էլ ի՞նչ ես սպասում, Տիրան, ի՞նչդ մնաց այս աշխարհում. . . ո՞ւմ համար պէտք է ապրիս. . . բայց չէ՞ որ դու զոհեցիր նոյան քո յիմար վարմունքով և այժմ կամենում ես ապրել, կենաց վարել. . . լա՜ իմանաս, անգութ, նա քո սիրոյն

զՀուեց. . . չէ՛ Թողնիլ, չէ՛ Թողնիլ քեզ հանգիստ արդար երկինքը, կ՚լուծէ՛ վրէժը, կ՚լուծէ՛. . . քանի վաղ է, քանի չէ անցել ժամանակը, դուն էլ զՀուիր նրա սիրուն, կատարիր պարտքդ—։ Լռեց նա և դռտիից հանեց փոքրիկ դաշոյնը (խանչալ), մի քանի լոպէ ձեռքում բռնած՝ մըտածեց և ապա կրկին խօսեց—բայց չէ՛, դու աւելի մեծ պարտականութիւն ունիս կատարելու, Տիրան, դու պէտք է Արփենիկի պատմութիւնը դրես, որպէս զի յաւիտեան անմոռանալի մնայ նրա բարի յիշատակը. կարդան հայ աղջըկունք և ընդ միշտ յիշեն։ Նա լռեց և սկսեց դառն արտասուք թափել, սակայն արտասուքներն ևս զովութիւն չը կարացին տալ նրա սրտին. . . Կրկին անգամ դրկեց դերեզմանաքարը, կրկին անգամ ընկաւ ցնորքների մէջ և հեծեծում էր, մինչև որ եկաւ այգեպանը, որը Տիրանի փոքր եղբայրն էր, (Տիրանի նամակը ստանալուն պէս, մայրը խնկոյն կաթուածահար էր եղել ու մեռել, իսկ երկու եղբայրները մնացել էին որբ, անտէր։ Արփենիկի հայրը նրանց տարել էր իր տունը և խնամք էր տանում։ Մէկը որ մեծն էր, ծառայում էր տանը, իսկ փոքրին որդեգրել էր Արփենիկի խնդրքին համաձայն, որը պահպանում էր պարտէզը) և մօտենալով ձայն տուեց «ով ես»։ Տիրանը չ՚լսեց. նա աւելի մօտեցաւ և վախկոտ ձեռներով բռնեց Տիրանի ձեռից ու քաշեց, որից նա զարթնելով նկատեց՝ որ իր ըզբաղմունքները երազներ են, կրկին անգամ քարը դրկեց առանց աչքերը բաց անելու, որպէս զի փայլուն երազներից չ՚զրկուի։

— Տէր Աստուած, այս ով է՝ որ այսքան սիրում է քրոջս դերեզմանը-փնթփնթաց նա, կրկին անգամ ձայն տալով.

—Ա՜խրէ՛. . . ինչո՞ւ խանդարում էք իմ քունը, անգութներ.—խօսեց Տիրանը և բացեց աչքերը, ի՜նչ տեսաւ. . . իր հարազատ եղբօրը.—Ա՜խ, Արշաւիր ջան, դո՞ւ ես,— արտասանեց նա և փարեցաւ եղբօր վզովը։

Կարճ միջոց անխօս մնալուց յետո, Տիրանն սկսեց իւր անվերջ հարցերը։

—Ինչո՞ւ, աբէր*) ջան, մայրիկիս Թողած, Արփենիկի գերեզմանն էիր գրկել լալիս-դեռ չ՚պատասխանած՝ իր կողմից հարցրեց անմեղ Արշաւիրը։

—Վա՜խ, Արշաւիր ջան, մի՞Թէ մայրիկս մեռել է. . .

—Նա՝ մեռաւ քո նամակը ստանալուն պէս, աբէր, որի մէջ գրել էիր՝ որ շո՜ւտ հիւանդ եմ։ Տէրտէրս ասում էր «խեղճ կինը տղի կսկծուն մեռաւ»։

Տիրանը նոր զգաց իր նամակի Թունաւորող միտքը, բայց արդէն եղածը եղած էր։ Փոքրիկ Արշաւիրը լեռվին բաւականութիւն տուեց Տիրանի հարցերուն, մանաւանդ Արփենիկի մասին, որովհետև Արշաւիրը Տիրանին շատ նման էր, ուստի Արփենիկը մօտից չէր հեռացնում և նորանով էր կիսով չափ մխիթարվում։ Տիրանը իրեն հասած դժբաղդութիւնները մանրամասն լսելով՝ նստաւ դերեզմանի վերայ և ողբաձայն երգեց այս վերջին երգը։

Նախ շատ էին ցաւերս, արդ եղան անթիւ,
Տկար եմ, չեմ տանիլ կորուցի հաշիւ,
Այդ բօթն էլ դու ինձ նոր հաղորդեցիր,
Տկար եմ, չեմ տանիլ կորուցի հաշիւ։

Բաղդաւոր եմ, պանդխտութեան դիմեցի,
Հայրական հնոցը խսպառ մարեցի,

*) Աբէր, աղբէր—եղբայր բառի աղաւաղումներն են։

Կենացս վառ ճրագ մնաս կորուցի,
Դարձայ աղաւաղեալ ոլորակս չոր խռիւ։

Երանս, եթէ ալիքներովդ յորդացեալ
Կամիս մարել, չես կար, սիրտս հրդեհացեալ,
Ուրեմն երդէ ողբեր, կեանքիս խաթարեալ,
Քո գոռ ալիքներով միշտ դարիւ դարիւ։

Պարտէզ, դու ես եղել սիրոյս կեցարան,
Անցան այն օրերը, երբ քեզ էի պաշտպան,
Էլ քո մէջ փորէ ինձի գերեզման.
Խլեցիր իմ վարդս, նայեցիր խեթիւ։

Դու տուիր այս սէրն ինձ, ո՞վ երկինք արդար,
Ոլով ես մաշեցայ, եղայ ապիկար.
Ողբաձան ձայնէս դողում են ձոր սար. . .
Հաճէ միացնելու, պաղատեմ ձայնիւ։

Տիրանը այս երգն էլ վերջացուց ու եղբօր հետ գնացին իրանց սեփհական այգին։ Երեկոյեան դէմ երկու եղբայրները կրկին երևացին փոքրիկ գերեզմանոցում։ Նրանք ջերմ սիրով համբուրեցին իրանց մօր և Արփենիկի գերեզմանները, ապա տխուր սրտով հեռացան դէպի գիւղը։ Այն պահուն տիւը տեղի տուեց թանձր խաւարին։ Բուերն էլ սկսեցին իրանց սովորական ձայներով ողբալ։

ՏԻՐԱՆԸ ԱՐՓԵՆԻԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԵՐԱՑ.

Ե.

Աշնանային առաւօտ էր։ Բարդող լերանց ծայրից արե-

գակը դուրս էր բերել ճառագայթները և վախ-վախոտ նայում էր ներքին եղեմապատ բլուրներին, ուր տեղանք եղեամը կատարեալ սաւանել էր և բիւրաւոր պսպղուն աչերով ծիծաղում էր արեգակի թոյլազօր ճառագայթների վերայ, որովհետև արդէն յաղթել էր իր քաջ ախոյեանին-արեգակին։ Տարաձնած թռչունները երամներ կազմած բարձրութեան մէջ, չվում էին դէպի տաք երկիրներ, երգակցելով աշնան հողմերին։ Իսկ մնացածներն էլ խումբ-խումբ թռչկոտում էին աշնանացան արտերում և դուրս մնացած հատիկները քջուջ էին անում։ Հայ գիւղացին իր աշխատակից եղները առաջ գցած՝ գնում էր կիսատ աշնանացանը լրացնելու։ Թէև շտապում էր նա, բայց զզզուն հողմերի ու թռչնոց ձայները նորոգեցին նրա յաւերը. եղերանքով լցուաւ նրա հոգին։ Նորա մէջ զարթեցան անձկալի յիշատակները, և նա իր սրտի թախծութիւնը փարատելու համար երգեց մի երգ, որը նոյն միջոցներում բոլոր գիւղացոց բերանում երգվում էր եռանդով, և ոն երգել էր տեղացի աշուղ Վարոսը իրանից՝ այսպէս։—

Գարնան ցանկալի, ինչո՞ւ այդպէս վաղ
Հեռացար. . . այդիքն էլ դարձան ապաւաղ.
Եւ մարդկանց սիրտն էլ թռչունների հետ
Ձեն երգում ուրախ, սգում, են աւաղ։

Քո հետ մեկնից զատուան երգող թռչուններ,
Դաշտերից զրկուան հարսներ, աղջկներ,
Այլ չէ լսվում նրանց անուշ տաղի ձայն . .
Ա՛խ, ո՞ւրեք, դուք ո՞ւրեք, անձկալի օրեր։

Անխոնջ աշխատում եմ անքուն օրն իրուն,
Թէ գարնան, թէ ամրան և թէ աշունքուան,
Էլի աղքատ . . չունիմ ապրուստ օրական,
Եւ իմ սէր Նազլուէս մնում եմ բաժան։

Բռնաւոր քրդերը չ'զայլին, ասէին—
Արի՛ գնա՝ արտը վարէ. . . «Բէկ»ին.
Կամ թէ խոտը կրէ այս ինչ «աղայ»ի,
Կամ սայլով քար կրէ «փաշի-սարայ»ին. . .

Զո՞ւրէ, դու չես տեսնիլ գէթ մի օր ազատ..
Խղճալի «ձօն» բա՛ւ է, երգես կղկղաթ.
Էլ մի՛ մաշել կեանքդ, եղել ես կենատ,
Երգելով հէք ազգիդ ցաւերն անհատ. . .

Գիւղացին երգելով գնաց իր գործին, հետն էլ սրբելով իր բողբքալի արտասուքները։ Նոյն միջոցին ամեն արարած աշնան խաղերով էին զբաղուած։ Տիրանն էլ Արփենիկի գերեզմանի մօտ նստած՝ գրում էր. . . մինչև որ կարճատև արեգակը ծածկուաւ Սուգաւէտ սարի յետև։ Նա գրիչը վար դրեց ծանր հառաչելով, մօտեցաւ երեք անգամ համբուրեց գերեզմանաքարը, երեսին խաչ հանելով և նըստաւ պատրաստի անկողնի մէջ՝ մրմնջալով—Ա՜խ, Աստուած այսօր էլ չ'կարողացայ վերջացնել, որ ազատուէի անտանելի կեանքից, դա՜ն բոպէներից—։ Երբոր մութը բոլորովին պատեց երկիրը, նա սովորականի պէս պարկեց անկողնում, ընկաւ զառանցանքների մէջ . . Այդպէս էր անում Տիրանը վերջին օրերում, չ'նայելով որ՝ թէ ընկերները և թէ բարեկամները համոզում, պարսաւում էին նորան, որ

այնպէս չանէ, բայց ի զո՞ւր. . . չէր լսում ոչ ոքի։ Մահը նրա համար շատ ցանկալի էր, ուստի այդպէս անխնամ մընալով՝ կամենում էր իր կեանքին վերջ տալ, անձնասպանութիւնը Աստուծոյ դէմ մեղանչած համարելով։ Վերջ ի վերջոյ գիւղացիք դադարել էին նրան համոզելուց, կարծելով թէ նա խելագարուել է։

ՏԻՐԱՆԻ ԲՈՂՈՔԸ ԱՐՓԵՆԻԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԵՐԱՑ.

Զ.

Արեգակը ծագել էր և խնձորենու ճիւղերու միջից կաթկաթել էր Տիրանի խնկագնեալ դէմքին, մինչդեռ նա խափուսիկ երաշներով տեսնում էր Արփենիկին, առաջուայ պէս խաղում, փայփայում, զուարճանում էին գեղազարդ պարտէզի մէջ. . . նոյն երջանիկ օրերը կրկնվում էին նրա համար. . . գուցէ շատ երկար մնար հրապուրիչ երաշնէրի մէջ, եթէ որ կաչաղակի կոցահարած խնձորը չ'ընկներ նրա երեսին. Որովհետև ցրտի սաստկութիւնը ազդել էր նրան, ուստի չ'կարողացաւ մէկից վեր կենալ, երկրորդ անգամ ձեռքերը նեցուկ տուեց և հազիւ կարողացաւ նըստել։ Նա կրկին համբուրեց գերեզմանաքարը, կրկին խաչ հանեց երեսը, աղօթեց Աստծուն և սկսեց գրել։ Մինչև իրիկուն հազիւհազ աւարտեց անհրաժեշտ գործը և տուժեալ մարմնով ընկաւ մահուան անկողին։—Ահա՛, կատարեցի վերջին նպատակս—խօսեց նա՝ հառաչմամբ սրտով—։ Աստուած իմ, տուիր ինձ այնքան կեանք, որ հասայ վերջին փափագիս։ Այժմ հանգիստ է սիրտս, այլ չի տանջիլ ինձ խիղճս. . . Հաճէ, Տէր իմ, ինձ ազատելու այս դա՜ռըն աշխարհից, որի պատկերն ինձ այժմ երևում է խա-

փուսիկ և ունայն. . . Ա՛ռ իմ հոգին, Տէր իմ, հանդստացուր Քո յաւերժական պարտէզներում, որ խոստացել ես սիրածներուդ, որոց Թուին է, գիտեմ հաւատի, և իմ Արփենիկը. կամեցի՛ր՝ որ վայելենք Քո տուած սուրբ սէրն երկնքում աղատ արդելքներից ու չար մարդկանցից. . . Ախ՜ խ՜ . . չար մարդիկ, բարբարոս մարդիկ. . . Նրա ձայնը խեղդուաւ յուզմունքից, մի քիչ լուռ մնաց և նորից խօսեց։

—Ես պէտք է բողոքեմ, պէտք է բողոքեմ երկնից բարձր Դատաւորի առեանում. . . Նա արդար է, Նա անաչառ է, այստեղի դատաւորաց պէս անկարեկից չէ. . . Նա ինձ նըման և Արփենիկի նման զոհերի բողոքը պէտք է լսէ մի օր, վճռէ պիտի և խաղաղութիւն ու հաշտութիւն դցէ ընդհանուր ազգերի մէջ. . . Ա՜խ. . . ժամանակ, ժամանակ, ցանկալի՜ ժամանակ, դեռ շատ պէտք է ուշանաս, դեռ շատ պէտք է մարդկանց խղճերը անզգայ թողնես. . . դեռ շատ պէտք է թողնես բարբարոս մարդկանց սուրը բանելու անմեղ զոհերի համար. . . Ո՜հ, և դու անգութ ես, ժամանակ. . . Թռիր տարիները, անցի՛ր դարեր, հասի՛ր օգնութեան անմեղ զոհերին. . .

Կրկին յուզմունքն ու յորդահոս արտասուքները խեղդեցին նրա ձայնը և մի քանի րոպէ հանգստանալուց յետոյ, նորից խօսեց։

—Ո՜հ, Արփենիկ ջան, երկա՜ր, շատ երկար ապրեցի, քեզանից յետոյ ամբողջ մի տարի. . . Դու՛, Արփենիկ ջան, իմ պատճառած ցաւերով չարչարուա՜ր, մաշուա՜ր և սուրը սիրոյ համար անարատ հոգը զրկեցիր, չ՝կամենալով սէրդ այլոց բաժին տալ։ Սրբութեամբ կատարեցիր այն ուխտը, որն այս խնձորենու տակ «վկայ երկինք» ասելով հաստատեցինք, որ մինչև դերեզման մտնելներս անխախտ պահէ-

նք. . . դու այդ ամենը ճշտութեամբ կատարեցէն վերջը, հանդիստ տուիր խոնջեալ ոսկորներիդ նոյն իսկ խնձորենու տակ և քո անմեղ հոգին արժանացուցիր անանց կեանքին. . . Այժմ, Արփենիկ ջան, մաղթէ ինձ համար քո արդար բերանով, որ ես էլ արժանի լինիմ քո բաժակէն ըմպելու. . . մօտեցել է միացութեան ժամը. . .

Նա լռեց, բայց շրթունքները շարժվում էին։ Աղօթքներ էր մրմնջում նա։

ՏԻՐԱՆԻ ՄԱՀԸ.

Է.

Պայծառ առաւօտ էր։ Արեգակը իր նուաստ փայլը գըցել էր Տիրանի դալկացած դէմքին. սակայն նա չէր զարթնում։ Նորան զգալի չէին ոչ կաչաղակների ղողդունները, որոնք խնձորենու վերայ խմբու սծ՝ աղմկում էին պարտիզի լռութիւնը, ոչ սրինգի եղերուն ձայնը, որ հովիւը սուլելով՝ ձայնակցում էր առաւօտեան սիգաշունչ հողմերին մօտակայ դաշտում, և ոչ ճանապարհորդի զել ձայնը, որն մի բանաստեղծական երգ երգելով՝ անցնում էր մօտիկ ճանապարհից։—

Ուր արդ զբաւ լոյս, անդորրութիւն,
Լռել են ձայները ուրախ երգերու. . .
Թուղպը պատել է, ա՜խ, այն երկրին. . .
Իսկ ես հեծեծում եմ պանտա՜խա, երերուն. . .

Անցորդը երգելով անցաւ, և նրա ձայնը հեռութեան մէջ կորաւ. բայց Տիրանը կրկին չ՝զարթնեց։ Նրա տոչ-

լաց աչերը յաւիտեան փակուել էին, ազատուելով անողոք բաղդի ուժգին հարուածներից։

Մ Ե Ռ Ե Լ Ո Ց.

Ք.

Այն օրից անցել էր ամբողջ վեց ամիս։ Տիրանի բլրակը ծածկուել էր ծաղկախառն կանաչներով, և փոքրիկ գերեզմանոցը կատարեալ բուրաստան էր դառել։ Խնձորենին երկու նորատունկ արտասուող ուռիների հետ փթթել էին, որոնք մեղմասուն հողմերից օրօրուելով՝ Տիրանի ու Արփենիկի շերմաց վերայ, ողբեր էին յօրինում, և կարծես ամեն անցնողին ուզում էին պատմել նրանց եղկելի մահը և մարդկանց փառքերի վաղ կործանումը։ Այն սրտաշարժ ու գեղեցիկ տեսարանները, խոնջեալ անցորդներին հրապուրանք հանգստացնում էին իրանց զովասուն ստուերներում, կանաչների վերայ։ Այն օրը Յարութեան երկրորդ օրն էր (մեռելոցի)։ Մի խումբ կանայք ու այր մարդիկ յամբ ու տխուր քայլերով գիմում էին յիշեալ գերեզմանոցը։ Երբ որ տեղ հասան, կանայք սկսեցին լալ, կոծել իրանց սիրելիների գերեզմանաց վերայ։ Իսկ քահանան (Տիրանի վարժապետը) խնկարկելով հանգուցեալների յեշատակները օրհնեց, և ապա հարուստ, աղքատ ու ճանապարհորդ նստան ճոխ պատրաստած սեղանների շուրջը։ Երասխաձորին յատուկ կարմիր գինին խմում էին լեռլի և սրտախանդ ողորմի տալիս հանգուցեալներին։ Ամենն էլ կերան, խմեցին ու հեռացան։ Գերեզմանոցում մնացին միայն Արփենիկի հայրն ու քահանան։ Վիրջինը մոտենալով Տիրանի բլրակին՝ ասաց։

—Օրհնած, հարկաւոր է շուտով Տիրանի և Արփենիկի գե-

րեզմանները միացնել, այդպէս էր գրել Տիրանը իր տետրակում։ տեսնում ես, կորելու վերայ է Տիրանի գերեզմանը. չէ՞ որ այդ պարտականութիւնը քեզ յանձնեցինք։

—Այո՛, Տէր հայր, ինձ յանձնեցիք, ես էլ շուտով շինել կ'տամ։

—Բայց մի՛ յետացնել, Գրիգոր. . .

—Չէ՛, Տէր հայր, չեմ յետացնել, ուզում ես հէնց վաղը քաղաքից վարպետ հրաւիրեմ։

—Այո՛, որդիս, պէտք է շտապել, միայն լաւ վարպետ հրաւիրէ, որ կարողանայ գեղեցիկ շինել և տապանագիրը նորից փորագրել. .

—Շատ լաւ — համաձայնեց Արփենիկի հայրը։

Քահանան նորից «Հոգւոց» կարդաց գերեզմանոցում ու խօսակցելով հեռացան դէպի գիւղը։

Վ Ե Ր Ջ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԵՐԳԱՀԻԱՍՈՒԹԻՒՆ

Ա.

ՍԻՐՏՍ.

Մի օր է՛տեսայ անփոփոխ սիրտս,
Խաղաղական, պարզ, կամ ուրախ, սիրտս,
Կամ բարեխառն, կամ արթուն, սիրտս,
Զգայական, կամ անզգայ, սիրտս։

Երբեմն խրախճ դու օր մայիսեան,
Ծաղկում է վարդդ, սիրաբուն սոխակ,
Երբեմն էլ որպէս տուժ ձմեռ դաժան,
Մրուր ես պատում, սգում ողբանակ։

Սաւառնում ես մերթ, երկինք բարձրանում,
Տարերք աշխարհից հաշիւ պահանջում։
Երբեմն խսպառ նկուած, կորացած,
Զիջանում ես և լինում խորտակուած։

Բամիկներից երբեմն վատթար,
Ձես հասկանում մարդուս կեանքի նպատակ,
Երբեմն էլ որպէս բանաստեղծ, հանճար,
Կամիս քննել բնութիւնն համակ։

Որոտում ես մերթ և ամպում սաստիկ,
Տեղում ես անձրև, տարափ, փոթորիկ,
Երբեմն էլ արևը պայծառ ու մեղմիկ
Ծագում է անկիւններդ զարուն գեղեցիկ։

Վարանում ես մերթ դարձեան գետի պէս
Եւ տատանվում ես կոծուած ծովի պէս,
Եւ մերթ զիջանում, լինում ապհագագ.
Խաղաղ ընթանում ես որպէս հեզ առուակ։

Իսպառ յիմարած՝ նման քոռ բուի,
Քաշվում ես բաղերը, երգում օրն իրուն
«Փառքերն իզո՞ւր է այս դառն աշխարհի».
Զը հասկացայ միտքդ սիրարը և բաղփուն։

Բոպէական ես ծիծաղում, խնդում,
Տրոփում, խայտում, ճախրում, ծածանում։
Ցանկարծ ընկնում ես ցաւոց ծովի մէջ,
Անձայն անմեկին արտասունք ես թափում։

Տարափին սիրոյ մերթ հեծում ես սոխակ,
Վառ սէր ես երգում, սիրասուն վարդիդ.
Եւ մոռանալով աշխարհն համակ,
Հանդիստ ես առնում սիրոյ սաղարթիդ...

Ներող եղիր, սիրտ իմ նկուն և թշուառ,
Որ խոցուած վերքերիդ հարում եմ ուժգին։
Ձեմ կարող խանգարել, ընթացքդ վառ վառ,
Միայն դու հետևիր բաղդի անիւին։

Էլի դու երբեմն երգէ սէրն ազգիս,

Կեանքիս նպատակն է և իղձս անհուն.
Որքան որ կուզես սգաս ու տրտմիս,
Մի վայրկեան փայլելով՝ կ'լինիմ գոհուն։

1889 թ. Փետրվար ամսոյ 23-ին

Կաղզուռն. (սենեակիս մէջ մենակ և տխուր)

Բ.

ԱՅՍ ԵՐԳԸ ՅՕՐԻՆԵՅԻ ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՆԱԶԱՐԷԹ ԵՂԲՕՐՍ ՍԻՐՈՒՆ.

Որպէս խաւարային գիշեր մթութեան,
Իմ սրտիս իղձերը անյայտին մնաց. . .

Մարդիկ ինձ կարծեցին մի անհատ խիզախ,
Անձնական գործերով զբաղուող միայն.
Որպէս մութ հանելուկ չմերձաւ կարախ,
Իմ անձս նոցա, գոնէ մի վայրկեան։

Հաղիւ հաղ իմ սրտի տապը տենչալի,
Կարացի քառորդը գրչով լոյս հանել,
Մնացածները մագեղ սարսելի
Դարձան, և իմ հոգւոյս սկսան հարել։

Ահ, այնուհետև որպէս առուկ թոյն
Մէկից վարակեց, շինեց ինձ կենատ.
Ցոյց տուեց-ահա. . . տաղտկալի մի բոյն,
Ուր ակամայ ընկայ ես լոկ մի արդատ. . .

Ոչ ոք չհասկացաւ ցաւիս բնաբան.

Ասին-մահու վիշտն է կաշկանդել նորան.
Ցաւոց ուղիսը սրտէս, ախ, գոչեց մահուան,
Հեղեղեց, չորացուց կեանքիս բուրաստան։

Անթիւ նպատակներ, իղձեր իմ սրտին,
Ափսոս, անկատար, անյայտ մնացին. . .
Անյագ հրապուրմամբ և յափշտակուած. . .
Տապահար ծաղկի պէս հակեցայ հողին։

1891 թ. Ապրել ամսոյ 3-ին Տարաքաղաք.

Կաղզուռն (սենեակումս մենակ նստած սրտաբեկ)։

Գ.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ.

Ո՜հ, դուք անձկալի օրեր մանկութեան,
Որքան ցանկալի և քաղցրական.
Բայց ինչո՞ւ արդեօք կարճ ժամանակով
Հրապուրեցիք քաղցր երազներով։

Կարօտ եմ, կարօտ, մանկական ժամեր,
Ինչո՞ւ հեռացաք, երբ ես փափագած,
Ձերմ սրտիս վերայ առած քո խաղեր,
Խաղում էի անհոգ, աշխարհս մոռացած։

Արդ՝ զրկուած քո քաղցրութիւնից,
Տանջվում եմ զգայնութեան բեռի տակ.
Մերթ-մերթ հնչում էք դուք իմ ականջիս,
Որպէս երկնային զմայլիչ նուագ։

Հնչում էք, անցնում հեռու ներկայից,
Որպէս օդային թեթեւակ ամպեր.
Մտքով թռչում եմ, առնեմ ձեզանից
Գէթ մի օր, մի ժամ... ա՜խ, ունայն յոյսեր ..

Բայց թէ դուք կրկին հեռու նոյն դունակ,
Հալածուած բաղդի կոծեալ հողմերից,
Թռչում էք, կորչում ուրոյն, անդունակ,
Թողնում էք իմ դէմ լոկ ձեր յիշատակ:

Ձեզնից յետ մերձաւ մի անտես էակ,
Ուշիմ քայլերով, որպէս մի դուսան. . .
Միտքս բաժանուաւ քո խաղերէն և
Սկսաւ տատանուիլ ովկիանի նման:

. . . Ցաւերը որպէս թունդ բաղխում,
Հարել սկսան սրտիս լարերուն,
Զգալի դառան ինչին անցքերը. . .
Երգել սովորայ սոսկ նորա սիրուն:

Ա՜խ, դուք մանկութեան երջանիկ ժամեր.
Ինչո՞ւ շուտ գատուաք կեանքիս ասպարէն.
Թափեցիք սրտիս անհամար ցաւեր,
Կորա՞ք յաւետեան անուշ հնչելէն:

Ցակաւ հնչում էք, հեռու ներկայից,
Որպէս օդային թեթեւակ ամպեր.
Մտքով թռչում եմ, առնեմ ձեզանից-
Գէթ մի օր, մի ժամ. . . ա՜խ, ունայն յոյսեր. . .

1889 թ. 10-ին Հոկտեմբերի Տարաքաղդ.

Կաղզուան. (Երասխի ափին նստած)

Դ.

ԱՆՁՆԱՍՊԱՆ.

Լուռ էր բնութիւն, և ես լուռ էի,
Համախորհրդեալ հետ ուշիմ լուսնի. . .
Խորին ձորի մէջ միայն գետակը
Հոսում, կրծոտում էր նա իր յատակը:

—Ա՜խ, միթէ դուն էլ յորդահոս գետակ,
Ունիս չարակամ որևէ էակ.
Եւ նրա համար այդպէս վարարեալ
Վազում ես առաջ, առաջ դժնդակ:

Բայց գիտեմ, որ քո վիշտ, վերքերդ,
Ձեն, ո՜հ, չարանենգ, անգութ մարդկանցից,
Ուրեմն՝ գետակ, քո այդ վերքերդ,
Ձեն այնքան խորունկ, քանց իմ վերքերից:

Ո՞վ դու վշտակից գետակ, թէ լենէիր
Իմ ցաւերիս չափ մարդկանցից կրած,
Գիտեմ հաւաստի-կ'ընէիր ցամաքած:

Ա՜խ, դուք չար մարդիկ, ինչե՞ր անում էք
Անզգայ սրտով, չարախօս լեզուով. .
Քանիսնե՞ր զոհեցիք, դեռ քանի՞ զոհէք. . .
Գէթ մի վայրկեան խորհէք. . մարդկային խղճով:

Եւ ահա՜, մէկն էլ զերթ նոցա թվում,
Զոհում էք, անգութներ, իզուր, անխնայ. . .
Բայց թէ դուք կրկին ուրախ, անզգայ

Զեր բիրդ կամքերով առաջ էք մղում. .

Մինչ դեռ խօսում էի յուսահատ, յուզուած,
Ամպերի տակից դուրս եկաւ լուսին,
Բացեց իր քողը, նայեց աշխարհին,
Կարծես թէ ժպտաց նա այն վայրկեանին. . .

Գլուխիչ աշխարհի գիւթիչ պատկերներ...
Որ նա նկարեց իմ դէմ մի առ մի. . .
Օ՜հ, ես զգացի կեանքի քաղցրութիւն. . .

1889 թ. Սեպ. ամսոյ 25-ին գիշ. ժ. 10-ին: Տարաբաղդ
Կաղզուան (լուսնեակ գիշերին նստած ձորափին)

Ե.

Հ Ո Վ Ի Տ

Ծագեց արեգակ վաղորդեան ժամին. . .
Եւ ողջոյն տուեց ծաղկապերճ հովտին,
(Այնտեղ լի սիրով և ոգևորուած՝
Զմայլած դիտում էի այն տեսարանին:)

Ծիածան կազմեց ցողապատ հովտում,
Ստուերը տարածեց ժայռերի տակում,
Կարծես՝ սեփհական իր խօսնակներով—
«Ե՛կ, հանդստացիր, անուշ հովերում»:

Ա՛հա, մօտեցաւ այն զով ստուերին,
Մարաց հովիւը, սրինգը ձեռին.
Սուլեց տխրագին, փարախեց հօտը.

Գլուխը ծաղկանց. . . ննջեց հովերին:

«Ես քեզ չեմ կանչում, Մարաց բիրդ հովիւ,
Ինձ էլ սեփհական որդիք կան անթիւ,
Ինձ մի՛ վրդովիլ դու անմիտ թութակ,
Թող լռիկ-մնջիկ ողբամ շարունակ. .

«Դեռ շատ չէ անցել երբ այս վայրերում,
Օրհներգ էին կարդում. . . . . .
Եւ այդ տխրալի նուագի փոխնակ
Երգում էր բանակ, խրոխտ յաղթանակ. . .»

Ա՛հա, հօրիզոն մտաւ արեգակ,
Շնչեց մեղմ հովը, շարժեց ծաղկունակ,
Թարմացան ծաղկունք, ժպտաց հովիտը,
Քաշուաւ վերայից գարշելի քուրդը. . .

Եւ խպտաւ տիրեց խորին լռութիւն,
Սոսկ լսվում կողկող հաւոց գիշերին,
Նայում եմ երկինք, սահում է լուսին,
Ա՜խ, ց՛երբ նայես դժգոյն, էն, բաղդին.

1888 թ. Յունիս ամսոյ 23-ին Տարաբաղդ.
(Մենակ նստած հովտի մէջ)

Զ.

Պ Ա Ն Դ Ո Ի Խ Տ.

Սիրուն Հայրենիք, սէր, յոյս իմ կենաց,
Բոպէ անգամ դու չես սրտէս բաց.

Ես քո կարօտով մտածում, մաշվում,
Թռչում եմ քեզի լքեալ, կարօտած։

Ի՞նչպէս չեմ յիշում քո գեղ պարտէզներ,
Այգւոյդ մէջ ճախրելով երգէին թռչուններ.
Ծաղկազարդ դաշտեր, հովիտներ, ձորեր,
Զրաբուղխ լեռներ, ճղուպ վտակներ. . .

Այն քո դրախտի գեղ պատկերներդ
Անցնում են մտքէս, անցնում են անվերջ. . .
Եւ ի՞նչ վառ սիրով ընկնում են գիրկդ
Հրապուրելի ցնորքների մէջ. . .

Սէր, երանութիւն միմեանց խառնուած,
Հլաբուղխ աչերէս արտասունք եմ թափում.
Համբուրներ անյագ, սիրոյդ զմայլած՝
Մայրական գրկէդ տալիս եմ, առնում։

Տեսնում եմ ահա, քո մարած լոյսը
Պայծառ քան այլոց վառ լապտերներից.
Այգւոյդ հաւերի լռած տաղերը
Լսում եմ համեղ քան զայն. . . նուագից։

Ցիշում եմ կրկին—այգի եւ պարտէզ
Ա՛խ, սիրուն վայրեր, ինչ կ'մոռնամ ձեզ.
Դուք էիք իմ մանուկ կեանքիս ասպարէզ. . .
Ո՞նց կ'մոռանամ. . . այն չէ՞ եղեմեան. . .

Երջանի՛կ օրեր, նորից նորոգուան. . .
Օ՜հ, երանութիւն, կրկին մի համբոյր. . .

Վա՜յ, եղո՞ւկ քեզ, պանդուխտ... ցնորք էր իղուր։

1890 թ. 7-ն Փետրուարի. Տարաբաղդ.

'ի մայրաքաղաքն Տֆխիս.

Է.

ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ՊԱՆԴՈՒԽՏԸ.

Ա՛խ, իմ Հայրենիք, մինչ երբ չ'լսես
Իմ հեծեծանքը օտար երկրում.
Իմ հառաչանքները չե՞ն հասնում քեզի,
Որ թափվում են սրտէս այս խոնաւ բանտում։

Յուսահատ, տխո՛ւր նստած «ընդանում»
Ինչպէս մի թռչուն, բռնած վանդակում.
Աղեխարշ, խոնջեա՛լ, ննջում, տատանվում,
Մի քանի լոպէ գիրկդ եմ ընկնում. . .

Այդ ցնորական, ուրախ ժամերուն,
Հանդչում եմ մայրական սրտիդ փափկասուն.
Մեկնում եմ ձեռքերս քո հիւս մազերուն,
Ոչ սրբեմ արտասունք աչքերիս անքուն։

Բայց աւա՜ղ, սփոփիչ գիսակներուդ տեղ
Ձեռքս են անցնում իմ կոշտ շղթաներ. . .
Տեսնում եմ պահակին դաժան ու տգեղ,
Սարսափ է ազդում իմ սրտին երեր։

Ա՜հա, անցնում է հինգերորդ տարին,
Որ ես զատուել եմ իմ Հայրենիքէն. . .

Գալիս է գարուն. . . ա՛խ, ես անտեղեակ,
Ինձ չէ ողջունում պայծառ արեգակ։

Ցանկալի՜ գարուն, գիտեմ, ներկայ ես,
Բայց ինչո՞ւ արդեօք ինձի զրկել ես. . .
Քո անուշ զեփիւռը նեղ լուսամուտէս
Գոնէ մի անգամ շնչէ՛ երեսիս. . .

Որ ես քեզ պատմեմ սրտիս ցաւերը
Գնաս Հայաստան, այն սուրբ երկիրը,
Ինչ որ ասել եմ պատմես մի առ մի—. . .
—Ձեր եղբայրը ողջ է, դեռ կ'տանջուի.
Ո՞վ Հայոց քաջեր և դո՛ւ. . . Նազելի. . .

Կրկին յետ դարձիր և ինձ հանդիպիր,
Բե՛ր այն սուրբ օդը երեսիս հարիր,
Շնչեմ մի անգամ զեփիւռն հայրենեաց,
Իսկոյն կ'աւանդեմ հոգիս խոր մաշուած։

1887 թ. 12-ին Սեպտեմբերի Տարաքաղաք.

Կաղղուն

Վ Ե Ր Ջ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0686189